ԱԲԽԱԶԻԱՅԻ Ա.Վ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂՈՄԱՏ

22675

ԱԲԽԱԶԻԱՅԻ Ա. Ս. Խ. Հ.

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

ԾՐԱԳՐՆԵՐ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
Академия Наук
СССР

1. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ
2. ՄԱՏԵՄԱՏԻԿԱ
3. ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա. պրակ

375
Ա-14

ԱԲՊԵՏՀՐԱՏ

1933 Թ. ՍՈՒԽՈՒՄ.

Ա998

ԱԲԽԱԶԻԱՅԻ Ա.Վ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

375
Ա-14

ԱԲԽԱԶԻԱՅԻ Ա. Ս. Խ. Հ.

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

ԾՐԱԳՐՆԵՐ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

■ ■ ■ ■

2002

ԱԲԳԻԶԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1933 թ. ՍՈՒԽՈՒՄ.

2010

Наркомпрос АССР Абхазии.

Программа начальной школы АССР Абхазии

Перевод с русского:
ХАЧАТУРЯН С. КАЛАНТАРЯН А.

Издание Абгиза

49835-ահ

Ներկա ծրագիրը կազմված է Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. Լուսժողկոմատի ծրագրների հիման վրա և հարմարեցրած է տեղական պայմաններին։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Ադիգ ССР
им. А. Мачинского
Р. ՍԵՒԵՐՅԱՆԻ ԱՆՎ.
36325-66

Сухум, Типо-литография. Абгиз'а. Зак. № 3336. Тираж 275. Абгл. 50-Б.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համկոմկուսի Կենտկոմի վորոշումը տարրական և միջնակարգ դպրոցի մասին վորոշակի ցուցմունքներ է տալիս, թե ինչպես պիտի իրագործել ծրագիրները։

Համկոմկուսի Կենտկոմի նույն վորոշումի — դպրոցի հիմնական խնդիրները և աշխատանքի մեթոդները — բաժնում տրված են պարզ սկզբունքային դրույթներ դպրոցում մանկավարժական պրոցեսի կազմակերպման մասին։

Դպրոցները աշխատանքները ըստ կոմպլեքսային սիստեմի վրա կատարած ծրագրներին, աշխատանքներն՝ ըստ գործնականում չստուգված մեթոդների (նախագծային մեթոդ), անցյալում մեզ հասցրել են այն հիմնական թերություններին, վորոնց մասին մատնանշված է Համկոմկուսի Կենտբյուռոյական Կոմիտեի 1931 թ/ի 5/IX-ի և 1932 թ/ի 25/VIII-ի վորոշումների մեջ։

Կուսակցության Կենտբյուռոյական Կոմիտեն մատնանշում է.— „վոր ներկա մոմենտում դպրոցի արմատական թերությունը կայանում է նրանում, վոր ուսուցումը դպրոցում բավականաչափ ծավալով հանրակրթական գիտելիքներ չի տալիս և անբավարար կերպով է լուծում տեխնիկումների և բարձրագույն դպրոցի համար միանգամայն պրագնա մարդկանց նախապատրաստության խնդիրը, վորոնք սիրաշահել կարողանան դիտության հիմունքներին (ֆիզիկա, քիմիա, մատեմատիկա, մայրենի լեզու, աշխարհագրություն և այլն)“։

Վերը մատնանշած թերությունները վերացնելու նպատակով Համկոմկուսի Կենտկոմը հետագայում առաջարկում է մշակման յենթարկել ծրագրերն այն հաշվով, վորպեսզի, „նրանց մեջ ապահովված լինի սիստեմի վերածված գիտելիքների ճշգրիտ սահմանագծված շրջան (մայրենի լեզու, մատեմատիկա, ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն, պատմություն“)։

Կենտկոմի տվյալ վորոշման իրագործումը պարտավորեցնում է սկզբունքորեն նոր ձևով կատարելու ծրագիրը։

Ընդհանուր կոմպլեքսային թեմաների սկզբունքը, վորը դրված էր նախկին ծրագրերի հիմքում, չի բավարարում

գիտելիքների սիստեմատիկության պահանջներին։ Կոմպլեքսային սիստեմը, որ մեքենայորեն կապում էր իրար հետ բոլոր առարկաները, նրանց՝ հանրօգուտ աշխատանքին, աշակերտների հասարակա-քաղաքական գործունեությանն ընթարկելու հիմունքների վրա, որ ծրագրերի առանցքը համարում էր ֆաբրիկայի, գործարանի, սովխոզի, կոլխոզի, ՄՏԿ-ի „պրոմֆինպլանը լրացնելու համար պայքարը“, առնում է դեպի անհատականություն, դեպի մանրացումն, դեպի պատահականություն ծրագրների կառուցվածքի մեջ։

Ներկա ծրագրերը կառուցված է առարկայական սկզբունքով։ Ուսուցման յուրաքանչյուր տարվա համար, յուրաքանչյուր առարկայից, դիսցիպլինայից որվում է գիտելիքների վորոշ սահմանագծված շրջան։

Ծրագրային նյութի մշակումը պիտի տարվի պոլիտեխնիզմի հիմունքների վրա համաձայն Համկոմկուսի Կենտկոմի 31 թ. 5 XI-ի 32թ. 25 VIII-ի վորոշումների։

Հանրակրթական գիտելիքների անհատականությունը, անհատատականությունը, պակասությունը աշակերտների մեջ առաջ բերին իրենց հերթին դպրոցի պոլիտեխնիզացիայի ձևական կարգավորումը, և այսուհետից հետևանք չեղավ մանուկների անպատրաստականությունը՝ վորպես „բազմակողմանի զարգացում ունեցող սոցիալիզմ կառուցողների, վորոնք տեսականը զուգորդում են գործնականի հետ և տիրապետում են տեխնիկային“։

Այսուհետից տրամաբանորեն բղխում է տեսականը գործնականի հետ կապակցելու պահանջը։ Մշակվելիք նյութը կապակցվում է արտադրական և հանրօգուտ աշխատանքների հետ։

Արտադրողական և հանրօգուտ աշխատանքները անցկացնելու ժամանակ հարկավոր է խոսիլ կեղծով առաջնորդվել սկզբունքային սահմանավորումներով, „վորպեսզի աշակերտների ամբողջ հասարակա-արտադրողական աշխատանքը յենթարկված լինի դպրոցի ուսումնական և դաստիարակչական նպատակներին“։

Բազմակողմանի զարգացած սոցիալիզմ կառուցողը, վորը տեսականը կապակցում է գործնականի հետ և տիրապետում է տեխնիկային, պիտի ունենա մարքս—Լենինյան աշխարհայացք, սովորի ըմբռնել հասարակական, բնական և արտադրական պրոցեսները ու յերևույթները նրանց փոխադարձ կապի մեջ։

Այդ պատճառով էլ նոր ծրագրերով աշխատելու ժամանակ պիտի սահմանել—նախ՝ բնական կապ առարկաների միջև, և յերկրորդ՝ բնական կապ ստեղծել առարկայի ծրագրի բաժինների և պոլիտեխնիկական ու հանրօգուտ աշխատանքների միջև, ըստ ժամանակաշրջանների։

Դեն ձգելով „ձախ թեքումների“ վոգով կոմպլեքսը, վորը ամբողջ ծրագիրը տալիս է ընդհանուր կոմպլեքսային թեմաների ձևով, վորոնք ըստ էության հանդիսանում են „մեծ պրոեկտների“ բազմաձևությունը, ուսուցչությունը իր գործնականում, ըստ նոր ծրագրերի, պիտի տանի „սիստեմատիկ և անշեղ պայքար զլխավոր վտանգի դեմ պոլիտեխնիկական դպրոցի կառուցման ուղիի վրա, այ—ոսլորտունեհատական խեղաթյուրումների դեմ, վորոնք դպրոցը տանում են դեպի հրաժարումն պոլիտեխնիզացիայից և հին քանավոր դպրոցի պահպանման փորձերը, դեպի անջատումը տեսական ուսուցման և գործնականի միջև“։ (Համկոմկուսի Կենտկոմի վորոշումից)։

Աշխատանքը ըստ նոր ծրագրների պահանջում է կիրառելու կազմակերպչական միջոցառումներ՝ մանկավարժական պրոցեսում և կիրառելու մի շարք մեթոդական պայմաններ, վորոնք են.—

1։ Ճշգրիտ ուսումնական պլան և դասացուցակ յուրաքանչյուր առարկայից վորոշ ժամանակաշրջանի համար, ուր նշանակված են լինում գիտելիքների և ունակությունների վորոշ ծավալը, աշխատանքի մեթոդները և հաշվառման ձևերը։

2. Ուսուցչի կողմից աշխատանքային որացուցային պլանները կազմելու հմտություն յուրաքանչյուր վեցօրյակի համար (դյուղական դպրոցում՝ յոթօրյակի), նաև ուսուցչի որատետրը կազմելը։

3. Աշակերտների հետ որվա ընթացքում անցած ամբողջ աշխատանքի ճշգրիտ հաշվառումն ուսուցչի որատետրում։

4. Ուսուցչի մանրազնին նախապատրաստումը դասի համար։

5. Դպրոցական աշխատանքի մեթոդների բարելավումը։

6. Մանկական ինքնավարության ճիշտ կազմակերպումը, համապատասխան Ման. Ինքնավարության նոր կանոնադրության։

7։ Աշակերտների աշխատանքի հաշվառման մանրազնին կարգավորումը, վորն արտացոլելու է յուրաքանչյուր աշակերտի անհատական աշխատանքի սիստեմատիկ հաշվառու-

ժը և ամբողջ խմբի անհատական աշխատանքի պարբերական հաշվառումը։

8. Հասարակականության ուշադրության ներգրավումը ուսման վորակի և դիտակցական կարգապահության բարձրացման հարցերի շուրջը (բանվորական և կոլխոզային մասսայի ներկայացուցիչների դպրոցական խորհրդում, ժողովում, արտադրական խորհրդակցություններում, հանձնաժողովներում և հասարակական ժողովներում սոցպայմանագրերի կատարման առաջադիմների ամփոփ, ցուցահանդեսներին, մանկական ինքնավարության մարմիններում և այլն)։

9. Գիտակցական կարգապահության ամրապնդումը։

Նոր ծրագրերով աշխատանքը և նրա կիրառումն ուսուցչի կողմից պիտի կատակեցնել Համիմակուսի կենսակոմի վորոշման հետ, ուր խոսվում է ուսուցչի դերի բարձրացման մասին դպրոցական աշխատանքի վորակի համար տարվող պայքարի մեջ, և ընդգծելով „դպրոցի վերաճող նշանակությունն ու դերը սոցիալիստական շինարարության մեջ“։

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Գյուղական տարրական դպրոցների համար յոթօրյակի հաշվով

Առարկաները	այբբ. խումբ	I խումբ	II խումբ	III խումբ	IV խումբ
Մայրենի լեզու . .	6	6	6	5	5
Ռուսաց լեզու . . .	—	2	3	4	4
Մաթեմատիկա . .	6	6	5	5	6
Հասարակագիտություն	2	2	2	3	3
Բնագիտություն .	2	2	2	2	3
Աշխարհագրություն	—	—	2	2	3
Աշխատանք . . .	3	3	3	3	3
Ֆիզկուլտուրա . .	2	1	1	1	1
Նկարչություն . .	1	1	1	1	1
Ձերգ	1	1	1	1	1
Ընդամենը . .	23	24	26	27	30

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Քաղաքի 1-ին աստիճանի դպրոցների համար վեցօրյակի հաշվով

Առարկաները	այբբ. խումբ	I խումբ	II խումբ	III խումբ	IV խումբ
Մայրենի լեզու . .	5	5	5	4	4
Մաթեմատիկա . .	5	5	4	4	5
Ռուսաց լեզու . .	—	2	3	4	4
Բնագիտության աշխարհագրության ելևմտանեերով . .	2	2	—	—	—
Հասարակագիտության պատմության ելևմտանեերով . .	2	2	2	2	2
Աշխարհագրություն	—	—	1	2	2
Բնագիտություն .	—	—	2	2	2
Աշխատանք . . .	2	2	2	2	2
Ֆիզկուլտուրա . .	2	1	1	1	1
Նկարչության և գծագրության . .	1	1	1	1	1
Ձերգեցողության .	1	1	1	1	1
Ընդամենը .	20	21	22	23	24

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Ներածություն

Լեզվի դասերը պիտի կապակցվեն խմբակի ընդհանուր աշխատանքի և ընդհանուր դպրոցական աշխատանքի հետ։ Լեզվի պարապմունքները պիտի ծառայեն վորպես միջոց մանուկների կոմունիստական դաստիարակության։ Լեզուն, վոր ծառայում է վորպես միջոց մարդկանց սոցիալական հանրացման, միևնույն ժամանակ արտացոլում է այն դասակարգի իդեոլոգիան, վորը իրեն ցուցաղրում է լեզվական ստեղծագործության մեջ։

Պրոլետարիատը, վորը իրագործից հաղթական հեղափոխությանը մեր յերկրի քաղաքական և տնտեսական կյանքի մեջ, առաջ բերեց վոչ պակաս խորունկ հեղափոխություն և լեզվի ընդդավառում։ Մի շարք բառեր, վորոնք արտացոլում էին հին, մինչհեղափոխական հասկացողությունները, դուրս նետվեցին և անհետացան գործածությունից մի միաժամանակ կալվածատերերի և կապիտալիստների տիրապետության անկման հետ։ Մյուս կողմից, հեղափոխությանը ստեղծել է մի շարք նոր բառեր, վորոնք լեզվի մեջ ձեռք են բերել քաղաքացիական իրավունք բանվորների և գյուղացիների տիրապետության ամրապնդման հետ կապակցված։ Այդ լեզվական հեղափոխական ստեղծագործությունը քանի գնում ընդարձակվում է։

Մեծ սոցիալիստական կառույցի շրջանը, վորի մասնակիցը պիտի լինի և դպրոցը, լեզվի ասպարեզում բնորոշվում է նոր բառերի և արտահայտությունների ստեղծագործությամբ, վորոնք արտահայտում են մասսայի ենտուզիազմը և կամքը դեպի հաղթանակ (հարվածային, հարվածայնություն, սոցմրցակցություն, հասարակական բուքսիր և այլն)։ Հեղափոխության լեզուն, հնգամյակի բառարանը պիտի դառնան իրենց տեղը նաև դպրոցական աշխատանքում լեզվի դասին։ Գործնական լեզուն պիտի կապակցված լինի աշակերտների արտադրողական և հանրօգուտ աշխատանքների հետ, վորոնք յենթարկված են լինելու դպրոցի ուսումնական—դաստիարակչական խնդիրներին։

Անհրաժեշտ է մոտենալ՝ դեռ կրասեր խմբակներում, աշակերտների ուժերին և պիտելիքներին համապատասխան, հեղափոխության բառարան, և մանավորապես հնգամյակի բառարանը՝ աշակերտների խոսակցական և գրավոր լեզվի գործածության մեջ։ Այդ հնարավոր է և անհրաժեշտ է անել լեզվի դասի աշխատանքների հենց առաջին որերից սկսած։ Աշխատելով բառարանի վրա՝ դպրոցի կյանքից, դասատուն իր՝ աշակերտների հետ ունեցած, պարապմունքների մեջ կարտահայտի և այն նոր յերևույթները, վորոնք դիտվում են պոլիտեխնիկացվող խորհրդային դպրոցում, վորը իր աշխատանքը կապակցում է ֆաբրիկայի, գործարանի, կոլխոզի, սովխոզի աշխատանքների հետ։

Աշխատելով ընտանիքի կյանքը արտացոլող բառարանի վրա, դասատուն կմոտենա այդ նույն հարցերին մի ուրիշ կողմից, քանի վոր ընտանիքը հարաբերություն ունի այդ նույն ֆաբրիկայի, գործարանի, կոլխոզի, սովխոզի հետ և կապված է աշխատանքային գործունեությամբ, ժողովրդական տնտեսության տեղի ունեցող վերակառուցման հետ։ Լեզվի վրա տարած աշխատանքը պիտի ընդգրկի լեզվի պարապմունքների բոլոր բաժինները—բանավոր լեզու, ընթերցում, գրավոր, դիտողություն լեզվի վրա և խոսքի տեխնիկա։ Ուսուցիչը պիտի հոգա համապատասխան նյութեր ընտրելու համար, վորոնք արտացոլեն սոցիալիստական շինարարությունը և դասակարգային պայքարը։ Այդ կարտացոլվի նաև քերականական վարժությունների մեջ, վորոնց համար անհրաժեշտ է, բան հնարավորության, այնպիսի որինակներ, վորոնք համաչափություն պահպանեն լեզվի դասի այլ պարապմունքների և ընդհանուր դպրոցական աշխատանքների հետ։ Իհարկե, հատուկ ունակությունների վարժությունների ժամանակը լրիվ չափով կկարտահել այդ միշտ չի հաջողվել, բայց այն դեպքերում, յերբ սովորական բառերի պաշարի մեջ կարելի կլինի մտցնել դպրոցի հանրօգուտ աշխատանքի հետ կապված բառեր, այդ հարկավոր է անել։ (Ինչու, որինակի համար, այնպիսի բառերի հոլովումով, ինչպիսին է „սեղան“, յերբ մանուկների հասարակական-արտադրողական աշխատանքը նրանց մեջ հետաքրքրություն է շարժում դեպի այնպիսի բառերը, վորպեսին են՝ „խոհանոց“, „կոլխոզ“, „սովխոզ“, „գործարան“ և այլն։ Ավելի բեղմնավոր կլինի նրանց ուշադրությունը կենտրոնացնել այս վերջին բառերի հոլովման վրա, վորոնք համապատասխանում են նրանց շահերին)։

Այսպիսով, լեզվի վրա արած դիտողությունները, խոսքի տեխնիկան, գրավորը, ընթերցումը, բանավոր լեզուն—այս բոլորը, համաձայն աշակերտների զարգացմանը, և դիտելիքներին, պիտի կապակցվեն սոցիալիստական շինարարության հարցերի, և նրանց հետ կապված դպրոցական աշխատանքների հետ։ Նման պարապմունքները, լեզվի դասին, կամրապնդեն յերեխաների նոր հասկացողությունների շրջանը, կընդարձակեն նրանց լեզվական նյութը և կժամանակեն նրանց մեջ կոմունիստական իդեոլոգիա մշակելուն։

ԾՐԱԳԻՐ

ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԽՈՒՄԲ

Բանավոր լեզու։

Ցերեխաներին սովորեցնել՝ բարձրը և պարզ, առանց շտապելու, և արտահայտիչ։ Մանկական խոսակցական լեզվի թերությունների ուղղումն։ Ցերեխաներին պատմել տալը՝ իրենց տպավորությունները, ապրումները և դիտողությունները։ Տպավորությունների և կարծիքների փոխանակումը՝ զրոսանքների և եքսկուրսիաների ժամանակ, նմանապես և նկարներ դիտելու ժամանակ։ Համառոտ պատմություններ առանձին դեպքերի մասին՝ իրենց կյանքից (ատիճանաբար մշակումն յերեխաների մեջ կարողություն ձեռք բերելու՝ հաջորդականություն պահպանելու համար ժամանակի վերաբերյալ)։ Համառոտ պատմություններ՝ կատարած աշխատանքների, հանձնարարությունների կատարման մասին բրիգադի մեջ։ Մանակցություն՝ հեղափոխական տոների հետ կապված դպրոցական հանդեսներում (արտասանություն, յերգեր)։ Մանուկների աշխատանքների հետ կապված համառոտ, վոչ բարդ զրույցներ, (ուսուցչի հսկողության տակ).— կատարած աշխատանքի անվանապիր, իր կատարած նկարի անվանապիրը, ուշացումների և բացակայության հաշվառում տանելը։

Կարողանալ լրիվ պատասխան տալ վոչ բարդ հարցերին։ Ունկընդրել (լսել) ուսուցչի և ընկերների պատմություններին։ Անգիր սովորել ուսուցչի կողմից բանավոր սովորեցրած փոքրիկ գեղարվեստական վոտանավորներ։ Ցերեխաների ներգրավումն հարցերի կոլեկտիվ զրույցների մեջ։

Ընթերցում։ Կարողանալ ուղիղ կարդալ առանձին նախադասություններ և փոքրիկ՝ արտաքուստ պարզ և բովանդակությամբ մատչելի հոդվածներ,—ապված խոշոր շրիֆտով, ուշադրություն դարձնելով վերջակետի վրա։ Կարողանալ պատմել կարդացածը՝ հարցերով։

Գրավոր։ Ուղիղ դիրքով նստել գրավորի ժամանակ, կարողանալ ուղիղ բռնել գրիչը և մատիտը։ Գծագրել շղթայիկներ ձեռքի դաստակը զարգացնելու համար, վորի նպատակն և նախապատրաստել մանուկներին գրերի տարրերը ուղիղ դուրս բերելու։ Պահպանել գրավորի հիմնական հարաբերականները.— միատեսակ տարրերի համաչափություն, առանձին տարրերի համամասնություն միմյանցից, բառերի միատեսակ հեռավորություն միմյանցից։ Արտագրություն գրատախտակից և գրքից համառոտ նախադասություններից, պատկերի տակ գրել անունը։ Հայտարարությունների և պլակատների կոլեկտիվ տիպ գրություն։ Լոզունգներ գրելը հարմարեցնել հեղափոխական տոներին)։ Իր անունը, հոր անունը, ազգանունը, հասցեն գրելու կարողություն. դպրոցի անունը և հասցեն գրելը. դպրոցական ընկերների անունը, դասարանական զրույցում հիշատակված հեղափոխության առաջնորդների անունն ու ազգանունը գրելը։ Պատկերների նկարագրություն ըստ հարցերի։ Շարադրություն յերկու նախադասություններից (կոլեկտիվ կերպով)։

Ուղիղ գրավորի ունակությունները՝ կապված լեզվի վրա կատարած դիտողությունների հետ։ Նախադասության բաժանումը բառերի, բառերը՝ վանկերի և հնչյունների։ (Այբբենը առանց այբբենարանի— մոտոռային մեթոդով անցնելու ժամանակ անց և կացվում և առաջին բաժինը)։

Բառերի տողադարձը ըստ վանկերի։ Վերջակետը։ Գլխագիրը (մեծատառը) գրավորի սկզբում, վերջակետից հետո, մարդկանց անուններում, ազգանուններում, կենդանիների անուններում։

„յա“, „յե“, „յու,“ „յո“, „այ“, „ոյ“, „ույ“, „եյ“։ „յ“ առանձին վանկ չի կազմում։ Հենց այբբենական լսմբից հետևել նման հնչյունների ճիշտ արտասանելուն.—„բ“ և „պ“, „գ“ և „կ“, „դ“ և „տ“, „ջ“ և „ճ“, „ձ“ և „ծ“։ (Առաջինները հնչվում են կոկորդի խորքից (կոշտ հնչյուններ), յերկրորդները՝ լեզվի ծայրից—բարակ հնչյուններ), և դրանց միջանկյալ փափուկ հնչյունները՝ „փ“, „ք“, „թ“, „չ“, „ց“։

ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲ

Բանավոր լեզու։—

1) Մանուկների ազատ կերպով պատմելը իրենց դիտողությունների և ապրումների մասին։

2) Կարդացած հոդվածների բովանդակությունը հաղորդելու կարողություն։

3) Պատմել պատկերների բովանդակությունը կամ եքսկուրսիաների մասին։

4) Բերանացի սովորել վոտանավորներ։

5) Մասնակցություն ցույց տալ դպրոցական ցերեկույթներին և յերեկույթներին՝ կազմակերպված հեղափոխական տոների, տարեդարձների և անտեառ-քաղաքական կամպանիաների առթիվ։

6) Կոլեկտիվ և անհատական ընթերցում։

7) Կարծիքների կազմակերպված փոխանակություն (դասատուի ղեկավարության տակ) լրագրից, ամսագրից կամ գրքից կարդացածների մասին։

8) Դասդուքյուններ անել խմբակի, բրիգադի և դպրոցի ժողովներում՝ խմբակի ներքին կյանքի և հասարակական աշխատանքների հետ կապված հարցերի մասին (համառոտ զեկուցում տալ, լսել, չխանգարելով զեկուցողներին, մոցնել առաջարկություններ, սոցմրցակցության և հարվածայնության կոչ անել)։

Ընթերցումը.—

Գիտակցական, ազատ և արտահայտիչ ընթերցումն հոդվածների։ Աշխատանքներ արտահայտիչ ընթերցման վրա. ընթերցումն զեմքերով։

Գրավոր աշխատանքների տեսակները.—

1) Գիտակցական արտագրություն գրատախտակից և գրքից։

2) Նկարներին անուն դնել և գրել տակը։

3) Կիսատ նախադասությունները լրացնել։

4) Պատկերների համառոտ նկարագրություն (կոլեկտիվ կերպով ուսուցչի ղեկավարության տակ)։

5) Կազմել լոզունգներ և պլակատներ։

6) Հարվածայնության կոչ գրել (ուսուցչի ղեկավարության տակ)։

7) Հարցերի գրավոր պատասխաններ։

8) Կազմել նախադասություններ ավյալ բառերից։

9) Նախագրուշացրած բացատրական թելադրություն։

10) Ստեղծագործական թելադրություն (կոլեկտիվ կերպով կազմել նախադասություններ և համառոտ պատմվածքներ, մոցնելով անցած կանոնների վերաբերյալ բառեր, որոնք նախապես ուսուցչի կողմից գրվում են գրատախտակի վրա)։

11) Համառոտ կոլեկտիվ շարադրություն ուսուցչի ղեկավարության տակ։

Քերականություն և ուղղագրություն.—

Տալ ճիշտ գրավորի ունակություններ լեզվի վրա կատարած դիտողությունների համաձայն։ Ուղիղ գրավոր՝ առանց բաց թողնելու բառեր ու տառեր։ Նախադասությունը՝ վորպես բառեր կամ բառերի մի խումբ, վոր իր մեջ ամփոփում են մի լրիվ, վերջացրած միտք։ Նախադասությունների տեսակները ըստ արտասանության (ձայնարկության) հրամայական, բացականչական, հարցական։ Աշակերտներին կազմել տալ հրամայական, հարցական և բացականչական նախադասություններ՝ կազմել տալ հարցական և բացականչական բնույթ ունեցող լոզունգներ և պլակատներ։ Բացականչական և հարցական նշանները և նրանց տեղը։ Գտնել բովանդակության մեջ նախադասությունները և վորոշել նրանց ձայնարկությունը։ Վերջակետը նախադասության վերջում։ Մեծատառերը նախադասության սկզբում և հատուկ անուններում։ Այբբենական շարքը և նրա նշանակությունը ցուցակներ կազմելու համար։ Նախադասության բաժանումը բառերի։ Ինքնուրույն և գործնական բառեր։ Առարկաների անունները, նրանց գործողությունը և դրությունը ցույց տվող բառեր։ Հարցերով գտնել այդ տեսակի բառերը։

Ձայնավոր և բաղաձայն հնչյուններ։ Յերկբարբառներ։ „յ“ կիսաձայնի նշանակությունը յերկբարբառների մեջ։ Վանկեր։ Բառերի վանկումը և տողադարձ։ Միավանկ, յերկվանկ և բազմավանկ բառեր։ Նախդիրներ և վերջադիրներ նախդիրները գրվում են բառին կից (ընդ-հանուր, մինչ-հեղափոխական, առ-հասարակ), վերջադիրները գրվում են բառից դուս (հատակի տակ, սեղանի վրա, անտառի մեջ)։ Ածանցներ՝ նախածանց (ան-իրավ, դժ-դուխ, ապ-արդյուն), վերջածանցներ (փայտ-ե-ղեն, կաթսա-ած, գեղնավո-ուն, քար-ոտ բառա-րան, ձիա-վոր)։

Աշխատանք բառարանի վրա։

1) Բառարանի հարստացումը՝ աշակերտների համար նոր բառերով—քաղաքական, գիտական, տեխնիկական՝ համաձայն նրանց ստացած գիտելիքների։

2) Պայքար դատարկապային—խորթ բառերի դեմ.—երդում, ազգատյաց գործվածքներ, արհամարհական անուններ և այլն։

3) Պրոլետարական հեղափոխության դարաշրջանում սոցշինարարության ասպարիզում ստեղծած բառերի յուրա-

ցումն.–հարվածային, սոցմրցակցություն, կոլտնտեսություն, խորհրդատվություն և այլն։

ՅԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Բանավոր լեզու։—Մանուկների պատմությունները իրենց դիտողությունների և ապրումների մասին։ Դասարանում պատմել տանը կարդացածի մասին։ Պատմություն պատկերների վրա։ Վոտանավորների արտահայտիչ ընթերցումն։ Պատմություններ անել յերեխաների և մեծերի կյանքից և աշխատանքային գործունեությունից՝ առանձին պատահարների մասին, պահպանելով ժամանակի վերաբերյալ հաջորդականություն։ Հասարակական և արտադրական աշխատանքների պլան կազմելը կոլեկտիվ ուժով։ Դասարանի բրիգադների հաշվառումները կատարած աշխատանքների և իրագործած հանձնարարությունների մասին։

Դասարանի ներքին կյանքի հետ կապված հարցերի քննադատություն ժողովներում։

Ընտրել և կազմել՝ հեղափոխական տոների, անառևտրաքաղաքական կամպանիաների, սոցմրցակցության և հարվածայնության հետ կապված լոզունգներ։

Յեզրակացություններ կատարել հեղափոխական տոներին, տարեդարձներին և կամպանիաներին, կոլեկտիվ արտատանությունների, զբաղանության, պատմվածքների, յերգերով և խաղերով։

Կոլեկտիվ և անհատական ընթերցումն՝ գտնելով նախատրաք գրված հարցերի պատասխանները մի վորևէ խնդրի վերաբերյալ։ Կարողանալ ընկերնդրել պատմություններ, հայտարարություններ, զեկուցումներ, բարձրաձայն ընթերցումներ—գրքից կամ լրագրից, և հետագայում հաղորդել լսածը դասարանին, բրիգադին։

Ընթերցում։—Կարողանալ ազատ կարդալ փոքրիկ և բովանդակությամբ մատչելի հոդված՝ ճշտարկությամբ, համաձայն առոգանության նշանների։

Կարողանալ արտահայտիչ կերպով կարդալ խոսակցական բովանդակություն ունեցող հոդվածներ։ Կարողանալ գտնել կարդացածի մեջ այն կտորները, վորտեղ պատասխանում են տված հարցերին։ Մտքի մեջ կարդալու ունակությունն՝ գրքում և տանը։ Կարողանալ ոգտվել գրքի ցանկից։

Տպագիր և ձեռագիր հոդվածների ընթերցումը, պահպանելով հայտնական, հարցական և բացականչական ճայնարկությունների կանոնները։

Գրավոր աշխատանքների տեսակները—

1) Դիտակցական արտագրություն՝ կապված խոսակցական լեզվի և ուղղագրության վերաբերյալ աշխատանքների հետ։
2) Սովորած վոտանավորի ալբոմի մեջ գրելը։
3) Նախագրաշարված թելագրություն։
4) Տվյալ բառերից նախադասություններ կազմելը։
5) Գրավոր պատասխաններ տալ հարցերին։
6) Լոզունգներ և պլակատներ կազմելը։
7) Եքսկուրսիաների և փոքրիկ նկարագրություն։
8) Պատկերների նկարագրություն ըստ պլանի։
9) Դպրոցական կյանքի արտատար և որոշույց կազմելը։
10) Կոլեկտիվ կերպով նամակներ կազմելը։
11) Սոցմրցակցության հրավերներ՝ նամակի ձևով։
12) Ազատ թելագրություն։
13) Ստեղծագործական թելագրություն։
14) Կոլեկտիվ կերպով տեսածի և լսածի մասին պատմվածք գրելը։
15) Կարդացածի պլան կազմելը։
16) Դժվար բառերի բառարան կազմելը։
17) Փոխադրություն՝ ըստ կազմած պլանի։

Քերականություն և ուղղագրություն—

„Ը"-ի ուղղագրությունը։ „Ը" լսվում և գրվում է բառի սկզբում (ընկեր, ընդհանուր)։ „ը" լսվում է բառի սկզբում, բայց չի գրվում (ը)սկիզբ, (ը)պտուղ, (ը)պատանք)։

Ծանոթություն գոյական անունների հետ, վորպես՝ մարդկանց, կենդանիների, առարկաների, յերևույթների իրա գործությունների անուն ցույց տվող բառերի հետ։ հարցեր՝ ով, ինչ։ Գոյական անունների փոփոխությունները ըստ հոլովների և թվերի։ Հատկացուցչություն տալ հոլովումների մասին։ Հինգ տեսակի հոլովումները.—1-ին տեսակի հոլովումն՝ յերբ տրական հոլովում (ում, ինչի) հարցին—վերջանում է „ի"-ով (պատ-ի, տեղան-ի, կոլտնտես-ի)։ 2-րդ հոլովումն՝ յերբ տրականում վերջանում է „ու"-ով (ագռավ-ու, մատան-ու), 3-րդ տեսակի հոլովումն՝—ա(ն)-ով (գործ-ա(ն),

ամասվ-ա, որվ-ա). 4-րդ տեսակի հոլովումն՝ „որ"-ով (հոր, մոր, յեղբոր), և 5-րդ տեսակի հոլովումն՝ „ոջ"-ով կն-ոջ, քր-ոջ, տիր-ոջ): Յեզակի և հոգնակի: Հոգնակիի վերջավորությունները՝ „եր", „ներ": „ու" և „ի" հնչյունների ազդեցն վերջին փակ վանկերում հոլովման ժամանակ (գրուն - գրունն, բուն - բնի, յերկիր - յերկրի, գետին - գետնի):

Հասկացողություն բայերի մասին, որոնք ցույց են տալիս առարկաների գործողությունը կամ դրությունը (հարցեր.—ինչ է անում առարկան. ինչ է կատարվում առարկայի հետ): Բայերի վերջավորության փոփոխությունը ըստ դեմքերի, թվերի, ժամանակների: Ներկա ժամանակ, ապառնի ժամանակ, անցյալ ժամանակ, անցյալ կատարյալ և անցյալ անկատար:

Բայերի խոնարհումն 3 դեմքերով և 3 ժամանակներով: Վարժություններ: Նախադասություններ կազմելը 5 հոլովներով և խոնարհումներով՝ ըստ 3 ժամանակների: Նախադասության գլխավոր անդամները՝ յենթակա և ստորոգյալ (ասացված): Յենթական՝ որպես դոյական անուն, ստորոգյալը՝ որպես բացանուն:

Ուղիղ դասավորել և կազմել կանոնավոր նախադասություն անկանոն ցրված գոյականներից և բայերից: (Վորպիսի քաղաք հարևանի տարավ համար խաղողը ծախելու.— Հարևանի որպիսի խաղողը քաղաք տարավ ծախելու համար):

Աշխատանք բառարանի վրա:—

1) Դիտողություն անել հականիշ բառերի վրա.—մեծ — փոքր, չար—բարի, լուսություն—աղմուկ:

2) Գտնել ուխյալ բառերի դեմ հականիշ բառեր:

ՅԵՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Բանավոր լեզու:—Կարողանալ համառոտ դեկուցումներ անել դասարանի առաջ հեղափոխական տոների, անտեսա—քաղաքական կամպանիաների առթիվ:

Ջնել և նկարագրել՝ հեղափոխության անցյալի մասին և ներկա սոցիալիստական իրականությունը պատկերացնող նկարները: Գտնել տեսած կինո-պատկերների բովանդակությունը: Ճիշտ հետևողականությամբ պատմել կարդացած հոդվածները, պատմվածքները, լրագրական տեղեկությունները: Կարդացածից ընտրել գլխավոր միտքը:

Ընթերցում:—Կարողանալ ունկնդրել դեկուցումը, բարձրաձայն ընթերցումը և իր ժամանակին դրի անցնել այն հարցերը, վորոնց մասին հարկավորություն կլինի հարցեր տալու:

Փոքրիկ լրագրական հոդվածների ընթերցում, պահպանելով առոգանության կանոնները, նաև տեղին դանդաղեցնելու, արագացնելու և կանգնեցնելու ձայնը, համաձայն բովանդակության արտահայտած մտքի: Մտքի մեջ խնդնուրույն ընթերցանության ունակություն:

Կարողանալ կարդալ մանկական լրագիրը.—Ինչ բաժիններից և կազմված լրագիրը և ինչպես գտնել հարկավոր նյութը:

Գրավոր աշխատանքների տեսակները:—

1) Կարդացած հոդվածների և պատմվածքների պլան կազմելը:

2) Փոխադրություն համաձայն կազմած պլանի:

3) Պատմություններ՝ նկարների վրա:

4) Ինքնուրույն շարադրություն տեսածի և լսածի մասին:

5) Ինքնուրույն նկարագրություններ՝ եքսկուրսիաների, փորձեր, դիտողություններ:

6) Նամակներ կազմելը (նամակագրություն և ազդարարական բնույթ ունեցող նյութերի փոխանակություն Աբխազիայի շրջանների և Ս. Խ. Հ. Մ. դպրոցների հետ):

7) Կազմել սոցմրցակցության հրավերներ:

8) Հոդվածներ կազմել դպրոցի և նրան կցված հիմնարկության պատի թերթի համար:

9) Կազմել գործնական դրություններ.—լցնել դրամ փոխադրելու թերթիկը, կազմել հեռագիրներ, հավատարմաթուղթ, ստացական:

10) Տվյալ բառերից կազմել նախադասություններ:

11) Նախապատրաստված, ազատ և ստեղծագործական թելադրություններ:

12) Այլբոմի մեջ գրել սովորած վոտանավորները:

13) Կազմել դժվար բառերի բառարան:

Քերականություն և ուղղագրություն:—

Անձական անունները, վորպես առարկայի հատկություն՝ վորակը, տեսակը ցույց տվող բառեր: Հարց.—ինչպիսի, վորպիսի: Անձական անունը, վորպես անձական՝ չի հոլովում և չունի հոգնակի թիվ. Ձևով անձականը գործ և անձում

Гос. Библиотека
ЗСФСР-Абх.ССР
31395-46

գոյական անվան փոխարեն, ապա նա հոլովվում է, որպես գոյական անուն։ Մի շարք ածականների կազմելը գոյական անուններից ածանցների ոչնութեամբ (փայտ—եղեն, գունա—վոր, յերկը—ային, քնա—կան)։ Ընդհանուր ծանոթութեան դերանունների մասին։—

Դերանունները, որպես բառեր, որոնք գործ են ածվում գոյական կամ ածական անունների փոխարեն (յես, դու, նա, ինքը, այս, այդ, այն և այլն)։ Անձնական դերանուն, ցուցական դերանուն։ Թվական դերանուն։—այսքան, այդքան, այնքան։ Հարցական դերանուն։—քանի՞, որքա՞ն, ո՞վ, ի՞նչ, որպիսի՞, ինչքա՞ն, և այլն։

Նախադասության յերկրորդական անդամները։—վորոշիչներ, լրացուցիչներ։ Նախադասության վերլուծութիւնը հարցերով։ Համառոտ և ընդարձակ նախադասություն

Շաղկապներ։—և, ու, իսկ, կամ, բայց և այլն։

Միջակետ, ստորակետ, բութ, բազմակետ։

Բայ անուններ—կրկնութեան անցածի։

ՉՈՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Բանավոր խոսք (լեզվի) ունակութիւնները, ընթերցումը, գրավորը նույնն են, ինչ վոր տրված են 3-րդ խմբում։ Հատուկ ուշադրութիւն և դարձվում աշխատանքին՝ լրագրի վրա, վորը տարվում է հետևյալ ձևով։—Յուրաքանչյուր բրիգադ ստանում է առաջադրութիւն հետևելու լրագրի մեջ („Պրոլետար“, „Խորհրդային Հայաստան“) վորևե բաժնի։

Կարտել լրագրից առանձին թղթակցութիւններ կամ նկարագրութիւններ և զեկուցել դասարանին։ Կարտել պատկերներ և կազմել ալբոմ։ Լրագրի բաժիններից կարելի յե վերցնել մոտավորապես հետևյալները.—Կոլխոզային շարժումը (յեթե ճարվի՝ Աբխազիայի կյանքից), սովխոզների մասին, սոցիալիստական շինարարութիւնը Խորհրդային Միութեան մեջ, սոցմրցակցութիւն և հարվածայնութիւն, ցանքային կամպանիա, իրագարձութիւնները արտասահմանում, դասակարգային պայքար։

Գրավոր աշխատանքների տեսակները։—

1) Ինքնուրույն կերպով կազմել կարդացածի պլանը։
2) Փոխադրութիւն՝ համաձայն կազմած պլանի։
3) Պատմվածքներ՝ իրենց տպավորութիւնների մասին։

4) Նկարագրել՝ եքսկուրսիաները, փորձերը, դիտողութիւնները։
5) Ստեղծագործական պատմվածքներ՝ կարողանալ գրել պատմվածքի բովանդակութեան շարունակութիւնը, հորինել հետագա դիպվածներ, գրել ինքնուրույն պատմվածք։
6) Գրագրութիւն ուրիշ դպրոցների հետ։
7) Կազմել սոցմրցակցութեան հրավերներ։
8) Կազմել պայմանագիր ձեռնարկութիւնների հետ։
9) Գրագրութիւն արտասահմանյան պիոներկազմակերպութիւնների հետ։
10) Կազմել լոզունգներ և պլակատներ։
11) Մասնակցել ընդհանուր դպրոցական պատի թերթին (1 աստիճանի)։
12) Կազմել գործնական գրութիւններ.—կազմել արձանագրութիւն, դիմում, հայտարարութիւն։
13) Նախադուշացրած, ընդհանուր-ուղղագրական և ստեղծագործական թելադրութիւն։
14) Կազմել նախադասութիւններ, որինակներ անցած կանոնների վերաբերյալ։
15) Գրել սովորած վոտանավորները ալբոմում։
16) Կազմել գրութեան համար դժվար կամ անհասկանալի բառերի բառարան։
17) Ինքնուրույն շարադրութիւն մատչելի թեմաներով։

Քերականութիւն և ուղղագրութիւն։—

Բառակազմութիւն—Բառի կազմութիւնը.—արմատ, ածանց, վերջավորութիւն։ Բարդ բառեր և հոդակապեր (ա, ե, ու)։ Բարդ բառեր՝ առանց հոդակապերի (փայտփորիկ)։ Կրճատ բարդ բառեր (լուսժողկոմ, լուսբաժին, կենտկոմ)։ Բարդ բառերի ուղղագրական վարժութիւններ։

Գոյական անուն։ Նյութական և վերացական գոյականներ։ Հասարակ և հատուկ։ Գոյականների փոփոխութիւնները ըստ թվի և հոլովների։ Վարժութիւններ։ „Ու“ տառի փոփոխութիւնը հոլովման ժամանակ (ձու—ձվի, կատու—կատվի)։ „ը“-ն տողադարձի ժամանակ (գըլ-խարկ, կըր-կին)։

Բայ։ Անորոշ բայ, հրամայական եղանակ։ Անցյալ կատարյալ և անցյալ անկատար։ Բայերի խոնարհումը ըստ թվի և ժամանակների։ Ս, դ, ն, (ը) դիմորոշ հոդեր։

Մակբայ—բառեր, որոնք ցույց են տալիս գործողութիւն ցույց տվող բառերի վորպիսութիւնը (բարձր խոսել,

արագ քայլել, հայերեն գրել, մանրամասնորեն պատմել)։

Թվական ածականներ.—քանակական և դասավորական։ Կրկնել՝ նախդիրներ, վերջադիրներ, նախածանց, վերջածանց, շաղկապ, առոգանության նշաններ, կետադրություն։

Նախադասություն—պարզ և բարդ, համառոտ և ընդարձակ. միջանկյալ նախադասություն։ Նախադասության վերլուծությունը հարցերով։ Կետադրություն բարդ նախադասության մեջ։ Նույնանուն, նույնանիշ, հոմանիշ, հականիշ բառեր։

Աշխատանք բառարանի վրա։—

1) Հարստացնել բառերի պաշարը քաղաքական և գիտական—տեխնիկական բառերով։

2) Դիտողություն բառերի փոխաբերական նշանակության վրա։ Գտնել նմանության գծերը, որոնց հնորհիվ բառը փոխաբերական միտք է ստանում։

3) Կազմել նախադասություններ միևնույն բառով, որ ունենա ուղղակի և փոխաբերական նշանակություն։

4) Բառարաններից օգտվելու ունակություններ.—ուղղագրական, քաղաքական, աշխատանքային բառարաններ։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ԾՐԱԳՐԻ ԱՌԹԻՎ։

Դպրոցը, որը սոցիալիզմ կառուցող—մարտիկների նոր սերունդ պատրաստողն է հանդիսանում, պիտի նրանց ձեռքը տա այնպիսի մի ուժեղ զենք, որպեսզի հանդիսանում է լեզուն։ Այդ իսկ պատճառով հենց ուսուցման 1-ին աստիճանում յերեխաների մեջ պիտի հաստատապես մշակվի ճըշգրիտ, արտահայտիչ և բազմապիսի լեզու։

Լեզվական աշխատանքների բոլոր ձևերը պիտի ուղղված լինեն այդ հարցին։ Լեզվին տիրապետող աշակերտը ավելի արագ և հաստատուն կերպով է յուրացնում դպրոցական ուսուցման մյուս առարկաների գիտելիքներն ու ունակությունները։ Ուսուցման մյուս առարկաներն էլ իրենց հերթին շարունակաբար նյութ են մատակարարում մանկական լեզվի զարգացմանը։ Լեզվական աշխատանքների բոլոր ձևերը ուղղված պիտի լինեն մանուկների բառապաշարը ընդարձակելու և հարստացնելու վրա։

Ցածր դասարաններում բանավոր խոսքի վարժությունների համար նյութ են մատակարարում խաղերը (յերեխաները առաջարկում են իրենց խաղերը և բացատրում թե ինչպես պիտի խաղալ), նկարները՝ որոնց բովանդակությունը պատմում են նրանք, եքսկուրսիաները՝ որոնց մշակման ժամանակ բրիգադները պատմում են, թե ինչ առաջադրություններ են ստացել իրենք և ինչպես կատարեցին, հաշվետվությունները՝ աշխատանքային տեսակի աշխատանքի մասին, որ կատարել է տվյալ դասարանը մեկնակ կամ ուրիշ դասարանների հետ միասին։

1-ին աստիճանի բարձր դասարաններում, ուր բանավոր խոսքից օգտվելու հմտությունը համեմատաբար ավելի բարձր է, աշակերտները զեկուցումներ են անում 1-ին աստիճանի մյուս դասարաններում հասարակագիտական թեմաներից, կամպանիաների, սոցմրցակցության և հարվածայնության իրացումների մասին և առհասարակ զանազան ընդհանուր դպրոցական գործերի մասին։

Այդ դասարաններում դեպի կարդացածը դիտակցական վերաբերմունք մշակելու նպատակով մորոշ ժամանակամիջոց է հատկացվում գրույցների համար՝ կարդացած գրքերի առթիվ, արտադասարանային ընթերցման համար (գրադարանային)։

Յերեխաները սովորում են համառոտակի պատմելու առանձնապես իրենց դուր յեկած հոդվածներն ու գրքերը և նրանցից դուրս բերելու գլխավոր մտքերը։

Գրավոր լեզվին տիրապետելը ներկայացվում է հետևյալ ձևով։ Այբբենական դասարանում սկզբնական շրջանում նյութը քաղվում է կոնկրետ միջավայրից.—Մի առարկա պատկերացնող նկարների, տակ նրանց անունը գրելը, 2-3 բառերից կազմված նախադասություններ, ըստ որում պիտի ընտրել կարճ բառեր, որովհետև յերեխաների ակտիվ ուշադրության թույլ զարգացումը նրանց սլաքների մեջ կարող է դնել յերկար բառի յերկերորդ կիսում։ Առհասարակ այբբենական դասարանի դրավորին պիտի նախորդի զննական—մոտորային կարդի վարժությունները։ Այդ՝ յերեխաների համար հետաքրքիր աշխատանքը վարժեցնում է նրանց ձեռքերի մկանների նուրբ շարժումների և այդպիսով նախապատրաստում նրանց գրավորի համար։

Ուսուցման 2-րդ և 3-րդ տարիներում յերեխաները գրավորի համար նյութեր վերցնում են շրջապատի կյանքից և նրա մեջ ունեցած իրենց գործունեությունից։ — Աշխատանքային պրոցեսներ, եքսկուրսիաներ, կամ արտադրու-

ամառվ-ա, որվ-ա)։ 4-րդ տեսակի հոլովումն՝ „որ"-ով (հոր, մոր, յեղբոր), և 5-րդ տեսակի հոլովումն՝ „ոջ"-ով (կն-ոջ, քր-ոջ, տիր-ոջ)։ Յեզակի և հոգնակի։ Հոգնակիի վերջավորությունները՝ „եր", „ներ"։ „ու" և „ի" հնչյունների սղումն վերջին փակ վանկերում հոլովման ժամանակ (գործուն - գործնան, բուն - բնի, յերկիր - յերկրի, գեամն - գեամի)։

Համակցողություն բայերի մասին, որոնք ցույց են տալիս առարկաների գործողությունը կամ դրությունը (հարցեր.—ինչ է անում առարկան. ինչ է կատարվում առարկայի հետ)։ Բայերի վերջավորության փոփոխությունը ըստ դեմքերի, թվերի, ժամանակների։ Ներկա ժամանակ, ապառնի ժամանակ, անցյալ ժամանակ, անցյալ կատարյալ և անցյալ անկատար։

Բայերի խոնարհումն 3 դեմքերով և 3 ժամանակներով։ Վարժություններ։ Նախադասություններ կազմելը 5 հոլովներով և խոնարհումներով՝ ըստ 3 ժամանակների։ Նախադասության գլխավոր անդամները՝ յենթակա և ստորոգյալ (ասացվածք)։ Յենթական՝ որպես գոյական անուն, ստորոգյալը՝ որպես բացատուն։

Ուղիղ դասավորել և կազմել կանոնավոր նախադասություն անկանոն ցրված գոյականներից և բայերից։ (Որդին քաղաք հարևանի տարավ համար խաղողը ծախելու.— Հարևանի որդին խաղողը քաղաք տարավ ծախելու համար)։

Աշխատանք բառարանի վրա։—

1) Դիտողություն անել հականիշ բառերի վրա.—մեծ — փոքր, չար—բարի, լուրթյուն—ազմուկ։

2) Գտնել ավյալ բառերի դեմ հականիշ բառեր։

ՅԵՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Բանավոր լեզու։—Կարողանալ համառոտ դեկուցումներ անել դասարանի առաջ հեղափոխական տոների, տեսա—քաղաքական կամպանիաների առթիվ։

Ջնջել և նկարագրել՝ հեղափոխության անցյալի մասին և ներկա սոցիալիստական իրավակարգը պատկերացնող նկարները։ Պատմել տեսած կինո-պատկերների բովանդակությունը։ Ճիշտ հետևողականությամբ պատմել կարդացած հոդվածները, պատմվածքները, լրագրական տեղեկությունները։ Կարդացածից ընտրել գլխավոր միտքը։

ЧЕТИЛ
Библиотека
Правления
С С С

Ընթերցում։—Կարողանալ ունկնդրել դեկուցումը, բարձրաձայն ընթերցումը և իր ժամանակին դրի անցնել այն հարցերը, որոնց մասին հարկավորություն կլինի հարցեր տալու։

Փոքրիկ լրագրական հոդվածների ընթերցումն, պահպանելով առոգանության կանոնները, նաև տեղին դանդաղեցնելու, արագացնելու և կանգնեցնելու ձայնը, համաձայն բովանդակության արտահայտած մտքի։ Մտքի մեջ ինքնուրույն ընթերցանության ունակություն։

Կարողանալ կարդալ մանկական լրագիրը.—ինչ բաժիններից է կազմված լրագիրը և ինչպես գտնել հարկավոր նյութը։

Գրավոր աշխատանքների տեսակները։—

1) Կարդացած հոդվածների և պատմվածքների պլան կազմելը։

2) Փոխադրություն համաձայն կազմած պլանի։

3) Պատմություններ՝ նկարների վրա։

4) Ինքնուրույն շարադրություն տեսածի և լսածի մասին։

5) Ինքնուրույն նկարագրություններ՝ եքսկուրսիաների, փորձեր, դիտողությունների։

6) Նամակներ կազմելը (նամակագրություն և ազգագրական բնույթ ունեցող նյութերի փոխանակություն Աբխազիայի շրջանների և Ս. Խ. Հ. Մ. դպրոցների հետ)։

7) Կազմել սոցմրցակցության հրավերներ։

8) Հոդվածներ կազմել դպրոցի և նրան կցված հիմնարկության պատի թերթի համար։

9) Կազմել գործնական դրություններ.—լցնել դրամ փոխադրելու թերթիկը, կազմել հեռագիրներ, հավատարմագրություն, ստացական։

10) Տվյալ բառերից կազմել նախադասություններ։

11) Նախագծանշացրած, ազատ և ստեղծագործական թելադրություններ։

12) Այլբոմի մեջ դրել սովորած վոտանավորները։

13) Կազմել դժվար բառերի բառարան։

Գրականություն և ուղղագրություն։—

Անձական անունները, որպես առարկայի հատկություններ, վորակը, տեսակը ցույց տվող բառեր։ Հարց.—ինչպիսի, որպիսի։ Անձական անունը, որպես անձական՝ չի հոլովում և չունի հոգնակի թիվ[illegible] անձականը գործ է անվում

Гос. Библиотека
ЗСФСР-Арм.ССР
31395-

գոյական անվան փոխարեն, ապա նա հոլովվում է, ինչպես գոյական անուն։ Մի շարք ածականների կազմելը գոյական անունների ածանցների ոգնությամբ (փայտ—եղեն, գունա—որ, յերկը—ային, ընտ—կան)։ Ընդհանուր ծանոթություն դերանունների մասին։—

Դերանունները, որպես բառեր, որոնք գործ են ածվում գոյական կամ ածական անունների փոխարեն (յես, դու, նա, ինքը, այս, այդ, այն և այլն)։ Անձնական դերանուն, ցուցական դերանուն։ Թվական դերանուն.—այսքան, այդքան, այնքան։ Հարցական դերանուն.—քանի, որքա՞ն, ո՞վ, ի՞նչ, որպիսի՞, ինչքա՞ն, և այլն։

Նախադասության յերկրորդական անդամները.—որոշիչներ, լրացուցիչներ։ Նախադասության վերլուծությունը հարցերով։ Համառոտ և ընդարձակ նախադասություն

Շաղկապներ։—և, ու, իսկ, կամ, բայց և այլն։

Միջակետ, ստորակետ, բութ, բազմակետ։

Բայ անունները—կրկնություն անցածի։

ՉՈՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Բանավոր խոսք (լեզվի) ունակությունները, ընթերցումը, գրավորը նույնն են, ինչ որ տրված են 3-րդ խմբում։ Հատուկ ուշադրություն և դարձվում աշխատանքին՝ լրագրի վրա, որը տարվում է հետևյալ ձևով։—Յուրաքանչյուր բրիգադ ստանում է առաջադրություն հետևելու լրագրի մեջ („Պրոլետար“, „Խորհրդային Հայաստան“) որևե բաժնի։

Կարտել լրագրից առանձին թղթակցություններ կամ նկարագրություններ և գեկուցել դասարանին։ Կարտել պատկերներ և կազմել ալբոմ։ Լրագրի բաժիններից կարելի է վերցնել մոտավորապես հետևյալները.—Կոլխոզային շարժումը (յերեք ճարվի՝ Աբխազիայի կյանքից), սովխոզների մասին, սոցիալիստական շինարարությանը Խորհրդային Միության մեջ, սոցմրցակցություն և հարվածայնություն, ցանքային կամպանիա, իրագարձությունները արտասահմանում, դասակարգային պայքար։

Գրավոր աշխատանքների տեսակները.—

1) Ինքնուրույն կերպով կազմել կարդացածի պլանը։
2) Փոխադրություն՝ համաձայն կազմած պլանի։
3) Պատմվածքներ՝ իրենց տպավորությունների մասին։

4) Նկարագրել՝ եքսկուրսիաները, փորձերը, դիտողությունները։

5) Ստեղծագործական պատմվածքներ՝ կարողանալ գրել պատմվածքի բովանդակության շարունակությունը, հորինել հետագա դիպվածներ, գրել ինքնուրույն պատմվածք։

6) Գրագրություն ուրիշ դպրոցների հետ։

7) Կազմել սոցմրցակցության հրավերներ։

8) Կազմել պայմանագիր ձեռնարկությունների հետ։

9) Գրագրություն արտասահմանյան պիոներկազմակերպությունների հետ։

10) Կազմել լոզունգներ և պլակատներ։

11) Մասնակցել ընդհանուր դպրոցական պատի թերթին (1 աստիճանի)։

12) Կազմել գործնական գրություններ.—կազմել արձանագրություն, դիմում, հայտարարություն։

13) Նախագծաշարադրած, ընդհանուր-ուղղագրական և ստեղծագործական թելադրություն։

14) Կազմել նախադասություններ, որինակներ անցած կանոնների վերաբերյալ։

15) Գրել սովորած վոտանավորները ալբոմում։

16) Կազմել գրության համար դժվար կամ անհասկանալի բառերի բառարան։

17) Ինքնուրույն շարադրություն մատչելի թեմաներով։

Քերականություն և ուղղագրություն.—

Բառակազմություն—Բառի կազմությունը.—արմատ, ածանց, վերջավորություն։ Բարդ բառեր և հոդակապեր (ա, ե, ու)։ Բարդ բառեր՝ առանց հոդակապերի (փայտփորիկ)։ Կրճատ բարդ բառեր (լուսժողկոմ, լուսբաժին, կենտկոմ)։ Բարդ բառերի ուղղագրական վարժություններ։

Գոյական անուն։ Նյութական և վերացական գոյականներ։ Հատարակ և հատուկ։ Գոյականների փոփոխությունները ըստ թվի և հոլովների։ Վարժություններ։ „Ու“ տարի փոփոխությունը հոլովման ժամանակ (ձու—ձվի, կատու—կատվի)։ „ը“-ն տողադարձի ժամանակ (գըլ-խարկ, կըր-կին)։

Բայ։ Անորոշ բայ, հրամայական յեղանակ։ Անցյալ կատարյալ և անցյալ անկատար։ Բայերի խոնարհումը ըստ թվի և ժամանակների։ Ս, դ, ն, (ը) դիմորոշ հոդեր։

Մակբայ—բառեր, որոնք ցույց են տալիս գործողության ցույց տվող բառերի որպիսությունը (բարձր խոսել,

արագ քայլել, հայերեն գրել, մանրամասնորեն պատմել)։

Թվական ածականները.—քանակական և դասավորական։ Կրկնել՝ նախդիրներ, վերջադիրներ, նախածանց, վերջածանց, շաղկապ, առոգանության նշաններ, կետադրություն։

Նախադասություն—պարզ և բարդ, համառոտ և ընդարձակ. միջնակյալ նախադասություն։ Նախադասության վերլուծությունը հարցերով։ Կետադրություն բարդ նախադասության մեջ։ Նույնանուն, նույնանիշ, հոմանիշ, հականիշ բառեր։

Աշխատանք բառարանի վրա։—

1) Հարստացնել բառերի պաշարը քաղաքական և գիտական—տեխնիկական բառերով։

2) Դիտողություն բառերի փոխաբերական նշանակության վրա։ Գտնել նմանության գծերը, որոնց շնորհիվ բառը փոխաբերական միտք է ստանում։

3) Կազմել նախադասություններ մի ինչ-որ բառով, որ ունենա ուղղակի և փոխաբերական նշանակություն։

4) Բառարաններից օգտվելու ունակություններ.—ուղղագրական, քաղաքական, աշխատանքային բառարաններ։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ԾՐԱԳՐԻ ԱՌԹԻՎ։

Դպրոցը, որը սոցիալիզմ կառուցող—մարտիկների նոր սերունդ պատրաստողն է հանդիսանում, պիտի նրանց ձեռքը տա այնպիսի մի ուժեղ զենք, որպեսին հանդիսանում է լեզուն։ Այդ իսկ պատճառով հենց ուսուցման 1-ին աստիճանում յերեխաների մեջ պիտի հաստատապես մշակվի ճըշգրիտ, արտահայտիչ և բազմապիսի լեզու։

Լեզվական աշխատանքների բոլոր ձևերը պիտի ուղղված լինեն այդ հարցին։ Լեզվին տիրապետող աշակերտը ավելի արագ և հաստատուն կերպով է յուրացնում դպրոցական ուսուցման մյուս առարկաների գիտելիքներն ու ունակությունները։ Ուսուցման մյուս առարկաներն էլ իրենց հերթին շարունակաբար նյութ են մատակարարում մանկական լեզվի զարգացմանը։ Լեզվական աշխատանքների բոլոր ձևերը ուղղված պիտի լինեն մանուկների բառապաշարը ընդարձակելու և հարստացնելու վրա։

Ցածր դասարաններում բանավոր խոսքի վարժությունների համար նյութ են մատակարարում խաղերը (յերեխաները

ներն առաջարկում են իրենց խաղերը և բացատրում թե ինչպես պիտի խաղալ), նկարները՝ որոնց բովանդակությունը պատմում են նրանք, եքսկուրսիաները՝ որոնց մշակման ժամանակ բրիգադները պատմում են, թե ինչ առաջադրություններ են ստացել իրենք և ինչպես կատարել այն, հաշվետվությունները՝ աշխատանքային սենյակի աշխատանքի մասին, որը կատարել և տվյալ դասարանը մեկնակ կամ ուրիշ դասարանների հետ միասին։

1-ին աստիճանի բարձր դասարաններում, ուր բանավոր խոսքից օգտվելու հմտությունը համեմատաբար ավելի բարձր և, աշակերտները զեկուցումներ են անում 1-ին աստիճանի մյուս դասարաններում հասարակագիտական թեմաներից, կամալանիաների, սոցմրցակցության և հարվածայնության իրացումների մասին և առհասարակ զանազան ընդհանուր դաստիարակական գործերի մասին։

Այդ դասարաններում դեպի կարդացածը գիտակցական վերաբերմունք մշակելու նպատակով որոշ ժամանակամիջոց և հատկացվում գրույցների համար՝ կարդացած գրքերի առթիվ, արտադասարանային ընթերցման համար (գրադարանային)։

Յերեխաները սովորում են համառոտակի պատմելու առանձնապես իրենց դուր յեկած հոդվածներն ու գրքերը և նրանցից դուրս բերելու գլխավոր մտքերը։

Գրավոր լեզվին տիրապետելը ներկայացվում է հետևյալ ձևով։ Այբբենական դասարանում սկզբնական շրջանում նյութը քաղվում է կենդանի միջավայրից.—Մի առարկա պատկերացնող նկարների, տակ նրանց անունը գրելը, 2-3 բառերից կազմված նախադասություններ, ըստ որում պիտի ընտրել կարճ բառեր, որովհետև յերեխաների ակտիվ ուշադրության թույլ զարգացումը նրանց - սխալների մեջ կարող է գցել յերկար բառի յերկրորդ կիսում։ Առհասարակ այբբենական դասարանի գրավորին պիտի նախորդի զննական—մոտորային կարդի վարժությունները։ Այդ՝ յերեխաների համար հետաքրքիր աշխատանքը վարժեցնում է նրանց ձեռքերի մկանների նուրբ շարժումների և այդպիսով նախապատրաստում նրանց գրավորի համար։

Ուսուցման 2-րդ և 3-րդ տարիներում յերեխաները գրավորի համար նյութեր վերցնում են շրջապատի կյանքից և նրա մեջ ունեցած իրենց գործունեությունից։ — Աշխատանքային պրոցեսներ, եքսկուրսիաներ, կամ արտադրու-

թյան հետ, վորին կցված է դպրոցը, սոցմրցակցության և հարվածայնության հրավերները՝ մյուս դասարաններին և ուրիշ դպրոցներին, անհատական սոցմրցակցության, հաշվառումներ նրանց կատարման մասին, մանակցություն 1-ին աստիճանի դպրոցի պատի թերթին և այլն։

3-րդ և 4-րդ դասարաններում գրավոր աշխատանքների նյութը բավականաչափ ընդարձակվում և բարդանում է։ Անցած հոդվածների գրավոր կերպով արտահայտելը, 1-ին աստիճանի պատի թերթի համար թղթակցություններ կազմելը, անցկացրած կամպանիաների մասին ավելի մանրամասն հաշվետվություններ, գործնական գրություններ կազմելը, դասարանական ժողովների ավելի մանրամասն արձանագրություններ կազմելը, կատարած վորձերի գրանցումները, բնագիտության, հասարակագիտության և այլ դասերին յուրացրած նյութերի գրանցումները և այլն։

Գյուղական դպրոցների 3-րդ և 4-րդ դասարանների աշակերտությունը մանակցելու չի լրենց գյուղի կուլտ աշխատանքներին, կիրառելով դպրոցում ձեռք բերած գիտելիքները։

Այսպիսով, գրավորը չի հանդիսանում իրրև դուտ գրավորի համար ինքն իր մեջ փակված դպրոցական աշխատանք։ Կապ է սահմանվում դպրոցական ուսուցման բոլոր առարկաների, նաև մանկան, իր շրջապատի կյանքի մեջ ունեցած բոլոր գործունեությունների միջև։

Այդպիսի կապակցություն ուսուցման մյուս առարկաների հետ պիտի պահպանել և լեզվի վրա կատարած դիտողությունների մեջ, վորոնք չպիտի կրկնեն հին դպրոցի չոր ու ցամաք և տեսականորեն անջատված քերականության այն սխալները, վորոնք անմատչելի են մանկան մտածելակերպին։

Լեզվի վրա կատարած դիտողությունների շրջանը 3-րդ և 4-րդ դասարաններում շատ ընդարձակ է։ Ուսուցչի ուշադրությունը պիտի ուղղված լինի այն բանին, թե ինչպես խուսափել տեսականացումից և ավելորդաբանություններից, և ավելի շատ վարժեցնել մանուկներին բառերի համաձայնեցման և նրանց տեղին գործածության մեջ, նախադասություններ կազմելու և այդ բառերից մի կապակցված լեզու ստեղծելու մեջ։

Ուղղագրական ունակությունների ձեռք բերումը սկսվում է հենց առաջին բառից, վոր գրում է այբբենական դասարանի աշակերտը։

Գրավոր աշխատանքի յուրաքանչյուր տեսակը պահանջում է առանձին վարժություններ։ Ուղղագրական ունակությունների մշակումն, ինչպես ասված է վերջը, սկսվում է հենց առաջին բառից, վոր արտագրում է յերեխան։ Վոչ մի բառ, առանց ուսուցչի հսկողության։ Ուսուցումը պիտի սկսել այն բառերից, վորոնք գրվում են այնպես, ինչպես վոր արտասանվում են։ Այս գրվում են այն բառերը, վորոնց արտասանությունը տարբերվում է գրավոր ձևից։ Այդպիսիների ուղղագրությունը յուրացվում է հաճախակի կրկնողության միջոցով։ 1-ին դասարանում ուսուցման մեթոդը ճիում է եւլ նույնը.—Ուշադիր դիտողություն այն բառերի ուղղագրության վրա, վորոնք գրավորի մեջ շեղվում են արտասանությունից, ուժերին համապատասխան տալ պատճառների պարզաբանությունը, գիտակցական արտագրություն։

Ոգտակար է աշակերտների հետ միասին կազմել և պատից կախել „դժվար“ բառերի աղյուսակ։ Նմանապես և ոգտակար է կազմել բառերի համեմատական աղյուսակ, վորոնք ուղղում են մանկական լեզվի անկանոնություններ։

Գիտակցական արտագրության նշանակությունը, ուղղագրական ունակությունները ձեռք բերելու գործում, ոգտակար է համարվում ժամանակակից մեթոդիստների կողմից 1-ին աստիճանի բոլոր դասարանների համար, վորովհետև այդ դեպքում աշակերտը բոլոր ժամանակ իր աչքի առաջ ունենում է միմիայն անսխալ տեսքը, նրա աչքն ու ձեռքը վարժվում են միմիայն ուղիղ գրելու մեջ։ Բայց, ի հարկե, վորքան բարձր է դասարանը, այնքան էլ ավելի ժամանակամիջոց է հատկացվում ավելի բարդ և ինքնուրույն աշխատանքների համար (մանավանդ 3-րդ և 4-րդ խմբերում)։

Չի բացատրում նմանապես և թելադրությունը իր տարբեր տեսակներով.—նախապատրաստական, ստուգողական, ինքնաթելադրություն (անգիր գրելը)։ Թելադրության համար չեն թույլատրվում առանձին նախապատրաստություններ, վորն ավելի լավ կլինի կիրառել 3-րդ և 4-րդ դասարաններում, ինչպես նաև ստուգողական թելադրությունը։ Ազատ թելադրության ժամանակ նյութը նախապես մշակվում է ուղղագրության տեսակետից և չի թելադրվում առանձին

նախադասությունների, այլ աշակերտները գրում են այն, ինչ վոր կարողացան հիշել, միայն թե չպիտի խեղաթյուրեն նախադասության իմաստը։ Ազատ թելադրությունը փոխարկվում է ստեղծագործական թելադրության։

Անհատական գրավոր աշխատանքները լավ է սկսել 2-րդ դասարանի 2-րդ սեմեստրից։ Այդ ժամանակաշրջանում արդեն աշակերտների մեջ առաջ է գալիս ուղղագրական ունակությունների մի ամբողջ կոմպլեքս, վորին բավականաչափ նպաստում է լեզվի վրա կատարած դիտողությունների լայնածավալ շրջանը։ Ծրագրում ցույց են տրված 1-ին ստիճանի բարձր դասարանների համար անհատական աշխատանքների տեսակները։

Այդ դասարանների աշակերտները պիտի սովորեն ոգտվել ուղղագրական բառարանից։ Ուղղագրության ուսուցման դժվար կողմերից մեկն էլ հանդիսանում է սխալների ուղղումը։ Այդ հարցի առթիվ ժամանակակից մանկավարժների մեջ գոյություն ունեն տարբեր կարծիքներ։ Գոյություն ունեն նաև իսկ այնպիսի կարծիքներ, թե „ամեն տեսակի ուղղումներն էլ արմատացնում են անգրագիտություն“։

Վորպես կանոն, սխալը պիտի անմիջապես բացատրվի։ Այրբենական խմբում նպատակահարմար է սխալ գրված բառը միանգամային ասացնել և վրայից գրել ուղիղ ձևով։

Հանձնարարվում է այդպիսի ուղղումն կատարել բուն հնարավորության խնամքով, վորպեսզի աշակերտի աշխատանքը չտուժի մաքրության և գեղեցկության տեսակետից։

Ուղղագրական կանոնների կատարման հետ միասին, ուսուցիչը միևնույն ժամանակ աշակերտների ուշադրությունը դարձնում է և կանոնների վրա։

Հարկավոր է դիտակցանակություն մշակել ուղղագրության մեջ, կապակցել գենետական—մորֆոլոգիական պահերը կանոնների դիտելիքների հետ։

Բարձր խմբերում թույլատրվում է ընդգծել սխալները և ուղղել սխալը գունավոր մատիտով։ Ապա դասարանում գրավոր աշխատանքների սխալներն ուղղելու ժամանակ ուսուցիչն ասում է. „գտեք „աշակերտ“ բառը։ Ո՞ւմ տեսքում այդ բառն ընդգծված է։ Ինչո՞ւմն է քո սխալը“։

Քանի վոր այդ բառը գրավոր աշխատանքների ժամանակ կամ արտասանված է յեղել վանկերով կամ գրված գրատախտակի վրա (սխալները գրավորի մեջ տեսում են մինչև 2-րդ ստիճանը), աշակերտը, հաճախ, իսկույն և յեթ

գտնում է սխալը և տեղն ու տեղը վերականգնում բառի ուղիղ պատկերը, գրելով այն մի անգամ „սխալների ուղղումն“ վերնագրի տակ։ Հաճախ կրկնվող սխալները ի մի յեն խմբվում և հատուկ աշխատանքներ են կատարվում դժվար բառերի համար։ Ցածր դասարանների աշխատանքները ուղղվում են դասարանում։ Ուսուցիչն ուղղում է սխալները հենց աշխատանքի ընթացքում, շրջելով դասարանը։

Դասագրքերում կան գործնական և գեղարվեստական հոդվածներ։ Այդ հոդվածների ընթերցման ձևերը միատեսակ չպիտի լինեն։ Գեղարվեստական հոդվածները կարդացվում են առանց ստորաբաժանումների՝ ընդհանուրից դեպի մասնավոր։ Հակառակ դեպքում կարող է կորչել տպավորության ամբողջությունը։ Գործնական հոդվածները կարդացվում են ստորաբաժանումներով՝ մասնավորից դեպի ընդհանուրը։ Այդ ձևերը գործադրվում են համաձայն աշակերտների տարիքին։ Հնարավոր են և հակառակ ձևերը՝ ամբողջական ընթերցանություն։ Յերեխաները նրանցից համապատասխան յեղրակացություններ են դուրս բերում, նշում են, վոր նրանք նոր բան սովորեցին, վորը դեռ չգիտեյին։ Բայց չի կարելի մի ընդհանուր կանոն առաջարկել ընթերցման համար, վորովհետև հոդվածի բովանդակության մեջ կարող են պատահել տարբեր մոտեցումներ պահանջող առանձնահատկություններ։ Պատմվածքները որինակ, նույնիսկ յեթե նրանք գեղարվեստական են լինեն, բայց ընդարձակ և բարդ բովանդակությամբ, կարող են նույնպես կարդացվել ստորաբաժանումներով՝ մասնավորից դեպի ընդհանուրը, նամանավանդ, յեթե նրանք կարդացվում են 1-ին ստիճանի դասարաններում և դասարանն էլ ընթերցման մեջ թույլ է։

Այդպիսի հոդվածը պիտի ամբողջապես կարդա ուսուցիչը։ Վոտանավորները նախ կարդում է ուսուցիչը, տալով արտահայտիչ ընթերցման որինակ։ Նրանց ընթերցումը պիտի տա աշակերտներին գեղարվեստական պատկերներ և զգացմունքներ։ Ընթերցանության սովորական դասերին, յերբեմն պիտի կատարվեն լուռ ընթերցումներ բազմազանության համար, տրվում են վորոշ առաջադրություններ.—ընտրել հոդվածից այս կամ այն կտորը, գտնել այս կամ այն հարցի պատասխանը, դիտողություն կատարել լեզվի կազմության վրա և այլն։

Կարելի չե մոցնել նախորոք մշակված հոդվածների ընթերցումն, որոնք լրացնում են աշակերտների արդեն ունեցած տեղեկութիւնները մի որևե հարցի առթիվ։ Համապատասխան հոդվածը արվում է աշակերտների սկզբնական նախապատրաստման համար։ Ապա աշակերտները նշում են այն նորութիւնը, որ նրանք իմացան այդ հոդվածից, և տալիս են աշակերտների կողմից արտահայտիչ և իմաստալից ընթերցման գնահատականը։

Գրքի նշանակութիւնը, որպես գիտելիքների լրացուցիչ աղբյուրի, և նրա վրա ինքնուրույն աշխատանքներ կատարելու տեսակետից 3-րդ և 4-րդ դասարաններում, քանի գնում աճում և ուսուցիչը մեծ ուշադրութիւն է հատկացնում ինքնուրույն ընթերցանութեան, գրքից ոգտվելու հմտութիւններ մշակելու հարցերին։

ՄԱՏԵՄԱՏԻԿԱ

Ներածական բացատրութիւն

Տարրական դպրոցի ուսուցման հինգ տարվա ընթացքում աշակերտը պիտի ձեռք բերի հետևյալ վորոշ և հաստատուն գիտելիքներն ու ունակութիւնները։—

1. Հաստատուն գիտելիքներ և ունակութիւններ թվաբանական 4 գործողութիւնների կատարման մեջ ամբողջ թվերով, վորպես վերացական, այնպես էլ անվանական՝ ամեն տեսակի մեծութեան։

2. Հաստատուն գիտելիքներ՝ մետրական չափերի (գծային, քառակուսի և խորանարդ) և հաստատուն գործնական ունակութիւններ՝ այդ չափերից ոգտվելու մեջ։

3. Նախնական տեղեկութիւններ՝ տոմսորդական և հասարակ կոտորակների մասին։

4. Ամենատարրական տեղեկութիւններ՝ գիտական յերկրաչափութիւնից, կապակցելով այն աշխատանքի, չափելու և գծագրութեան հետ։

5. Կարողանալ լուծել խնդիրներ՝ ամբողջ. և կոտորակային թվերով։

Բացի դրանից դպրոցը թվաբանական գիտելիքներն աշխարհագրութեան հետ կապելով պիտի տա գիտելիքներ՝ տարական ռազմական գիտելիքների շրջանից, որոնք են.— կարողանալ ոգտվել մասշտաբից, եկկերից (հեռաչափ գործիք), դաշտային կարկինից, ճանաչել մի քանի ռազմա—տոպոգրաֆիական (տեղագրական) պայմանական նշանները և կարողանալ գծել տեղի ամենապարզ քարտեզը։

Տարրական դպրոցի մաթեմատիկայի ամբողջ դասընթացքի մեջ ամբողջ թվերի թվաբանութիւնը պիտի գրավին կենտրոնական տեղը։ Այդ տոպարիզում աշակերտների գիտելիքներն ու ունակութիւնները պիտի լինեն առանձնապես հաստատուն և հիմնական։ Դասընթացքը պիտի հայտնի չափով էլ ամբողջացած լինի։

Այդ նպատակով էլ նոր ծրագրում հատուկ ուշադրութիւն և դարձվում՝ խնդիրների լուծման, բանավոր հաշվի ունակութիւնների զարգացման, տարբեր մաթեմա-

տիկական վարժութիւնների պրակտիկայի—թվական որիշնակների լուծման և մաթեմատիկական չափերի վրա։ Աշխատանք՝ դիդակտիկ նյութի վրա, գործնական աշխատանքներ՝ չափելու, կշռելու, նախագծեր կազմելու և գծագրելու վրա։ Վորպես հատատուն ունակութիւններ մշակելու կարեվոր պահանջի՝ մտցվում են և աշակերտական դրավոր ինքնուրույն աշխատանքներ՝դասարանային և տնային։ Աշակերտների մեջ դիտակցական աշխատանքն ապահովելու նպատակով՝ ինքնուրույն աշխատանքներ կատարելու ժամանակ, ուսուցիչը պետք է տա սկզբնական մանրամասն բացատրութիւններ։

Խնդիրների դերի, տեղի և քնութեի վերաբերյալ հարցերում պիտի առաջնորդվել հետևյալ նկատառումներով.

1) Խնդիրները պիտի հանդիսանան վորպես մի կոնկրետ ձև՝ մաթեմատիկան կապելու կյանքի և սոցիալիստական շինարարութեան հետ։

2) Խնդիրների բովանդակութիւնը պիտի ընդգրկեն այնպիսի հարցեր, վորպիսին են սոցիալիստական շինարարութեան հարցերը, սոցիալիստական շինարարութեան հնգամյակի վերաբերյալ թվական տվյալները, մանուկների հասարակական աշխատանքները դպրոցում և դպրոցից դուրս, մանկական աշխատանքի կազմակերպումն, մանկական խաղերի և զվարճութիւնները կազմակերպումն։

3) Խնդիրները պիտի լինեն կենսական և աշակերտների հասկացողութիւններին մատչելի։

4) Խնդիրների բարդացումն պիտի համապատասխանի մաթեմատիկական հասկացողութիւնների բարդացմանը, վորոնց հետ աշակերտները ծանոթանում են վորոշ սիստեմով թվաբանութեան դասընթացքն անցնելու ժամանակ, պահպանելով խիստ հետևողականութեյուն՝ հեշտից դեպի դժվորը և պարզից դեպի բարդն անցնելու մեջ։

Յերևելով այն սկզբունքային դրութիւններից, թե՝ մաթեմատիկան պիտի մանուկներին նպատակ քանակական կապեր և կախումներ սահմանելու առարկաների և կենսական յերևույթների մեջև և ճշտութեյամբ արտահայտելու նրանց՝ թվերի ոգնութեյամբ, սովորեցնի աշակերտներին ոգտվելու թվերից և չափերից, վորպես միջոցի՝ շրջապատի իրականութեյունը ճանաչելու համար, սոցիալիստական շինարարութեյան գործն ըմբռնելու համար, վորպես միջոց՝ աշակերտների ամենալավ կերպով հասարակական աշխատանքներին

մասնակցելու համար և նախապատրաստելու նրանց յերկրի պաշտպանութեյան գործին, ուսուցիչը պիտի իր աշխատանքները մաթեմատիկայից ամենասերտ կերպով կապի ուսուցման մյուս առարկաների և դպրոցի ուսումնական ու դաստիարակչական նպատակներին յենթարկվող հասարակակարտադրողական աշխատանքների հետ։

Այս փոխադարձ կապը կոնկրետ ձևով կազմվում և հետևյալ կարգով։ Ուսուցման մյուս առարկաները նյութ են տալիս՝ խնդիրների, մաթեմատիկական ունակութիւնների գործնականապես կիրառման համար և դրդում են ձեռք բերելու մաթեմատիկայից նոր գիտելիքներ և ունակութիւններ։ Իր հերթին, քնագիտութեյան, հասարակագիտութեյան և այլն, նյութերի մաթեմատիկական մշակումները նպատակում են ավելի պարզորեն և ճշտորեն ուսումնասիրելու այդ առարկաների քովանդակութիւնը կազմող յերևույթները։

Մյուս առարկաների հետ կապ սահմանելու ժամանակ պիտի վորոշ կերպով ի նկատ ունենալ, վոր այդ կապը պիտ խստորեն անցկացնվի աշակերտների ունեցած թվական գիտելիքների և ունակութիւնների շրջանակների մեջ։

Ուսման վորակի՝ և արմատական թերութեյան վերացման՝ համար պայքարը պահանջում է կիրառել ծրագրային նյութի և նրա մշակման դասավանդութեյունը՝ հետևողականորեն և խիստ սիստեմատիկորեն անցկացնելու սկզբունքների տակ, պահպանելով նյութի դասավորութեյան բոլոր ատիճանների հատատուն յուրացման դիդակտիկ և մեթոդական պահանջները, իրենց հաջորդականութեյան կարգով։

Գիտութեյունների հիմունքների յուրացման հատատունութեյունը անխուսափելիորեն հարց է դնում ուսուցչի առաջ դասավանդման մեթոդների ռացիոնալացման մասին։ Լայն կերպով կիրառելով գնահատական և կոնկրետ ձևերը ուսուցման ժամանակ և կիրառելով գրաֆիկ մեթոդը, միևնույն ժամանակ ուսուցիչը չպետք է աչքաթող անի աշխատանքի ակտիվացումն կենսական յերևույթների մաթեմատիկական վերլուծութեյունների միջոցներով, աշխատանքի մեջ թվական ցուցանիշներ գտնելով (որինակ՝ բերքատվութեյան քանակը, կատարած աշխատանքների նորման և այլն), խնդիրները կազմելը և նրանց լուծումն։

Ծրագրի գնահատական յերկրաչափութեյան բաժնից տարրական տեղեկութեյուններ ծավալելու ժամանակ տարրական

դպրոցի խնդիրը լինելու յ՛ե՝ զաղափար տալ աշակերտներին յերկրաչափական ձևերի մասին, զարգացնել նրանց մեջ տարածութիւնների զաղափարը, զարգացնել կառուցողական ընդունակութիւնները։

Ծանոթութիւնը յերկրաչափական նյութի մասին պիտի սերտ կերպով կապակցվի թվաբանութեան բաժինների հետ, աշխատանքի դասի հետ, չափողական և գծագրական ունակութիւնները ձեռք բերելու հետ։

ԾՐԱԳԻՐ
ՄԱՏԵՄԱՏԻԿԱՅԻ։
ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԽՈՒՄԲ

Պարզել յերեխաների ունեցած հասկացողութիւնները թվերի, տարածութիւնների և ժամանակի մասին։

Կարողանալ հաշվել՝ մեկից մինչև 10-ը և յետ հաշվել 10-ից մինչև մեկը։ Ծանոթութիւն թվանշանների մասին։ Թվերի և թվանշանների կարդալու և գրելու ունակութիւն 10-ի շրջանում։ Գումարումն և հանումն 10-ի շրջանում։ Ծանոթութիւն նշանների հետ. + (գումարում), — (հանում), = (հավասարութեան նշան)։ Հաշվել մեկից մինչև 20 և յետ 20-ից մինչև 1։

Թվակարգ 20-ի շրջանում, Թվերի դրութիւնը և նրանց ընթերցումը։

Գումարումն և հանումն 20-ի շրջանում։ Բազմապատկումն 20-ի շրջանում։ Բազմապատկման և բաժանման նշանները։ $^1/_2$, $^1/_4$ մասերը։ Գտնել թվի կեսը, քառորդը։

Հաշվել մինչև 100 և յետ՝ 100-ից մինչև 1—զույգ երով և հնգյակներով։

Գումարումն և հանումն կլոր տասնյակներով։

Գումարումն և հանումն 100-ի շրջանում—համապատասխան թվանշանների գումարը 10-ից վեր չանցկացնելով (որ՝ 24 + 33, 35 + 22)։ Ծանոթութիւն չափերի մասին.— կիլոգրամ, կես կիլոգրամ։

Մետր, սանտիմետր։ Նրանցով ոգտվելու ձևը։ Լիտր։ Առարկաների կշիռը և պարունակութիւնը վորոշելու աշխատանքներ։ Ժամանակի չափերը։ Ծանոթութիւն ժամացույցի մասին։ Վորոշել ժամանակը։ Ժամ, րոպե որ։

Բանավոր հաշիվ ամբողջ տարվա ընթացքում։

Յերկրաչափական նյութեր.— Ծանոթութիւն ձևերի մասին, քառակուսի, ուղղանկյուն, յեռանկյուն, շրջան։ Միջավայրում նրանց գտնելու կարողութիւն։

Ուղիղ և կոր գծերը, կարողանալ նրանց տարբերել իրարից, ճիշտ կերպով վորոշել ուղիղ և կոր գծերը շրջապատի միջավայրում։

ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲ

Թվակարգի կրկնութիւնը 100-ի շրջանում։ Գումարումն և հանումն 100-ի շրջանում—բոլոր դեպքերը։

Անվանական թվերի գումարումն և հանումն՝ յերկանվանի թվերով, որինակ.—մանեթներ և կոպեկներ, մետրեր և սանտիմետրեր, որեր և ժամեր, ժամեր և րոպեներ։

Բազմապատկումն և բաժանումն 100-ի շրջանում. առաջին շրջան՝ բազմապատկման աղյուսակը և բաժանումն 5-ի, 2-ի, 4-ի 3-ի վրա։

Յերկրորդ շրջան՝ 6-ի, 9-ի, 7-ի վրա։ Աղյուսակից դուրս բազմապատկումն ու բաժանումը. յերկանիշ թիվը բազմապատկել միանիշով և միանիշը՝ յերկանիշով։ Յերկանիշ թիվը բաժանել միանիշ և յերկանիշ թվերի վրա։ Բաժանումը մնացորդներով։

Զորս գործողութիւնը 100-ի շրջանում։ $^1/_2$, $^1/_4$, $^1/_8$ մասերը։ Միատեսակ մասերի գումարումը։

Բանավոր և գրավոր թվակարգ 1000-ի շրջանում։

Գումարումն և հանումն 1000-ի շրջանում համրիչի վրա և գրավոր։

Անվանական թվերի գումարումն՝ յերկանվանի թվերով (2 մն. 30 կոպ. և 1 մն. 20 կոպ. 1մետր 50 ս/մ. և 2 մետր 30 ս/մ. 2 ժամ 40 րոպե և 3 ժ. 30 րոպե)։

Բազմապատկումն 1000-ի շրջանում աճող կարգով։—

Բազմապատկումն կլոր տասնյակների և հարյուրյակների՝ միանիշ թվերով. բազմապատկումն յերկանիշ և յեռանիշ թվերի՝ միանիշ թվերով։

Բաժանումն 1000-ի շրջանում հետևյալ կարգով.—

Յեռանիշ թվերի բաժանումն միանիշ թվերի վրա— մնացորդով և առանց մնացորդի։ Յեռանիշ թվերի բաժանումն կլոր տասնյակների վրա։

Մասերը. ծանոթություն $^1/_2$, $^1/_4$, $^1/_8$ մասերի հետ։ Միատեսակ մասերի գումարումն և հանումն։ Գտնել թվերի մեկ մասերը (24-ի $^1/_2$-ը, 36-ի $^1/_4$-ը, 48-ի $^1/_8$-ը)։

Բանավոր հաշիվ ամբողջ տարվա ընթացքում։ Խնդիրների լուծումն։

Երկրաչափական նյութեր։—Ուղիղ և կոր գիծ։ Ծանոթություն մետրի, սանտիմետրի մասին։ Նրանցից ոգտվելը չափելու ժամանակ։ Ուղիղ գիծ անցկացնելը և չափելը նրանց ոգնությամբ։ Ծանոթություն կիլոգրամի, լիտրի մասին (բաժանումներով)։ Ծանոթություն մարմինների հետ, խորանարդ, բրուս (քառանկյունի կոճ), կլոր կոճղ։ Կարողանալ տարբերել և գտնել համապատասխան ձևերը շրջապատում։

Քառակուսի։ Բաժանումն ըստ դիագոնալների, նկարներ։ Կապել այդ ունակությունը աշխարհագրական նյութի հետ—վորոշել յերկրի կողմերը։

Չափելը և գծագրելը։ Աշխատանքներ՝ տարածությունը մոտավոր կերպով վորոշելու վերաբերյալ (քայլաչափով)։ Շրջան։ Շրջանի բաժանումը։ Պատրաստել ցիֆերբլատ սլաքներով։ Ծանոթություն կիլոմետրի մասին։ Կիլոմետրը չափելը։

Ուղիղ գիծը վորոշելը թելի ոգնությամբ և չափելը։

Ծանոթություն ամենապարզ դիագրամների մասին։

ՅԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Բազմապատկումն և բաժանումն 1000-ի շրջանում ամեն տեսակի թվերով։ Յերկանիշ թվերի բազմապատկումը յերկանիշ թվերով, յեռանիշ թվերի բաժանումը յերկանիշ և յեռանիշ թվերի վրա։

Բազմապատկության տուեզումը բաժանումներով և բաժանման տուեզումը բազմապատկմամբ։ Թվերի մեծացումն և փոքրացումն մի քանի անգամ։ Յերկանիշի անվանական թվերի բազմապատկումը և բաժանումը։

Աշխատանք համրիչի վրա։ Խնդիրների լուծումն։ Ժամանակի չափերը—դար, տարի, ամիս, որ, ժամ, րոպե, վարկյան։

Կրկնել չորս գործողությունները 1000-ի շրջանում։

Բանավոր և գրավոր թվակարգը մինչև 1.000.000. Թվերի բաժանումը դասերի և կարգերի։

Կարողանալ կարդալ թիվը, հաշվել համրիչի վրա և գրել թվանշանությամբ։

Գումարումն և հանումն միլիոնի շրջանում։ Գումարման և հանման թվերի անունները—գումարելիներ և գումար, նվազելի, հանելի և տարբերություն։

Բազմանիշ թվերի բազմապատկումն.—բազմանիշը՝ միանիշով, զերոներ ունեցող միավորով, կլոր տասնյակներով, մեկ զերոյով վերջացող յերկանիշ թվով։ Բազմապատկման թվերն անունները—բազմապատկելի, բազմապատկիչ արտադրյալ։

Բազմանիշ թվերի բաժանումը միանիշ թվերի վրա, զերոյով վերջացող միավորի վրա, կլոր տասնյակների վրա յերկանիշ թվերի վրա։ Բաժանման թվերի անունները—բաժանելի, բաժանարար, քանորդ։

Յերկարության չափերը (կիլոմետր, մետր և նրա մասերը). Ծանրության չափեր (տոն, ցենտներ կիլոգրամ). հեղուկների և տարածության չափեր։

Սովորական կոտորակներ. մասեր՝ $^1/_2$, $^1/_4$, $^1/_8$, $^1/_5$, $^1/_{10}$։ Համեմատել կոտորակների մեծությունը միանման և բազմապատիկ հայտարարներով (ամենապարզ դեպքերը)։ Միատեսակ մասերի գումարումն և հանումն։ Թվի մի մասը գտնելը։

Բանավոր հաշիվ, բանավոր գումարման և հանման պարզագույն ձևերը 1000-ի շրջանում—ամեն տեսակ թվերով։ Խնդիրների լուծումն։

Յերկրաչափական նյութեր.—Գծեր անցկացնելու և չափելու վերաբերյալ աշխատանքների շարունակություն։ Պատրաստի հատակագիծ կազմելը։ Ծանոթություն մատշարի մասին։ Տարբական աշխատանքներ չափելու և քառակուսիներով հաշվելու վրա։ Քառակուսի չափեր։ Փայլիկ ուղղանկյուն տարածության չափերը։

Ուղղանկյան կողմերի և անկյունների հատկությունները։ Ուղղանկյան գծագրումը։

Տարածության չափերը։ Ուղղանկյուն հղաժասերի պատկերի գծագրումը.—այգու, պարտիզի, բակի, հրապարակի։

ՅԵՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Անցածի կրկնությունն 1.000.000-ի շրջանում։ Ամբողջ թվերի բազմապատկումը վերացական թվերով միլիոնի շրջանում. — Բազմանիշ թվերի բազմապատկումը բազմանիշ թվերով, մեջ առը զերո ունեցող թվերով։ Բազմանիշ թվերի բաժանումը յեռանիշ թվերի վրա։

Աշխատանք համբիչի վրա։

Փակագծերի գործածությունը թվերի դումարը և տարբերությունը դուրս բերելու դեպքում։

Գործողություններ անվանական թվերով (2 անուններով)։

Տասնորդական կոտորակներ։ Նրանց պրիմ և կարդալը։ Տասնորդական կոտորակների կարգալը բան բաղյուտրական տեսակետից։ Տասնորդական կոտորակների հատկությունը։ Տասնորդական և հարյուրերորդական մասերը՝ մանեթի, մետրի։ Տասնորդական և 100-յերորդական մասերի պատկերատորումը դիագրամների ոգնությամբ։ Տասնորդական կոտորակների նշանակումը միատեսակ մասերով։ Տասնորդական կոտորակների կրճատումը։

Տասնորդական կոտորակների դումարումն և հանումն։

Անվանական թվերի գրանցումը՝ արտահայտված տասնորդական կոտորակների ձևով մետրական չափերի մեջ։

Հասարակ կոտորակներ։ Կրկնությունը։ Մասերի վերածումը։ Միատեսակ և բազմապատկիչ մասերի գումարումն ու հանումը։ Գտնել ամբողջի մեկ և մի քանի մասերը (յերկու գործողությամբ)։

Համեմատություն տասկոտների մասին։ Տոկոսների գրելու ձևը։ Բանավոր հաշիվ ամբողջ տասվա բազմապատիկ։ Բանավոր հաշիվի ձևերը։ Խնդիրների լուծումը։

Յերկրաչափական նյութեր։ — Աշխատանք գծագրի վրա։ Գծերի յերկարության չափելը։ Ուղիղ գծի անցկացնելը թելի միջոցով։

Ուղիղ գծերի բաժանումը հարյուր։ Վարժություններ տարածության աչքաչափական գնահատման մեջ։ Գետնի մեջ ուղղահայաց ցցած ձողի ստվերի չափման վրա դիտողություններ։ Ստվերի կեսորայի գծի ուղղությունը (մեջ աշխարհագրական միջօրեականի)։ Արև, հեռաստղի չափերը։

Գետակուտ, ուղղանկյան կառուցումը նկիների ոգնությամբ։ Ուղղանկյուն զուգահեռանիստ գծելը մասշտաբով։

Գետակուտ։ Նրա կողմերի և անկյունների հատատարությունը։ Հիմնական ծանոթությունն մակերևույթի չափերի միավորների մասին (քառակուսի մետր, քառակուսի դեցիմետր, քառակուսի սանտիմետր, այլ, հեկտար)։

Ուղղանկյան մակերեսի չափելը։ Ուղղանկյուն-հավասարապես բռնած տարածության մակերևույթի հաշվելը ըստ պլանի և ավյալ մասշտաբի։

Աշխատանքի հետ կապված սխեմատիկ գծագրություններով օգտվելու կարողություն աշխատանքային անհրաժեշտում։

Մասշտաբով օգտվելու կարողության պլաններ և քարտեզներ գծելու ժամանակ։

Ամենապարզ դրաֆիկներ կազմելը (կոտրված ոդի ջերմության վրա դիտողությունների հետ)։

ՉՈՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Բազմանիշ թվերով գործողությունների կրկնությունն։

Խնդիրների լուծումը։ Բանավոր հաշիվ։ Գտնել անհայտ թիվը գումարման և հանման ժամանակ միացած հատանիների թիվը գումարման և հանման ժամանակ միացած հատանիների թիվը գումարման և հանման ժամանակ միացած հատանիների

Տառերգական կատարակներով գրված անվանական թվերի վերածումն և անդրադարձումն: Խնդիրների լուծումն: Ամբողջական հարյուրյակներից դուրս բերել մեկ և մի քանի տասնյակներ:

Ամեն մեծության ամբողջ թվերից դուրս բերել մի քանի տասնյակներ: Տասնյակների վերջի թվերի փոխանակումը միավորի մասերով ընդհակառակը. — $100^0/_0$ — 1, $75^0/_0$ — $^3/_4$, $50^0/_0$ — $^1/_2$, $25^0/_0$ — $^1/_4$, $20^0/_0$ — $^1/_5$, $10^0/_0$ — $^1/_{10}$: Խնդիրների լուծումն՝ տրտարգծելով այդ աղյուսակը:

Հատարակ կատարակներ: Գրել և կարդալ հատարակ կատարակներ միաչափ համարիչներով և միաչափ հայտարարներով: Տառն թիվ և անվանական կատարակ: Կանոնավոր և անկանոն կատարակներ:

Տառը թիվը դարձնել անկանոն կատարակ: Անկանոն կատարակից հանել ամբողջ թիվ-կատարակների կրճատումը: Հատարակ կատարակների գումարումն և հանումն՝ միանման բազմապատիկ հայտարարներով, և տարբեր հայտարարներով (ամենապարզ դեպքերը): Հատարակ կատարակների բազմապատկումն և բաժանումն ամբողջի վրա: Գտնել ամբողջը մասերի օգնությամբ: Հատարակ կատարակների վերածումն տասնորդական կատարակների (ամենապարզ դեպքերը): Խնդիրների լուծումն:

Երկրաչափական նյութեր: Ծանոթություն քառանկյան մասին: Ուղղանկյան չափերը: Ծավալ և մակերես:

Ուղղանկյուն պրիզմա: Նրա մակերեսույթի և ծավալի չափերը: Ուղղանկյուն հոդամասերի պատրաստելը:

Տեղագիտական (տոպոգրաֆիական) պայմանական նշանները տարածության պլանը կազմելու ժամանակ, տասնյակ տարբ անհարթությունները:

Յևռանկյուն: Նրանց տեսակները ըստ անկյունների և կողմերի: Յևռանկյունու մակերեսույթը: Հավասարժեք պլանը ամենապարզ մակերեսով հատակ մեսուի շրջապատի օգնությամբ՝ ըստ գիտնականների, եկեղեցի օգնությամբ:

Շրջագիծ, կենտրոն, շառավիղ, տրամագիծ: Շրջագծի բաժանումը 4, 8, 3, 6, մասերի: Շրջագծի բաժանումը 360 աստիճանների: Անկյունաչափ և նրա գործածությունը: Շրջագծի փոխհարաբերությունը տրամագծի հետ: Ուժի (ներգիայի) և կարողության չափերը. ձիու ուժ:

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ:

ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԽՈՒՄԲ

Յերեխաները նոր միայն գալիս են գիտության նոր պայմանների հետ, գալու գիտական կարգ ու կանոնների հետ: Հենց դրա հետ էլ կապված պիտի կատարել թվաբանության առաջին դասերը: Պարզելու համար յերեխաների պիտանիքները հաշվելու գործում, պիտի առաջարկել նրանցից յուրաքանչյուրին համարել պատահականները, դասարանի պատահանները, ձեռքերը տալ մի քանի մատիտներ և այլն:

Յանկալի չե սկզբից հաշվել առարկայական թվերով վերցնելով այն դպրոցական պարագաներից: Առաջին շրջանում հաշիվը տարվում է միավորներով— ուղիղ հաշվելով մինչև 3, 5, 8, 10:

Ուսուցիչը միաժամանակ դիտում և նշանակում է յերեխաներից յուրաքանչյուրի ունեցած պիտանիքները հաշվելու մեջ:

Յերկու-յերեք որից հետո, յերբ մանուկները բավականաչափ վարժվում են առարկայական հաշվի մեջ, հարկավոր է անցնել արդեն վերացական թվերի: Հետագայում պիտի առաջարկել յերեխաներին հաշվել իրենց ընտանիքի անդամներին՝ իրենց յերեխաներին, քույրերին: Իրենց տները նկարելու ժամանակ յերեխաները պատում են թե քանի կով, յեզը, գոմեշ, ձի ունեն իրենք: Կոլեկտիվների յերեխաները պատում են թե ինչքան անասուններ կան իրենց կոլեկտիվում՝ հաշվելով առանձին տեսակների քանակը, գումարները (տրակտորներ), ացլեր և այլ տեսակի բնավանասուններ:

Պարապմունքների 3-րդ—4-րդ որերին կարելի չե յերեխաներին ծանոթացնել թվանշանների հետ (համեմատական), + և = նշանների հետ կարելի չե սկզբից առաջարկել մանուկներից վերև և ներքև (ցանկապատներ միջև էլ կդնվեն), նրանց պրի անցնել այդ հաշիվը, ինչ ձևով նա այդ իրեն անհրաժեշտ է: Ապա այդ անում է ինքը՝ ուսուցիչը: Ըրինակ՝ նա պրում է գրատախտակի վրա իր թիկունքը մյուս կողմը, պարզ և կարելուն չափ պիտիկներ ||| + | = ||||:

Ապա ցույց տալով գրածը մատիտով կամ փայտիկով՝ արտասանում է գրածը—յերեք և մեկ կլինի չորս:

Դրանից հետո հարկավոր է 3-4 յերեխաների առանձին առանձին, կամրացնել ասլ այդ հաշիվը։ Պիտի պահանջվի, վոր մանուկները կարդան (անվանեն) միայն այն, ինչ վոր ցույց է տալիս ուսուցիչը։ Հետո անհրաժեշտ է բոլոր յերեխաներին խմբովին կրկնել ասլ այդ։ Ամրական պատասխանների ժամանակ ուսուցիչը պիտի հետևի, վոր մանուկների ձայները բաժան—բաժան չլինեն։ Իսկ այդ ամբողջովին կախված է ուսուցչից, նրա ակտիվությունից։

Հարկավոր է պահանջել, վոր յերեխաները անվանեն միայն այն, ինչ վոր ցույց է տալիս ուսուցիչը։ Սակայն, վոր բոլորն էլ պատասխանեն միասին՝ հետ չմնալով իրարից կամ առաջ չվազելով։ Յուրաքանչյուր ասլ հարկավոր է առանց շտապելու, ընդմիջումներով։ Այդպիսով յերեխաները կունենան անհրաժեշտ ընդմիջումները։

Դրանից էլ յերեխաների մեջ աստիճանաբար մշակվում է անհրաժեշտ սովոր՝ իմբական պատասխանների ժամանակ։

Զրույցների ժամանակ պիտի յերեխաների մեջ արմատացնել, պատվաստել հետևյալ հատկություններ՝ „շատ“, „քիչ“, „բարձր“, „ցածր“, „մեծ“, „փոքր“։ Նկատված է, վոր 7-8 տարեկան յերեխաներն այնքան էլ չեն տարբերում այդ հատկություններ։ Թվերի հետ ծանոթացնելու ժամանակ ի նկատի պիտի ունենալ յերկու մոմենտ.—5-ի շրջան և 10-ի շրջան։ Այդ ծանոթությունը կազմված է հետևյալ էլեմենտներից.—1) Գազափար թվի մասին, 2) Նրա տարրալուծումը, 3) Լրացումն մինչև ավյալ թիվը, 4) Նրա չափելը՝ զույգ-զույգ, յերեք-յերեք, հինգ-հինգ, չորս-չորս հաշվելով։

Մեծությունները համեմատելու ժամանակ կարելի չի դիմել հետևյալ միջոցներին. մի ձողիկով չափել յերկարությունն ու բարձրությունը՝ պրասեղանների, սեղանների նստարանների, աշակերտների հասակի։ Բաժակով կարելի չի չափել՝ շշերի, կուժերի (մանր), կոճղանների պարունակությունը։

Սկզբում յերեխաները վարժություններ են կատարում հաշվի մեջ, ավելացնելով կամ պակասեցնելով մի մի միավորներով։ Ապա անցնում են առաջ և յետ հաշվելուն 10-ի շրջանում զույգերով (յերկու-յերկու), յերեք-յերեք, հինգ-հինգ։ Վարպետ ուժանդակից պիտանի չքներ դրա համար, կարող են ծառայել լուցկիները, քնարչյները, լորու հատիկները,

վորոշ յերկարության ձողիկները—պատրաստված յերեխաների ձեռքով աշխատանքի դասերին և այլն։

Հաշվի նյութ կարող են ծառայել նաև միատեսակ առարկաներ։ Թուամարման և հանման գործողություններ։ Կատարվում են մի շարք փորձեր, վորանց մեջ պիտի զուգադիպվեն միատեսակ առարկաների քանակին մի այլ քանակություն։ Որինակ՝ քանի ընկույզ (ձողիկ, լուցկի, հատիկ) կանհրանա, յերթե յերկու ընկույզին ավելացնենք եւս մեկը, յերկուսը, յերեքին՝ յերկուսը, հնդին՝ յերկուսը։ Յերեխաները, յերկուսը, յերեքին՝ յերկուսը, հնդին՝ յերկուսը։ Յերեխաները նախ լուծում են բանավոր կերպով, ապա գրում իրանները նախ լուծում են բանավոր կերպով, ապա գրում են պրասախտակի վրա և տետրներում։

Յերեխաները ծանոթանում են նաև հանման հետ։ Այս դեպքում անհրաժեշտ է պահպանել խիստ հաջորդականություն դժվարության աստիճանների մեջ.—այն դեպքերը, յերբ չնչո՛ր թիվը զուգադրվում է մեծ թիվը, կամ յերբ յերբ չնչո՛ր թիվն զուգադրվում է մեծ թիվը, կամ յերբ հանելին ավելի մեծ է տարբերությունից, պիտի հետաձգել հանելին ավելի մեծ է տարբերությունից, պիտի հետաձգել ավելի ուշ ժամանակվին, յերբ յերեխաները բավականաչափ ավելի ուշ ժամանակվին, յերբ յերեխաները բավականաչափ յուրացրած կլինեն այդ գործողությունները ավելի պարզ յուրացրած կլինեն այդ գործողությունները ավելի պարզ պրինակների և խնդիրների միջոցով։

Սկզբում դրավոր հաշիվը կատարվում է հատիկական թվանշանների, վորպես ամենապարզ ձևը գծագրության թվանշանների, վորպես ամենապարզ ձևը գծագրության համար՝ հետևյալ կերպով.—I, II, III, IV, V, VI, VII, VIII, IX և X։ Այս դեպքում չի խորհուրդ բացատրել յերեխաներին, վոր V թվանշանը պատկերացնում է մեր ձեռքի դաստակը (թաթը) առանձնացրած բոլոր մատի հետ։

Հետո յերեխաներն աստիճանաբար ծանոթանում են ժամանակակից (արաբական) թվանշանների հետ, հետևյալ հաջորդականությամբ.—1, 4, 6, 9, 7, 5, 3, 8, 2.

Բազմապատկման և բաժանման հետ յերեխաները ծանոթանում են իմբական հաշիվներով, որինակ՝ 2+2+2 = 2×3, 3+3+3= 3×3. Բազմապատկման հետ միաժամանակ սկսվում է և բաժանումը։ Նեմանապես և աշխատանք և հաշ

վերամ պիտի պահանջվի, որ նրանք չափեն միաչափ քայլերով։

Մեծերի մասերից յերեխաները ծանոթանում են $^1/_2$-ի, $^1/_4$-ի հետ, ծանոթանում են կիլոգրամի հետ։ Գումարումն և հանումն 20-ի շրջանում նախ կատարվում են առանց անցնելու տասնյակներից (10+3, 10+5), ապա անցնելով տասնյակներից (9+2, 8+3), (13—2, 15—4 11—2, 12—3)։ Ոգտակար և կիրառել տարածության չափումը նախ աչքի չափով, ապա ստուգել հետևանքը՝ չափելով մետրով։

Բազմապատկման և բաժանման ժամանակ առաջնորդվել վերոհիշյալ հետևողականությամբ։ Բաժանման ժամանակ տարբերել մասերի բաժանման դեպքերը քան բովանդակության բաժանումից։ Կլոր տասնյակներով հաշվելու ժամանակ պիտի ազատվել ձողիկներից, լուցկիներից և այլն վրանք կապված պիտի լինեն 10-10 հատ ամեն մեկում։ Խնդիրները կազմվում են ուսուցչի կողմից, քաղվում են ձեռքի տակ ունեցած գրառություններից։ Կազմվում են յերեխաների կողմից՝ ուսուցչի ղեկավարությամբ։

Յերկրաչափական նյութերն անցնելու ժամանակ չափազանց անելի կլինի ոգտվել „գրատպաններ“ խաղից։

ՏԵՍԱԿԱՆԸ ԳՈՐԾՆԱԿԱՆԻ ՀԵՏ ԿԱՊԱԿՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՅՈՒԹԵՐ

Ուսուցման 1-ին տարվա համար (այբբենական խումբ)։

Սովորեցնել յերեխաներին կողմնորոշվել տարածության մեջ։ Քանակները պիտի իմանան իրենց բնակարանի հատկին, սան և պարտքի վրա տեղ գանվելը այլ շենքերի հետ մեծատության (աջից, ձախից, դեմից, կողքին և այլն), տարրականների համեմատական մեծությունը աչքի չափով (մեծ վազը, բարձր, ցածր)։ Նյութեր հավաքելը այդ նպատակով ավելի հեշտ և եքսկուրսիաների ժամանակ։ Ապա յերեխաների հետ հաշիվներ կատարել պես-պես տարրականների վերաբերյալ առաջին տասնյակի շրջանում։ Պիտի հանդարել այն տարրականները, որոնց հետ գործ ունեն մանուկները, կամ անհրաժեշտ են իրենց շուրջը — գրատեղանները, աթոռները, նստարանները, մահճակալները, սեղանները, աշակերտների քանակը և այլն։ Հաշիվների հետ հարկավոր է կապել մասնավորական խաղերը, որոնց կարելի է բազմազան

ձևեր տալ, սովորեցնելով յերեխաներին վոչ միայն հաշիվներ կատարելու, խաղերի ժամանակ, այլ և դասարանական նրանց մեջ պլանավորելու, չափելու հմտությունն։ Մասնավորական ունակությունների սիստեմին յենթարկվող այդ խաղերը կարելի յե բաժանել մի քանի տեսակների՝ այն ունակությունների տեսակետից, որոնք տալու յեն առանձին խաղերը։—

1) Հաշիվ և տարրական պլանավորման վարժություններ,—„լոտո“, „կոոպերատիվ“ “բանակ“ խաղերը. զանազանման և հանման գործողությունների մեքենայացումը 20-ի սահմանում քանակների ոգնությամբ. հաշիվներ „տուգզզաման“ տոմսակներով (կոնվերտների մեջ) քառակուսիների վրա գրված նշաններով, և այլն։

2) Կառուցողական բնույթի խաղեր.—ա) յերկրաչափական ձևերից զանազան կառույցներ կազմելը, բ) լուցկիներից և ձողիկներից ձևեր կազմելը, գ) նրանց արտահայտումն տետրների մեջ, դ) նկարների և տառերի դասավորելը պլակատների վրա։ Այդ խաղերը, բացի ընդհանուր զարգացումից, տալիս են և նյութեր խնդիրների համար։ Բացի դրանից խնդիրների համար իրրև նյութ կարող են ծառայել այսպիսի թեմաները.—Զանազան նախահաշիվներ մանուկների կյանքի և ուսման վերաբերյալ, հաճախման հաշվառումն, ուսումնական պիտույքների հաշվառումն (դասարանում ունեցած), հաշիվներ՝ մեքենայական աշխատանքի առավելությունը յուրյուր տիպ—անհատական աշխատանքի համեմատ համաձայն կոլեկտի, տվյալի, գործարանի կամ ֆաբրիկայի տվյալների։

Անհրաժեշտ և (բուն հետազոտության) այդ հաշիվների կամ տուգզումների արդյունքները արտահայտել պարզ դիագրամների ձևով։

Ուսուցման 1-ին տարվա խնդիրները պիտի պարզ ձև ունենան և նրանց պլանը՝ մեկ կամ յերկու գործողություններից կազմված։

ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲ.

Պարապմունքների սկզբնական շրջանում հարկավոր և կրկնել տալ նախորդ տարվա ընթացքում անցած նյութերը, այսինքն՝ չորս գործողությունները 20-ի շրջանում և կլոր տասնյակներով 100-ի շրջանում։

Հետո անցնել ուղիղ և յետ հաշիվներին 100-ի շրջանում միավորներով, տասկերով և հնդյակներով։

Գումարման և հանման ժամանակ պիտի հետևողականություն պահպանել՝ նախ առանց անցնելու տասնյակներից (24+5, 32+13, 48—6, 55—22), ապա արդեն անցնելով տասնյակներից (25+8, 32—16)։ Գումարման և հանման որինակների և խնդիրների լուծումն 100-ի շրջանում։ Այս շրջանում մտցնել գործողություններ անվանական թվերով (ոչ ավելի յերկու անվանական թվերից)։

Խնդիրները պիտի կազմված լինեն ոչ ավելի քան 2 հարցից։ Գեանի վրա անցկացնել ուղիղ գիծ և չափել այն՝ ձողիկներ անելով։ Չափել մետրով, լարով գրանցել։

Չափել պատուհակի, դուլի, քիոսկի (յեղիպատացորենի) պարունակությունը լիտրերով։ Մեկ լիտր հասկի, ընկույզի և այլն կշիռը,—գրանցել։ Խնդիրների համար այսպես նյութ ծառայել կարող և (սովխոզ, կոլխոզ, անհատական) ընկույզի, յեղիպատացորենի, լոբիայի, ծխախոտի բերքահավաքը։ (Կշռել մի շարք (թել) ամման և մի շարք արապիտն ծխախոտ—համեմատել)։ Ծանոթացնել յերեխաներին ժամացույցի հետ։ Տալ ունակություն՝ ժամացույցի վրա ժամանակը վորոշելու մեջ։ Գծագրել շրջան, պատրաստել ժամացույց։ Այս դեպքում անհրաժեշտ և յերեխաներին ծանոթացնել հռոմեական թվանշանների հետ մինչև 20-ը։ Որեր։ Աշխատանքի, քնի և հանգստյան ժամերը։

Հետագայում, յերբ մանուկները կարողանան հաշվել տարվա ամիսները և ամսվա որերը, պիտի տալ նրանց լուծելու ժամանակի վերաբերյալ խնդիրներ։ Խնդիրների նյութը վերցնել պղրոցի, կոլխոզի, դյուղի կյանքից։

Բազմապատկումն 100-ի շրջանում անցնելիս պիտի առաջնորդվել պարզից դեպի բարդին անցնելու կանոնով։ Նախ անցնել բազմապատկման աղյուսակի կարգով (2×9, 9×2, 7×6, 8×7), ապա անցնել յերկանիշ թիվը միանիշ թվի վրա բազմապատկելուն։ Միանիշների բազմապատկումն ամրապնդելու համար հանձնարարվում և կազմել տալ Պյոթագորոսի աղյուսակը։ Բազմապատկումից հետո անցնել բաժանման գործողությանը։

Մոտավորապես 1-ին սեմեստրի վերջում, կամ 2-րդ սեմեստրի սկզբում հարկավոր և ծանոթացնել յերեխաներին պլանի (պարզ) գծագրության հետ։ Վորպես օբյեկտներ կարող են ծառայել դասարանը, պղրոցի բակը, տան բակը

կամ նրա մի վորոշ մասը, այգու, կոլխոզի տարածության վորոշ մասը։ Քառակուսի, ուղղանկյուն, յերանկյունի, նրանց տարբերությունը։ Համեմատել քառակուսիի կողմերը՝ չափելով այն։ Ավելի ուշ գաղափար տալ քառանկյունի տարածության չափի մասին, չափելով այն քառակուսիով (վորպես չափի միավոր), վորոշել տետրի թերթի բռնած տարածությունը, սեղանի յերեսը, գրատախտակը և այլն։ Կազմել գործնական խնդիրներ ըստ այդ ավյալների։

Յերկարություններ չափելու ժամանակ ծանոթացնել $^1/_2$, $^1/_4$, $^1/_8$ մասերի հետ։ $^1/_2$ մասը վերածել $^1/_4$-ի և $^1/_8$-ի։ Կատարել մասերի գումարումն և հանումն։ Հենց այստեղել գտնել թվերի մասերը՝ 28-ի $^1/_2$-ը, 44-ի $^1/_4$-ը, 56-ի $^1/_8$-ը, և այլն։

1000-ի շրջանում թվերի վրա աշխատանքները պիտի տարվեն հետևյալ հաջորդականությամբ. 1) Գործողություններ 1000-ի շրջանում կլոր հարյուրյակներով. 2) Գործողություններ կլոր տասնյակներով (այս դեպքում բազմապատկել յերկանիշ և յեռանիշ թվերը միանիշ թվերով, (50×9, 150×6), բաժանել յեռանիշ թիվը միանիշ թվի վրա (480:4-ի, 6-ի 8-ի վրա)։

Հետո բազմապատկել յերկանիշ թիվը միանիշ թվով (58×2,×5,×6), բաժանել յեռանիշ թիվը միանիշ թվի վրա՝ մնացորդով և առանց մնացորդի (245:5, 824:4, 824:6, 824:8, 322:4=80 և 2 մնացորդ, 545:4, 545:6 և այլն)։ Ուսման տարին ավարտել բազմապատկելով յերկանիշ թիվը կլոր տասնյակներով (32×30, 26×40) և բաժանելով յեռանիշ թիվը կլոր տասնյակների վրա (550:50, 640:40, 20-ի, 80-ի վրա և այլն)։

1000-ի շրջանում թվերի վրա աշխատանքներ կատարելիս յերեխաներին պիտի ծանոթացնել յերկաթուղայի չափերի հետ.—ամառիմեար, կիլոմետր և նրանց հարաբերությունը միմյանց հետ։ Մանուկներին սովորեցնել դրամանիշների արժեքը.—մանր դրամներ, 1 ռուբ. 3,5 ռուբ. մեկ չերվոնեց։ Կարողանալ մանրացնել դրամը, հաշվել մանր դրամները և այլն։

Պարզ խնդիրներ՝ յերկու կամ ամենաշատը յերեք գործողությամբ։ Ամբողջ տարվա ընթացքում անպայման սովորեցնել յերեխաներին արագ հաշիվներ կատարել։

Գործողությունները կատարել՝ գրելով մի տոզի վրա.— 255:5=51, բայց վոչ մի դեպքում այսպիսիներով՝ $\begin{array}{r} 25 \\ +44 \end{array}$ $\begin{array}{r} 23 \\ \times\ 4 \end{array}$

վերջին ձևով գրելու դեպքում յերեխաները չեն կարող սովորել բանավոր հաշիվներ անել, իսկ այդ անհրաժեշտ է։

Ծամանակի չափերով գործողություններ կատարելիս պիտի ընդգծել աշխատանքային օրերի տևողությունը ցավրյոմի ժամանակ և խորհրդային կառավարության օրերում։

Ամբողջ տարվա ընթացքում առանձնապես ուշադրություն դարձնել բանավոր հաշիվների վրա։

Հաշիվներ կատարել մեքենայական աշխատանքների առավելությունների մասին՝ ձեռքի աշխատանքի համեմատությամբ, կոլեկտիվ աշխատանքների առավելությունների մասին անհատականի համեմատությամբ։

Պ ի տ ու յ ք ն ե ր.—առևտրական և շվեդական համրիչներ, կլոզերամ, գրամ, 10, 100, 200, 500 գրամ, մետր գծային բաժանումներով, լիտր, $^1/_2$ լիտր։

ՅԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Դասընթացքն անցնելու ժամանակ պահպանել խիստ հաջորդականություն, ամրիճանալով բարդացնելով աշխատանքի նյութը։

Տարվա սկզբին կրկնել (համառոտ) բոլոր գործողությունները 1000-ի շրջանում անցյալ տարվա 2-րդ սեմեստրի ծավալով։ Գումարման գործողությունների մեջ մրցեցնել այնպիսի դեպքեր, յերբ յեռանիշ թվերին գումարվում են միանիշ, յերկանիշ, յեռանիշ թվեր և գումարն ստացվում է վոչ կլոր տասնյակներով, որինակ՝ 124+2, 132+42, 156+132 և այլն։

Հանման գործողությունների մեջ մտցնել այնպիսի դեպքեր, յերբ յեռանիշ թվերից հանվում են միանիշ, յերկանիշ, յեռանիշ թվեր առանց փոխ առնելու տասնավորից կամ հարյուրավորից, որինակ՝ 128—4, 256—24, 378—256 և այլն։ Աշխատանքներ համրիչի վրա։ Գումարման և հանման որինակներ վերացական և անվանական թվերով, որինակ՝ 142+56, 458—36, 5մ. 25 կոպ. + 12մ. 32 կոպ. 12 մետր 75 սմ.—9 մետր 50սմ. և այլն։

Դեպքեր՝ յերբ յեռանիշ թվերին գումարվում են միանիշ, յերկանիշ և յեռանիշ թվեր և գումարվում է կլոր տասնյակներ, հարյուրյակներ, որինակ՝ 178+2, 264+236 և այլն։

Դեպքեր՝ յերբ ամբողջ տասնյակներից, հարյուրյակներից հանվում են միանիշ, յերկանիշ և յեռանիշ թվեր, որինակ՝ 250—3, 480—56, 900—175 և այլն։ Հաշիվներ գրամներով, որինակ՝ մանրացնել 1 մանեթանոցը, 5 մ. 10 մ. ավելի մանր գրամների։ Ստացված մանրի („խուրդայի") գումարը պարզել լրացման մեթոդով։ Դեպքեր՝ յերբ միավորների գումարն անցնում է տասից, տասնյակների գումարն անցնում է հարյուրից, որինակ՝ 176+9, 239+47, 56+378 և այլն։ Դեպքեր՝ յերբ հանման ժամանակ փոխ ենք առնում հարյուրավորներից, տասնավորներից, որինակ՝ 184—7, 131—35, 263—156 և այլն։ Ուշադրություն և դարձվում վերջում կամ մեջտեղը 0 ունեցող թվերից հանման գործողություններ կատարելու վրա, որինակ՝ 406—282, 760—378 և այլն։

Իրրև պիտույքներ՝ կարող են ծառայել ռուսական համրիչները։ Ծանոթություն ժամանակի չափերի մասին։ Տարի։ Ամիս։ Ամիսների տևողությունը օրերով։ Որ, ժամ, րոպե, վայրկյան։ Կլոր տասնյակների բազմապատկումը միանիշ թվերով, որինակ՝ 20×4, 60×7, 90×4. Կլոր տասնյակների բաժանումը միանիշ թվի վրա, որինակ՝ 240:6, 320:8, 720:9 և այլն։

Յերկանիշ թվերի բազմապատկումը միանիշներով, որինակ՝ 24×6, 65×6, 96×9. Յեռանիշ թվերի բաժանումը միանիշների վրա՝ յերբ քանորդում ստացվում են յերկանիշ թվեր, որինակ՝ 144:6, 576:8, 384:4. Յեռանիշ թվերի բազմապատկումը միանիշներով, որինակ՝ 124×4, 305×3. Յեռանիշ թվերի բաժանումը միանիշների վրա՝ քանորդում յեռանիշ թվեր ստանալու պայմանով, որինակ՝ 204:2, 496:4 և այլն

Գծագրել արկ, հեկտարի պլանը։

Բազմապատկումն 0-ով վերջացող յերկանիշ թվերով, որինակ՝ 12×40, 24×30. Մեծացնել թիվը 10, 100 անգամ։

Բաժանումն կլոր տասնյակների վրա, որինակ՝ 960:40, 810:90. Փոքրացնել թիվը 10, 100 անգամ։ Յեռանիշ թիվը արտահայտել կլոր տասնյակներով, հարյուրյակներով, որինակ 565=56$^1/_2$ տասնյակի։ Կազմել ընտանիքի ժյուջեն մի տարով։ Յերկանիշ թվերի բազմապատկումն յերկանիշներով,

որինակ՝ 12×12, 15×15, 24×18. Ճեռանիշ թվերի բաժանումն յերկանիշների վրա՝ քանորդում սառնալով յերկանիշ թվեր, որինակ՝ 144:12, 324:18, 625:25. Գործողությունները կատարելու կրճատ ձևերը, որինակ՝ $24\times25=\frac{24\times100}{4}=$ 600 կամ $29\times13=30\times13-(1\times13)=377$. Թվակարգ մինչև մեկ միլիոն: Անվանական թվերով աշխատանքներին պիտի նախորդեն վերացական թվերով աշխատանքները: Այս կանոնը պիտի պահպանել աշխատանքի բոլոր ետապներում ամբողջ տարվա ընթացքում:

1000-ի շրջանում կատարած աշխատանքները պիտի ամփոփել՝ ծանոթացնելով աշակերտներին հաշվելու հեշտ ձևերի հետ (մասամբ վորպես կրկնություն), որինակ՝ $(25\times19)=(25\times20-25)$, $(48\times18)=(48\times20-96)$ և այլն:

Մեկ միլիոնի շրջանում թվակարգն անցնելու հետ միաժամանակ պիտի անցնել և թվերի բաժանումը դասերի և կարգերի:

Հարկավոր է կանգ առնել ամեն տեսակի բազմանիշ թվերի դրավոր արտահայտման յուրացման վրա՝ թելադրության միջոցով: Մեծ ուշադրություն դարձնել թվերի առևտրական համրիչներ ունենալը: Ցանկալի է դրանցից մի քանի հատ ունենալ յուրաքանչյուր դասարանի համար: Այսուհետև հանձնարարվում է գործողությունները կատարել գրելով վոչ թե մի տողի վրա, այլ սյունյակներով, նախ այնպիսի թվերը, վորոնց գումարման ժամանակ միավորների գումարը չանցնի տասնյակից, և հանման ժամանակ՝ տասնավորներից կամ հարյուրավորներից փոխ առնելու կարիք չլինի ($6325+3573$), ($9765-7532$), իսկ հետո բարդացնելով տալ միավորների գումարը տասնյակից և հարյուրյակից անցնող թվեր: Սրա հետ միաժամանակ յերեխաներին ծանոթացնել գումարման գործողությունները հանման միջոցով և հանման գործողությունները գումարման միջոցով ստուգման հետ: Նույնը ի նկատի ունենալ և հետագա աշխատանքների մեջ բազմապատկման և բաժանման գործողությունների վերաբերյալ: Գործողություն կատարող և հետևանք արտահայտող թվերի անունները.—գումարելիներ, գումար. նվազելի, հանելի, տարբերություն. բազմապատկելի, բազմապատկիչ, արտադրյալ. բաժանելի, բաժանարար, քանորդ: Բազմապատկման

ժամանակ սահմանափակվել միանիշ մի քանի զերո ունեցող (մինչև 3 զերո) միավորների և կլոր տասնյակների բազմապատկիչներով (որինակ՝ 9-ով, 10-ով, 100-ով, 1000-ով, 60-ով և այլն): Բաժանման ժամանակ՝ բաժանարարը լինի միանիշ, զերոներ ունեցող միավոր և կլոր տասնյակներ (որինակ՝ 8-ի վրա, 10-ի, 100-ի, 1000-ի վրա, 70-ի վրա):

Տարածությունները չափելու ժամանակ անպայման պիտի ծանոթացնել արկ, հեկտարի հետ: Գծագրության կամ ուղղանկյուններ կերտելու ժամանակ ծանոթացնել ուղիղ, բութ և սուր անկյունների հետ: Համեմատել այդ անկյուններն իրար հետ: Ուղիղ անկյան տարբերությունը մյուսներից: Նշել ուղղանկյան կողմերի և անկյունագծերի (դիագոնալների) հատկությունները: Կատարել այդ գիտողական ձևով՝ մի կեսը մյուսի վրա դնելով չափել: Հարկավոր է ծանոթություն տալ ժամանակի չափերի մասին.—տարի, ամիսներ, նրանց հաջորդականությունը նրանք բաժանումը ըստ տարվա յեղանակների, որերի քանակը յուրաքանչյուր ամսվա մեջ, որեր, ժամեր, րոպեներ, վայրկյաններ: Գործնական խնդիրների լուծումն ժամանակի չափերի վերաբերյալ:

Տարվա մեջ վարժություններ կատարել նախահաշիվներ և հաշիվներ կազմելու մեջ՝ գրավոր և բանավոր. որինակ՝ կազմել մեկ աշակերտի տարեկան ծախսերի նախահաշիվը, ամբողջ դպրոցի տարեկան ծախսերի նախահաշիվը (դյուղական փոքրիկ դպրոցի համար): Խնդիրներ կազմելու և լուծելու համար ավյալները վերցնել դպրոցի և դյուղի շրջապատի իրականությունից:

Ամբողջ տարվա ընթացքում առանձին ուշադրություն դարձնել խնդիրներ և թվական որինակներ լուծելու վրա: Խնդիրները կազմված պիտի լինեն վոչ ավելի, քան 3—4 գործողություններից (պարզ), ավելի հաճախ՝ յերկու գործողություններից: Անվանական թվերով խնդիրները կազմել թուլյատրվում և ամենաշատը յերկու անուններից բաղկացած, բացառիկ դեպքերում թուլյատրվում է 3 անուններից:

Ուսումնական տարվա ընթացքում վարժություններ կատարել արագ հաշիվներ անելու մեջ:

Ձգտել ի չարը զործ դնել թվաբանական գործողությունների գրավոր հաշիվները այնտեղ՝ ուր կարելի է

կիրառել բանավոր հաշվի ունակությունները։ Ամեն մի հնարավոր դեպքում բանավոր հաշիվը պիտի զերազատել գրավորից։

ՆՅՈՒԹԵՐ՝ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՌԱՋԻՆ ՅԵՎ ՅԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԵՐ

Հաշիվները՝ յերեխաների կուլտուրական ժամանցի կազմակերպության առթիվ.—Դուրս գրել մանկական լրագրերներ, ամսագրերը, գրքեր, հաշվել՝ սայլակներ, խաղալիքներ շինելու համար կատարած աշխատանքների արժեքը։ Հաշվել՝ աշխատանքային անհյակում կատարած աշխատանքների համար գործադրած նյութերն ու ժամանակի ուղղությունը։

Հաշվել լուսամուտի՝ վորպես լույսի աղբյուրի համեմատական մեծությունը դասարանի հատակի տարածության հետ. վորքան խորանարդ ոդ է ընկնում մի աշակերտին։ Համեմատել նորմալի հետ. դուս բերել շեղումները՝ նորմալի դեմ, հաշվել յերեխաների ծախսած ժամանակը՝ ուտելու, քնելու և հանգստյան վրա։ Զարկել մանուկների հասակը և կշիռը։ Կազմել սեզորայքի նախահաշիվ դպրոցական դեղատուն կազմակերպելու համար։

Տարին բաժանել 4 յեղանակների՝ գարուն, ամառ, աշուն ձմեռ, դուրս բերելով արև, ամպամած, ցուրտ որերի ընդհանուր թիվը։ Յերեկվա և գիշերվա ուղղության փոփոխությունը. ոդի ջերմության փոփոխությունը որվա ընթացքում։ Ոդի ջերմության ազդեցությունը տարբեր բույսերի աճման վրա։

Վորոշել մեքենայական աշխատանքի առավելությունը ձեռքի աշխատանքի հանդեպ. չափել հողաբաժին տարածության և նրա մշակման վրա մեքենայի գործադրած ժամանակի ուղղությունը. հաշվել թե ինչու մեքենայով կատարած աշխատանքը եժան և նաուսմ. մեքենայի կատարած աշխատանքի նորման. համեմատել իրար հետ մեքենայական և ձեռքի աշխատանքների ուղղությունը։ Կոլեկտիվ և անհատական աշխատանքներ (համեմատության դնել). հաշիվներ կատարել ընտրովի սերմերի և նրանց ածման ունակությունների վերաբերյալ (բերել պարզ որինակներ). Սերմերը քննելու նախահաշիվներ կազմել. ընտանի կենդանիների և թռչունների որական կերի կարիքը։

Կողմնորոշում՝ ժամանակի և տարածության մեջ. կազմել ժամանակի ուղղության հաշիվներ փոխադրության տարբեր միջոցների վերաբերյալ.—վոտքով, ձիով, ավտոմոբիլով, յերկաթուղիով, ոդանավով։

Կազմել այսնականավոր դիագրամներ՝ վորպես զանազան հաշիվների արդյունքների գրաֆիկ ձևակերպումներ։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

ՅԵՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ.

Ուսումնական ծրագրները այնպես են կարգադրված, վոր՝ ամբողջ մանկավարժական պրոցեսը պիտի կառուցված լինի ուսուցումն արտադրական աշխատանքների հետ կապելու վրա, վորպեսզի յերեխաները գործնականում կիրառած գիտելիքների և ունակությունների հիման վրա կարողանան ամիջական մասնակցություն ցույց տալ սոցիալիստական շինարարության մեջ։ Մաթեմատիկայի վերաբերյալ նպատակ է դրվում յերեխաներին սովորեցնելու վոչ միայն հաշվելու տեխնիկան, այլ և սովորեցնելու նրանց ոգտագործել մաթեմատիկան՝ պատրաստի ավյալների և մաթեմատիկական կանոնների վրա հիմնված կոնկրետ հարցերի լուծման ժամանակ։ Այդպիսի խնդիրներն ըստ իրենց բովանդակության, առնվում են գիտելիքների, տեխնիկայի, արտադրության, առևտրության, արդյունաբերության բազմապիսի բնագավառներից այն պայմանով, վոր նրանք մանուկների հասկացողությանը մատչելի լինեն, հետաքրքիր և իրատեսական։ Մաթեմատիկական նյութերի առանձնահատկությունը, յերրորդ խմբում, մասամբ ընդորոշվում և հենց ունակությունների ձավալով։

Ընդունելով հաշվային աղյուսակներից ոգտվելու հակայական նշանակությունը ծրագրի առաջին բաժնում (ժամանակի վերաբերյալ հաշիվները), հանձնարարվում է ոգտվել աղյուսակներից տարվա մեջ յերկու ավյալ ամսաթվերի միջանկյալ որերի թիվը (քանակը) վորոշելու համար։ Ուսումնական տարվա տևողությունը հաշվելով 225 աշխատանական տարվա տևողությունը հաշվելով 225 աշխատանքային որ, հանձնարարվում է աշակերտներին հաշվել տալ որացույցի վրա (7-որյակի հաշվով) դպրոցական և հանգստյան որերի քանակը և կազմել տալ իրենց դասարանի համար աշխատանքային որերի որացույց ամբողջ ուսումնական տարվա վերաբերյալ։ դասախրատչական նպատակ-

ներով ժամանակի վատնումների դեմ պայքարելու համար կոլեկտիվ ուժով հավաքել ավյալներ և հաշվել՝ քանի քանի աշխատանքային որ և կորչում աշակերտների անկազմակերպության պատճառով, չեթե իրենց տեղերը բռնելու համար (դասից հետո) յուրաքանչյուր դասից առաջ կորչում է . . . . . րոպե, աշխատանքի մեջ ընդմիջումների վրա, կավիճի, սրբիչի բացակայության պատճառով, սխոլաքների վոչ էր ժամանակին բաժանելու պատճառով՝ . . . . . րոպե և այլն, աշխատանքային որվա տևողությունը հաշվելով 5 ժամ։

Ծրագրի 2-րդ բաժնում՝ աչքի չափով տարածությունները վորոշելու համար կատարած գործնական վարժությունների մեջ հանձնարարվում է նեռել տալ վայտ կամ քար՝ յերեխաների ուժերին համապատասխան, վորի համար դպրոցի բակում 50—60 քայլ տարածության վրա հարկավոր է տնկել ձողիկներ տանական քայլ երարից հետու. Նախ նեռել աչ ձեռքով. քարի ընկած տեղը նշանակել, հաշվել այդ տարածությունը և գրել աշխատանքային տետրում։ վարժությունները կրկնվում են ձախ ձեռքով։ Տետրում նշանակված արդյունքները հետագայում ոգտագործվում են դիագրաններ կազմելու համար։

Ծրագրի 3-րդ բաժնում թվերը կլոր դեսմարների վերածելու վարժությունների մեջ համձնարարվում է ոգտվել ստատիստիկական ավյալներից Սբերաղիայի վերաբերյալ։

Ծրագրի 4-րդ բաժնում բանավոր գումարման հեշտացրած ձևեր են արվում հետևյալ տեսակի թվերի համար.— 1) Չեթե նրանք բաղկացած են մի կարգի միավորներից, որինակ՝ $200+500$, $4000+5000$, $2000+3000$. 2) յերը գումարելիներից մեկը „կլոր“ թիվ է, այլինքն բաղկացած է մի կարգի միավորներից միայն, որինակ՝ $300+426$, $5000+375$, $4000+3752$. 3) յերը գումարելիներից մեկը մոտիկ է „կլոր“ թվին, որինակ՝ $398+355$, $396+425$, $799+236$. 4) յերը գումարելիները մի քանի հատ են և հարմար կլինի նրանց մեջ փոխադրություններ կատարել, որինակ՝ $52+320+48=52+48+320$.

5-րդ բաժնում բանավոր բազմապատկման հեշտացրած ձևերի կարգին են պատկանում թվերի բազմապատկումը 5-ով, յերը 5 բազմապատկիչը փոխարինում ենք 10-ով և ստացած արտադրյալը բաժանում 2-ի (կես ենք անում)-որինակ՝ $168\times5=(168\times10):2$ կամ թեչև բազմապատ-

կելին նախ կես ենք անում և վերջից ավելացնում զերս, որինակ՝ $474\times5=(474:2)\times10=2370$. Թվերի բազմապատկումը 9-ով, յերը թիվը բազմապատկում ենք 10-ով և արտադրյալից հանում բազմապատկելին, որինակ՝ $37\times9=(37\times10)-37=333$, կամ $112\times9=(112\times10)-112=1120-112=1008$. Բազմապատկումը 25-ով, յերը թիվը բազմապատկում ենք 100-ով և բաժանում 4-ի վրա, կամ նախ բազմապատկելին բաժանում ենք 4-ի վրա և վերջից ավելացնում 2 զերս, որինակ՝ $64\times25=(64\times100):4=6400:4=1600$, կամ $(64:4)\times100=1600$. անվանական թվերով գործնական վարժություններ կատարելուց հետո, յերը այդ լավ յուրացնեն աշակերտները, հանձնարարվում է մշակել դեպի կոլխոզը կատարած եքսկուրսիաների ժամանակ ձեռք բերած նյութերը, որինակ՝ հաշվել մի հեկտար ծխախոտի մշակությունը.—

ԾԱԽՔ.	ՄՈՒՏՔ.
Գարնան հերկի արժեքը (2 անգամ) . . մեթ.	Ծխախոտի ընդհանուր բերքի արժեքը մեկ հեկտարից (քան տեսակները)։
Տափանելը	
Շիթիլի արժեքը . . .	
Պարարտացումն . . .	
Տնկելը (սպրելը) . .	
Թորխելը (3 անգամ) . .	Հաշվել զուտ յեկամուտը
Տերևների քաղը . . .	
Բժշկելը	
Շարքը	
Զորացնելը	

կամ

Մեկ հեկտար լյուֆֆայի մշակության հաշիվը.—

ԾԱԽՔ.	ՄՈՒՏՔ.
Մեկ հեկտարի հերկը (18 սմ. խորությ.) . . .	Ընդհանուր բերքը, յերե մինչեն հաշվով 16կգ. ոդմած հակի մեջ (դենգ) լինում և 100 հատ լյուֆֆա (մաշալկա).
Մարդեր պատրաստելը և սպրելը	
Սերմերի արժեքը . . .	
Ցանքը (հատով և կուլտիվատորով)	հակի արժեքը . . . .
Ջրելը	մեկ հատ լյուֆֆայի արժեքը . . . . .

Զողերի վրա փաթաթելը (стеллаж) { Զողերի արժեքը / յողեղնի „ . . / յերկաթալարի „

Զողերի վրա կապելը և կապիչների արժեքը . Մաքուր յեկամուտը

Թորխելը (քաղհան)—2 անգամ . . . . . .

Խնամք սեելյաժի վրա .

Պատուղների քաղը . . .

Լյուֆֆայի մշակումը .

Սրա հետ միաժամանակ տեղին կլինի ծանոթացնել աշակերտներին բերքի հաշվեցուցակի հետ.—

Հացահատիկների անունները	ցանված է		հավաքած է		Ցանքի տարածությունը.
	Ցերը	Ինչքան	Ցերը	Ինչքան	
Ցեղիպտացորեն	1/V	48 կգ.	25/VII	3360 կգ.	1 հեկտար
Գետնախնձոր .	10/V	240 կգ.	15/VIII	2240 կգ.	$^1/_2$ „
Ցորեն և այլն.					

ու հաշիվներ են արվում աճման ժամանակաշրջանի վերաբերյալ ամեն մշակույթի համար և վորոշում բերքատվությունը յեվնելով մեկ հեկտարից։

Առանձնապես ուշադրություն դարձնել խնդիրների լուծման վրա։ Կենսական—գործնական խնդիրների շարքին են դասվում հետևյալ հաշվառումները՝ վորքան աշխատավոր և լծկան ուժ և պահանջվում ամյալ հողամասի մշակման համար, ինչքան արդյունք են տալիս մի ջին հաշվով—կովը, վոչխարը և այլ ընտանի կենդանիները, ինչքան կեր և հարկավոր (տարբեր տեսակներից) բոլոր ընտանի կենդանիների համար կոլխոզում (սովխոզում) և ինչքան կերի պաշար կա։

Այս բաժնի ծրագրային նյութը հնարավորություն է տալիս կատարելու վարժություններ (ոգտվելով մասշտաբից) և վորոշելու քարտեզի վրա իրենց բնակության տեղի հեռավորությունը խոշոր կենտրոններից, վորոշելու գետերի

յերկարությունը, յերկաթուղու գծի յերկարությունը։ Հաշվիչներ կատարել՝ նամակներ, դրամական փոխադրություններ, ծանրոցներ, հեռագրերներ և այլն ուղարկելու առթիվ, ոգտվելով փոստա-հեռագրական գրասենյակի տեղեկագրից։

Ծրագրի 6-րդ բաժնում—„տանտերդական կոոպերակների գումարումն և հանումն“ անցնելիս հանձնարարվում են՝ տանտերդական կոոպերակների և գործողությունների հետևանքների գրաֆիկ ձևերը. որինակ՝ նկարում ենք մի քառակուսի, վորի կողմերը հետո բաժանում ենք 10 հավասար մասերի, ստանում ենք 100 հատ փոքրիկ քառակուսիներ, մեկ փոքրիկ քառակուսին կազմում է մեծ քառակուսու մեկ հարյուրերորդ մասը (0,01). ամեն մի շերտը (շարքը) բաղկացած է 10 փոքրիկ քառակուսիներից և կազմում է մեծ քառակուսու մեկ տասներորդ մասը (0,1)։ Վարժություններ.—գծագրել 0,2 մասը (քառակուսու), 0,9. 0,03 մասերը, կամ նշանակեցեք այդպիսի մի քառակուսու վրա նրա 0,3 մասը, ավելացրեք (լրացրեք) 0,05 մասը, գրեցեք արդյունքը։ Այս ձևով էլ կատարել հանման վարժություններ։ Հանձնարարվում է վարժություններ կատարել աչքի չափով վորոշելու ուղիղ գծի յերկարությունը սանտիմետրով, միլիմետրով և սուզելու հետևանքը գծավոր քանոնի ոգնությամբ, դուրս բերելով արած շեղումները իսկական չափից։

Ծրագրի 7-րդ բաժնում քառակուսի չափերն անցնելու ժամանակ, հանձնարարվում է ոգտագործել ստատիստիկական ավյալները Աբխազիայի հողային տարածությունների մասին (մինչև հեղափոխությունը և հետո) և հողերի շերտավորումները շրջաններում ըստ կուլտուրական մշակույթների։ Ոգտագործել ձեռնարկության դրությունը պատկերացնող աղյուսակը Աբխազիայի վերաբերյալ՝ սկսած մինչպատերազմյան շրջանից, ապա իմպերիալիստական պատերազմի շրջանից, քաղաքացիական կռիվների շրջանում, տերազմի շրջանում, քաղաքացիական կռիվների շրջանում, Ժողհրդային կառավարության վերականգնման շրջանում, և ներկա տարում։

8-րդ բաժնի վերաբերյալ հանձնարարվում է.—գործնական աշխատանքներ կատարել կոլխոզի՝ կանաչեղենների, հացահատիկների և ձեռնարկի պահեստների բովանդակության վորոշելու վերաբերյալ։ Ծանոթանալով շրջապատի աշխարհի հետ, մանուկները նկատում են տարբերությունը ոչ միայն առարկաների թվի մեջ, այլ և նրանց չափերի

և ձևի մեջ։ Այդ պատճառով էլ, դաս թվաբանական, հաշվական բնույթ կրող հարցերի շարքում, մեր առաջ կանգնում են երկրաչափական հարցերը—առարկաների ձևի, նրանց գծային չափերի, տարածությունների և բովանդակության համեմատությունը։

Երկրաչափության այդ հարցերը մտնում են 1-ին տասնհինգի ծրագրի մեջ, քանի որ նրանց հետ ծանոթությունը առաջադրում է ինքը, կյանքը և քանի որ նա անհրաժեշտ է, որպես հիմնաքարը՝ երկրաչափության ուսուցման համար հետագայում։ Այստեղից չի հետևում, որ երկրաչափությունը դպրոցում պիտի կազմի մի առանձին, թվաբանությունից անկախ դասընթացք։ Երկրաչափական նյութը մշակվում և ներկապվում է ուրիշ առարկաների հետ, շրջապատի պայմանների հետ՝ բնական կապակցության կարգով։ Երկրաչափական ունակությունները յերրորդ խմբում լրացվում են ուղղահայաց և զուգահեռական գծերի գծագրությամբ՝ տարբեր դրությունների մեջ։ Աշխատանքը կատարվում է թե գործիքներով (քանոն, անկյունաչափ) և թե աչքի չափով։ Մանուկները կազմում են սենյակի, շենքի, ուղղանկյուն հողամասերի պլանները, ոգտվելով մասշտաբով, և վարժություններ են կատարում պլանը կարդալու մեջ, վոխադրելով պլանի չափերը բնական մեծության չափերի։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ՅԵՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Ինդիբներ և հաշիվներ, կապված աշխատանքների հետ՝ աշխատանքային սենյակում.—Կալկուլյացիա (գործադրված նյութերի, ժամանակի, բանվորական ուժերի, ամորտիզացիայի հաշիվները), դանազան նախահաշիվներ կազմելը՝ կապված աշխատանքների հետ աշխատանքային սենյակում։ Կարողանալ կիրառել չափային և գծագրական գործիքները աշխատանքի ժամանակ սպրդ տեխնիկական գծագրերների համար։

Կոլեկտիվ տնտեսություն, դորձարան կամ ֆաբրիկա (վորին կցված է դպրոցը)։ Արտադրության դինամիկան. պլանի գերակատարում կամ թերակատարում։ Հաշվել թե ինչպես մոլախոտերը իջեցնում են բերքատվությունը. հաշվել, բերքատվությունը վաղ և ուշ

կատարած գործերի վերաբերյալ, հաշվել և համեմատության դնել բերքատվությունը կոլխոզային և անհատական տնտեսությունների մեջ։ Վորոշել ցանքսի տարածությունը կոլխոզում չափելով ուղղանկյուն հողաբաժինները։ Կարողանալ բաժանել ուղղանկյուն հողամասը՝ հողաբաժինների, վորոշ առաջադրությունների համաձայն։ Կազմել նախահաշիվներ կոլխոզի տարբերակման համար՝ տարբեր տեսակի անհրաժեշտ շենքերով, ջերմոցներով և այլն։ Կարողանալ վճռել և կազմել թեղիրներ մեքենայական և ձեռքի աշխատանքների արտադրողականության համեմատության դնելու վերաբերյալ։ Լծակներ և հաղորդիչներ՝ վորպես ոժանդակիչ միջոցներ ուժերը շահելու համար։

Հաշիվներ կատարել նախադպրոցական ցանցի, պրոտուսի, անգրագիտության վերացման, կուլտ կրթական հիմնարկությունների ծավալման բնագավառներից։

Մասշտաբ.—կողմնորոշելու կարողություն քարտեզի վրա. կարողանալ վորոշել տարածությունը քարտեզի վրա։

Կարողանալ վճռել և կազմել ժամանակի վերաբերյալ խնդիրներ.—կարողանալ վորոշել յերկրորդ դիպվածի ժամանակը, առաջին և յերկրորդ դիպվածի միջանկյալ ժամանակը, կամ առաջին դիպվածի ժամանակը յերկու այլ տվյալների համաձայն։

Կարողանալ անցկացնել պարզ ստատիստիկական հաշվառումներ։ Ջանասեր հաշիվների դրաֆիկ ձևակերպումն այսնաձև և շրջանաձև դիագրամներով. գեղարվեստական այսնաձև և շրջանաձև դիագրամների (մի քանի աշակերտների կողմից) ձևակերպումն՝ այն առարկաների պատկերով, վորոնց ներկայացնում են նրանք։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔ

ՉՈՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Մաթեմատիկան ուսուցման 5-րդ տարում ավելի լայն կիրառություն ունի կյանքի գործնականում, վորովհետև աշակերտները իրենց ձեռքի տակ ունեն հաշվողական ունակությունների բավականաչափ պաշար։ Ուսուցման 5-րդ տարում մաթեմատիկան անցնելիս դիտողությունների հետ հավասարապես կարող են ոգտագործվել տվյալները դրքերից և լրագրներից, վորոնք արտահայտում են արդյունաբերության և գյուղական տնտեսության զարգացման ընթացքը

(օրինակ՝ խորհրդային նավթի, ցանքի կամպանիայի, կոլխոզային շինարարության մասին, ավյալ վորձառությունները արհեստական պարարտացման հարցերի վերաբերյալ, սիլոսային հորերի կամ աշատարակների մասին և այլն։)

Հաշվելու տեխնիկայի տեսակետից 1-ին ատեճանի դպրոցավարարը վոչ միայն պիտի կարողանա մի կերպ կատարել գործողությունները, այլ նա պիտի կարողանա կատարել այն լավ՝ ճիշտ հետևանք ստանալու, գործողության արագության, գործադրած միջոցների նպատակահարմարության և անտեսականության տեսակետներից։

Ծրագրի մեջ մտցվում են կենսա—գործնական խնդիրները.—հաշիվ, միանական դյուղատնտեսական հարկի չափը, կենդանի և անկենդան ինվենտարի պետական ապահովագրության չափը կոլխոզում և անհատական տնտեսության մեջ. խրճիթ-ընթերցարանի, կոլխոզի, մանկամսուրի նախահաշիվներ կազմելը։

Ինդիրներ և օրինակներ վճռելու ժամանակ հարկավոր է ոգտագործել գրքեր և լրագրային նյութեր Աբխազիայի կոլխոզային շինարարության վերաբերյալ, այն մասին, թե ինչպիսի առավելություններ ունի կոլխոզային տնտեսությունը՝ անհատական, մանր տնտեսությունների հանդեպ։ Անհրաժեշտ է սովորեցնել աշակերտներին ռուսական չափերը մետրական չափերի վերածելու վերաբերյալ ադյուսակներից ոգտվելու ձևը (առանց սովորեցնելու նախկին ռուսական չափերը)։ Ամիսների մեջին ներմուծությունը ցույց տվող գրաֆիկները պիտի կազմվեն բավականաչափ խնամքով, քառակուսի գծերով թղթի վրա, քանոնի ոգնությամբ։

Առաջին ատեճանի դպրոցավարարը պիտի դոնե մոտավոր չափով կարողանա կազմել հողաբաժնի պլանը։ Դրա համար ամենահեշտ միջոցներից մեկը, վոր կարելի է գործադրել առանց վորևե յերկրաչափական գործիքների ոգնության, բացի չափային լարից, այն է, վոր հողաբաժինը պիտի բաժանել յեռանկյունիների, չափել յուրաքանչյուր յեռանկյունու բոլոր կողմերը և այդ յեռանկյունիները նկարել թղթի վրա երար կպցրած, վորոշ մասշտաբի տակ։ Այստեղ պահանջվում է, վոր աշակերտները կարողանան կառուցել յեռանկյունիներ (յերեք կողմերով) կարկինի ոգնությամբ։ Հողաբաժնի բռնած տարածությունը հաշվել, վորպես բոլոր յեռանկյունիների տարածության գումարը։

Վորովհետև մեքենան լայն մուտք է գործել մեր կենսական գործունեության մեջ (տրակտորը, ավտոմոբիլը), ապա նրա աշխատանքի և ուժի չափերը չիմանալը, ներկայումս համարվում է ապիտություն։ Ճիշտ է, մեթոդական նկատառումներով այդ չափերի ուսուցումը, պետք է, վոր հետաձգվեր ավելի բարձր դասարանների համար, բայց պետք հաշվի առնել և այն հանգամանքը, վոր ազգաբնակչության հսկայական մասը դեռ յերկար ժամանակ իր ուսումը վերջացնելու յե 1-ին ատեճանի դպրոցով։

Այդ հիման վրա յել, կարելի յե հաշիվներ կատարել տալ, թե ինչ ուժերի յե փոխարինում տրակտորը կոլխոզում և ինչ միջոցներ է խնայում դրանով կոլխոզը (սովխոզը)։

Ուսուցման առաջին 4 տարիներում հասարակ կոտորակները պիտի անցնել այնպես, ինչպես թվերը՝ առաջին տասնյակի շրջանում, թվերի ինդիվիդուալ ուսուցման յեղանակով (մեթոդով)։ Ամեն մի կոտորակի հետ—կեսի, քառորդի և այլն,—յերեխաները ծանոթանում են առանձին-առանձին։

Կոտորակների ինդիվիդուալ ուսուցումը կազմված է հետևյալ մոմենտներից.—

1) Գաղափար տալ կոտորակի մասին և ցույց տալ այն՝ գծագրերների վրա, դիտողական պիտույքների վրա, և այլն.

2) Սովորեցնել համեմատական չափը նրա և ավելի խոշոր բաժինների միջև, որ՝ $^2/_4 = {}^1/_2$։

3) Անցնել գործողությունները սովորած կոտորակներով.

4) Կոտորակի ձևակերպումը (պատկերավորումը) և գործողությունների գրանցումը։

Կոտորակները սովորելու՝ ժամանակ հարկավոր է լայն կերպով ոգտվել յերկրաչափական ձևերից (շրջան, քառակուսի, ուղղանկյուն, պրիզմա, խորանարդ), նրանց դիտողական կերպով պատկերացնելու և փոխհարաբերությունը նրանց միջև հասկանալու համար։

Կոտորակներով կատարած գործողությունները հարկավոր է միացնել արագ բանավոր հաշվի վարժությունների հետ։

Ուսուցման վերջին տարում կոտորակներով վարժությունների նպատակը պիտի լինի, վոչ թե միավորի այս կամ այն բաժնի ինդիվիդուալ ուսուցումը, այլ կոտորակի մասին ընդհանուր հասկացողությունների զարգացումը։

Այդ վարժությունները պիտի նախապատրաստեն աշակերտներին դանազան կոտորակային ոպերացիաներ կատարելու համար և ամենից շուտ՝ սովորեցնելու համար կրճատումն և մեկ ընդհանուր հայտարարի բերելը։

ՈՐԻՆԱԿԵԼԻ ՆՅՈՒԹԵՐ՝ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՉՈՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Ոգտագործել հնդամյա պլանի նյութերը։ Կազմել և լուծել խնդիրներ՝ համաձայն ծրագրի. ծանր և թեթև արդյունաբերության տարբեր ճյուղերի վերաբերյալ պլանի կատարումն. գյուղական տնտեսության կոլեկտիվացումն. ցանքային տարածության ընդարձակումը. Մ.Տ. կայանների աճը։

Կազմել և լուծել խնդիրներ՝ ֆաբրիկաների և գործարանների արտադրական պլանների թվերից, աշխատանքի արտադրողականության աճը. մեկ բանվորի վրա ընկնող արտադրանքի միջին հաշիվը։

Տարբեր շարժիչների՝ շոգեշարժի, շոգենավի, տրակտորի և այլն, աշխատանքների համար վառելանյութերի անհրաժեշտ քանակության վերաբերյալ թվերից խնդիրներ կազմել և լուծել։

Առաձնավոր և փոխավոր հաղորդիչների պտույտների արագության վերաբերյալ հաշիվներ։

Կազմել խնդիրներ կուլտուրական 5-ամյակի թվերից. նախադպրոցական ուսում, պարտուս, անգրագիտության վերացումն, կուլտ-կրթական հիմնարկություններ. հրատարակվող գրքերի, ամսագրերի, լրագրի քանակը. պիոներկազմակերպության, կոմյերիտմիության, կոմկուսակցության աճը. դպրոցի համար դասագրքերի, դասական պիտույքների նախահաշիվներ կազմելու կարողություն. կազմել հաշիվներ գնված պիտույքների համար և այլն։

Դպրոցի պատերը ապիտակացնելու և ներկելու ծախսերի նախահաշիվներ կազմելը, և դրա հետ կապված՝ կարողանալ վորոշել հանդիպող հարթությունների մակերեսների չափը։ Դասարանի ծավալը դասարանի լույսի չափը (ավելի բարդ խնդիրներ, քան 3-րդ դասարանում այդ նույն թեմայի առթիվ)։

Հաշվապահություն՝ կոլխոզային հաշվապահության մասին.—աշխատրերի հաշիվներ, մուտքի և ելքի հաշվեմատյան։ Մասշտաբի կիրառումը աշխարհագրության ծրագրի հարցերում.—կարողանալ վորոշել տարածության չերկարությունը քարտեզի վրա. ավելի արագ փոխադրության ձևերը։

Ժամանակի վերաբերյալ թվերով խնդիրներ լուծելու համար հարկավոր ուվյալները վերցնել դանազան նորությունների և գյուտերի բնագավառից, վորպեսզի աշակերտների աշխատանքը հիմնված լինի կոնկրետ նյութի վրա։

Գծագրել տալ դիագրամներ և գրաֆիկներ, վորոնք արտահայտում են դանազան տեսակի փաստեր, հաշիվներ և իրադարձություններ հասարակական և դպրոցական կյանքից։ Չերկրաչափական աշխատանքներ.—տեղի պլանի գծումը վոչ բարդ մակերևույթով (կոնտուր), հողամասի գծումը վոչ բարդ մակերևույթով (կոնտուր), հողամասի բաժանումը ավելի փոքր չեռանկյունաձև հողաբաժինների. կարողանալ վորոշել պլանի և մասշտաբի ոգնությամբ հողաբաժնի մակերևույթի չափը։

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

1. Առաջին քայլերը դպրոցում (8 ժամ)

Ծանոթացնել յերեխաներին դպրոցում հաստատված կարգերի հետ։ Յուրաքանչյուր աշակերտի պարտականությունն և ժամանակին գալ դպրոց և ճիշտ կատարել դպրոցի բոլոր կանոնները։

Խմբի ճշգրիտ և հաստատուն կարգի կազմակերպումը աշակերտական կոլեկտիվի գործն է ուսուցչի ղեկավարության տակ։ Աշակերտների կազմակերպված, կոլեկտիվ պայքար ուշացումների և բացակայությունների դեմ։

Պայքար կրոնական տոներին տեղի ունեցող բացակայությունների դեմ։ Աշակերտների և ուսուցիչների միատեղ պայքար ուսուցչի ղեկավարության տակ՝ պարտաղիր ուսուցումը վիժեցնող մարտիների դեմ։

Պայքար պիոներական պիոներկլինայի հաստատման համար։ Պիոներներն ու հոկտեմբերիկները այդ պայքարի ակտիվ կազմակերպողներն ու մասնակցողներն են ուսուցչի ղեկավարության տակ։

Վարժեցնել յերեխաներին՝ կրելու պատասխանատվություն իրանց հանձնարարված աշխատանքի կատարման համար, հաշիվ տալ իրանց կատարած աշխատանքի առթիվ (հերթապահություն, հաճախումների հաշվառք և այլն)։

Յերեխաների ուժին համապատասխան աշխատանքի կատարումն խմբի, դպրոցի շահերի համար։

Խնամատար վերաբերմունք դեպի դպրոցական գույքը, վոր հասարակական սեփականություն է։

Խնամատար վերաբերմունք դեպի յուր և յուր ընկերների գույքը։ Հարգանք դեպի ուսուցչի աշխատանքը, հարգանք դեպի աշակերտների աշխատանքը, դպրոցի տեխնիկական ծառայողները, մաքրողը, պահապանը և այլն։

Յերեխաների վարքը դպրոցում, դասամիջոցին, փողոցում։

Զարգացնել ընկերական վերաբերմունք մեծ և փոքր յերեխաների միջև, տղաների ու աղջիկների միջև, տարբեր ազգության յերեխաների միջև։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ։

Ուսուցչի պրույրը աշակերտների հետ։ Պատմվածքների ու վոտանավորների ընթերցում բոտ թեմայի։ Պլակատների ուսումնասիրություն սան—առողջապահական թեմաների շուրջը։ Յերեխաների միջոցով հայտնաբերել նրանց, ովքեր չեն սովորում կամ դադարեցին հաճախել դպրոց։

Հատատել բարձր խմբերի շեֆության առաջին խմբի վրա։

2. ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿՆԵՐ (10 ժամ)

Յուրաքանչյուր դպրոցում կան հոկտեմբերիկներ։ Ինչով են զբաղվում հոկտեմբերիկները իրենց հավաքույթներում։ Հոկտեմբերիկները՝ և՛ դպրոցում, և աշխատանքի մեջ, և՛ խաղերի, զվարճությունների ժամանակ՝ պետք է լավ որբնակ լինեն իրենց ընկերների համար։

Հոկտեմբերիկները — վողջ աշխարհի աշխատավորության յերեխաների ընկերներն են։ Բոլոր աշակերտները, հոկտեմբերիկների որինակով, պետք է լինեն համայն աշխատավորության յերեխաների ընկերները։

Հոկտեմբերիկները կազմակերպված են ոդակներով (աստղիկները)։ Ոդակները կազմում են հոկտեմբերիկյան խմբեր։ Ոդակավարները նշանակվում են պիոներ—կոլեկտիվից։ Լավագույն հոկտեմբերիկներին վոխադրում են պիոներ—կոլեկտիվ։

Հոկտեմբերիկները ողնում են ուսուցչին ներգրավելու բոլոր աշակերտներին պայքարի հանուն ուսման, դպրոցական կարգապահության, պիոներական պիոներկլինայի՝ դպրոցում, տանը և փողոցում։

Հոկտեմբերիկները ներգրավում են յերեխաներին պայքարելու պարտուի համար։ Հոգա են տանում, վորպեսզի բոլոր դպրոցահասակ յերեխաները սովորեն դպրոցում, կանոնավոր հաճախեն դպրոց, ողնեն իրար դպրոցական պարտականքների ժամանակ, ողնեն գրքերով, դասական պիտույքներով։

Հոկտեմբերիկները ոգնում են մեծերին պայքարելու բանվորական գործի համար. հոկտեմբերիկները՝ լավագույն դիսցիպլինայի և ուսուցման առաջավոր ջոկատն են։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ուսուցչի դերույթը։ Պատմվածքների ընթերցում։ Զրույց նկարների շուրջը։ Տվյալ խմբի հոկտեմբերիկները պատ-մում են, թե ինչ են կատարում իրանք կոլեկտիվում, ինչպես և ինչով են ոգնում ուսուցչին դպրոցում։

Ուսուցչի հաճախում և հոկտեմբերիկների հավաքույթը։ Ներկա լինել պիոներական հանդիսավոր հավաքույթում, վորտեղ հոկտեմբերիկներին փոխադրում են պիոներ—կոլեկտիվ։

3. ՄԵՐ ՖԱԲՐԻԿԱՆ.

(20 ժամ գյուղական դպրոցի համար և 26 ժամ քաղաքի դպրոցի համար)

Ծանոթություն։ Գյուղական դպրոցներում այս թեման համարվում է չորրորդը՝ չերրորդ թեման այնտեղ՝ դա „Մեր կոլտնտեսությունը“ն է։

Քաղաքի և ֆաբրիկա—գործարանային ապրանքաշրջության դերը մեր կյանքում։ Քաղաքում, ֆաբրիկաներում և գործարաններում բանվորներն արդադրում են զանազան մեքենաներ, պատրաստում են գործվածքներ, մետ, թուղթ և շատ ուրիշ իրեղեններ, վորոնք անհրաժեշտ են մեր սոցիալիստական տնտեսության համար և աշխատավորության մատակարարելու համար։ Մոտակա ֆաբրիկայի որինակների վրա պարզել, թե ինչպես և ստացվում արտադրանքը և ինչ հումքից։ Վորտեղից և ստացվում հումքը։

Ֆաբրիկաներում աշխատանքը կատարվում և մեքենաների միջոցով։ Մեքենան թեթևացնում է մարդու աշխատանքը, հնարավորություն և տալիս կարճ ժամանակամիջոցում արտադրել ավելի շատ, լավ ու եժան ապրանք, քան ձեռքի աշխատանքով։ Համեմատել վորևիցե արհեստանոցում ձեռքի աշխատանքը մեքենայի աշխատանքի հետ։ Տալ մի շարք կոնկրետ որինակներ, վորոնք ապա-

ցուցում են մեքենայական արտադրության առավելությունը ձեռքի աշխատանքի հանդեպ։

Բերել տեղական բնույթ կրող որինակներ. ծխախոտի գործարանից, մեքենայացրած, գործվածքային արհեստանոցից, Սուխումի կաշեգործարաններից, Գագրի և Կոդորի ախտահանգործարանից, ՕՄՊԿ-ի գործարաններից, Գալլայի թեյի ֆաբրիկայից։

ԻՆՉՊԵ՞Ս Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՖԱԲՐԻԿԱՅՈՒՄ։

Ֆաբրիկայում աշխատում են կոլեկտիվ կերպով և ըստ պլանի։ Բոլորը ունեն մի ընդհանուր թնդիր. յուրաքանչյուր բանվոր ունի իրա առաջադրանքը. մեկի աշխատանքը կախված է մյուսի աշխատանքից։

Պլանի կատարման համար բանվորները կազմակերպում են բրիգադներ։ Լավագույն բրիգադները՝ հարվածային բրիգադներն են։ Լավագույն բանվորները՝ հարվածայիններ են։ Որինակ բերել առանձին հարվածայինների աշխատանքից, թե ինչպես են նրանք բարձրացնում աշխատանքի արտադրողականությունը, ինչպես են նրանք պայքարում ինքնարժեքի իջեցման համար։ Կատարելով հարվածային աշխատանք, բանվորները բարելավում են իրենց և բոլոր աշխատավորների կյանքը։

Ֆաբրիկաներն ու գործարանները տեղավորված են քաղաքներում և ֆաբրիկ—գործարանային քաղաքամասերում։ Այնտեղ, վորտեղ կան քաղաքամասեր ու մեծ ֆաբրիկաներ, աճում ուսուցվում են մեծ ֆաբրիկաներ ու գործարաններ, ստեղծվում են բանվորական քաղաքամասեր ու մեծ, նոր քաղաքներ։

Բանվորական քաղաքամասեր Տկվարչեթաղում (Կոդորի ռայոն), Բզիբ—կոմբինատում, Սուխումում և այլուր։ Քաղաքների և ֆաբրիկային քաղաքամասերի տղտմբնակչության մեծամասնությունը ֆաբ.—գործարանային բանվորներ են։

Մեծ քաղաքներում կան շատ պետական և հասարակական հիմնարկություններ. քաղխորհուրդ, թատրոններ, կլուբ, կան հիմնարկություններ, գրադարաններ, ակումբներ, հասարակական ճաշարաններ, պրոա—հեռադրատուն, դպրոցներ, հիվանդանոցներ, դեղատներ, բամպիվ ուսումնական հիմնարկներ մանուկների համար, կան դպրոցներ, վորոնք պատ-ու մեծահասակների համար, ժիշկներ, լնժիներ—շինարարության դյուղատնտեսներ, բժիշկներ, լնժիներ—շի-

նարարները և այլն, որոնց պատրաստում են մասնագետ-ները՝ գյուղի ու քաղաքի համար։

Քաղաքում կան մեծ խանութներ, կոոպերատիվներ շուկաներ, կոլխոզական բազար։

Քաղաքը՝ կենարան և ընկերական աղզաբնակչության համար։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ։

Եքսկուրսիա դեպի ֆաբրիկան։ Ֆաբրիկայի հարվածային ընկերության հետ։ Զրույց նկարի կամ լուսանկարների շուրջը։ Կինո—նկար կամ մոզաիկական լուսանկարների միջոցով պատկերների ցուցադրումը։

4. ՄԵՐ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ.

(26 ժամ գյուղական դպրոցի համար և 20 ժամ քաղաքի դպրոցի համար)։

Ծանոթություն։ „Մեր կոլտնտեսությունը“ չերրորդ թեման և գյուղական դպրոցի համար. քաղաքի դպրոցում այս թեման կրկնել չորրորդը, իսկ չերրորդ թեմա պետք է համապատասխանի „Մեր ֆաբրիկան“։

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱՁԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԶԲԱՂՄՈՒՆՔԸ։

Մեր գյուղի բնակիչների հիմնական զբաղմունքները (գյուղական դպրոցում), կամ տիպիկ զբաղմունքը ավյալ ռայոնի կամ շրջանի համար (քաղաքի դպրոցում)։ Գյուղատնտեսական աշխատանքների հիմնական տեսակները. հերկը, ցանքը, բերքահավաքը, կալսելը, անասունների խնամքը, կաթի վերամշակումը և այլն։

Հացահատիկների ցանքը, ծխախոտի տնկելը, չերեպենները (герань) թեյի պլանտացիաները, կիտրոնավորների տնկելը (մանդարին, լիմոն, նարինջ), հրոպական բարեխառն կլիմայական շրջանի մրգատու ծառեր։ Մշակաբույսերի խնամքը։ Բերքի հավաքը։ Տնկենիքական բույսերի մշակումը։ Բանջարաբուծություն (նայե ձմեռային) կենդանապահություն։ Անասունների խնամքը։ Կաթնամթերքներ։

Կոլտնտեսականներ և անհատականներ։ Գյուղացիները իրենց անտեսությունները վարում են կամ առանձին ընտանիքներով (անհատականները), կամ միացած կոլ-

անտեսությունների մեջ։ Պարզել, ինչպես են գյուղացիները վարում իրանց անտեսությունը մեր գյուղում (գյուղական դպրոցի համար)։

Ցերեխաների դիտողությունների (գյուղի դպրոցում) կոնկրետ փաստերի վրա, կամ ուսուցչի պատմածի միջոցով (քաղաքի դպրոցում) պարզել մանր, անհատական անտեսության բնորոշ առանձնահատկությունները. բաժան—բաժան հողամասեր, հետամնաց գյուղատնտեսական գործիքներ, մեքենաների բացակայություն։

Բացատրել, որ առաջ այդպես էին վարում իրանց անտեսությունը չքավորներն ու միջակները։ Պատմել, որ չքավորները „դրանք այն մարդիկն են, որոնց անտեսության մեջ պակասում է կամ սերմացուն, կամ բանվոր անասունը, կամ գործիքները և կամ այս բոլորը միասին վերցրած։ Չքավորները՝ դրանք այն մարդիկն են, որոնք ապրում էին համեմատ սոված և գանվում էին կուլակների լծի տակ, իսկ հին ժամանակ և՛ կուլակների և՛ կալվածատերերի “(Ստալին)։ Պատմել որ“ միջակների համարյա կեսը նույն վիճակի մեջ եր, ինչ՝ չքավորները“ (Ստալին։ Պատմել առանձին խոշոր կուլակային անտեսությունների մասին և ասել, թե ինչպես կուլակները լայնացրին իրանց անտեսությունը, հարստանալով ի հաշիվ չքավորների։ (Գյուղական դպրոցում տալ որինակներ տեղական կյանքից)։

Վորպեսզի բարելավեն իրանց անտեսությունը և կյանքի պայմանները, վորպեսզի ազատվեն կուլակի ճնշումից, գյուղացիները կազմակերպում են կոլտնտեսություններ։

Կոլտնտեսականը՝ չերեկվա անհատականն է։ Անհատականը (բարեխիղճ աշխատողը) վաղվա կոլտնտեսականն է։ Բոլշևիկների կուսակցությունն ու գյուղմորհուրդը դեկավարում են, իսկ քաղաքի բանվորները ոգնում են կոլտնտեսության կազմակերպման գործում։ Ի՞նչ է ասում Ստալինը կոլտնտեսական կարգերի մասին։

Իրա կամ մոտակա կոլտնտեսության կյանքի որինակների վրա բացատրել, որ գյուղացիները՝ մանելով կոլտնտեսություն, միասեղ են ոգտագործում հողը, ունեն ընդհանուր գործիքներ, ընդհանուր բանվորական անասուն և անտեսության անհրաժեշտ շենքեր։

Կոլտնտեսություններում լայնորեն կիրառվում են մեքենաները։ Իրա կամ մոտակա կոլտնտեսության որինակի վրա (նույնպես և նկարի վրա ցույց

տալ) թե ինչպիսի մեքենաներ են գործադրում կոլտնտ
տնտեսները գյուղատնտեսական աշխատանքների մեջ (տրակ
տոր, շարքացան մեքենա, հնձիչ մեքենա, կալսիչ մեքենա
կուլտիվատոր, սեզաբաժոր և այլն) և ինչպիսի աշխատանք
են կատարում այս մեքենաները:

Նկարներ կոլտնտեսների աշխատանքից մեքենան կատա
վարելիս կամ մեքենայի աշխատանքի ընթացքում: Տրակ
տորիստի աշխատանքը, մեխանիկի, փականագործի, դար
բնի և այլն աշխատանքը:

Մեքենաների ոգտագործումը թեթևացնում է մարդկանց
աշխատանքը և բարձրացնում է բերքատվությունը:

ԻՆՉՊԵ՞Ս Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ:

Կոլ—անտեսության մեջ գյուղացիները աշխատում են
խմբովին: Բոլորը ունեն ընդհանուր խնդիրներ, ըստ որում
յուրաքանչյուր կոլ—անտ—ական ունի իրա առաջադրու
թյունը (բերել օրինակներ կոլտնտ—ական կյանքից): Բա
ցատրել օրինակով, որ յուրաքանչյուր կոլտնտնիկի աշխատ
անքը կապված է մյուսի հետ: Կոլտնտնիկները կազմակեր
պված են բրիգադներով: Լավագույն բրիգադներն են հար
վածային բրիգադները: Լավագույն կոլտնտնիկները հարվա
ծայինները են (օրինակ տեղական կյանքից): Հանրային
գույքի պահպանությունը կոլտնտներում: Ով լավ ու շատ
աշխատում կոլտնտում նա շատ է աստանում: Աշխատանքի
կոլեկտիվ ղեկավարումը համախմբում է կոլտնտնիկներին
տալիս է լավագույն արդյունքներ:

Տալ միացյալ աշխատանքի շահավետության պայման
օրինակներ: Աշխատանքի, գործիքների, բանվորական անա
սունի միացումը, արտերի ամեմաններ (սինոո) վերացում
մինչև իսկ առանց մեքենաների գործադրման, տալիս
խոշոր արդյունքներ (տալ օրինակներ նման մի կոլտնտ
կյանքից):

Կուլտուրան ու կենցաղը կոլտնտներում
Կոլտնտներում կան հասարակական ճաշարաններ. աշխատ
անքի ժամանակ հասարակական սնունդը կազմակերպվում
և դաշտերում: Կոլտնտներում կազմակերպվում են մանկա
մսուրներ, մանկապարտեզներ: Կոլտնտնիկները ունեն ակումբ
կամ կարմիր անկյուն և կամ կուլտուրայի տներ, վորտեղ

կոլտնտնիկները անց են կացնում իրանց հանգիստը տան
գործերին կամ աշխատանքից ազատ ժամանակին: Կոլտնտնիկ
ները բարեկավում են իրենց կյանքի սան-առողջապահական
պայմանները (ցույց տալ կոնկրետ օրինակներով): Կոլ
տնտնիկները կուլտուրական աշխատանք են տանում գյու
ղում անհատական գյուղացիների մեջ:

Կոլտնտի թշնամիները: Կոլտնտ-շինարարությանը
վնասում են կուլակները, նախկին սպիտակ սֆիցերները,
տերտերները, կուլտաճառիրական նախկին կառավարիչները
և ուրիշն: Կուլակները պայքարում են կոլտնտների դեմ:
Կոլտնտների ժամանակ կուլակները չեն կարող հարստանալ
ուրիշների հաշվին: Կուլակներից խլված են հողերը, մեծ
անտները մեքենաները: Նրանք (անները) հատկացված են ըն
հանուր ոգտագործման համար (դպրոցների, մանկամսուր
ների և ուրիշ կուլտ—հիմնարկների համար): Կոլտնտների
դեմ պայքարելու համար կուլակները ոգնում են տերտեր
ները:

Կուլակներին ու տերտերներին կոլտնտ չեն ընդունում,
բայց նրանք զանազան ճանապարհներով սողոսկում են
կոլտնտ և վնասում են ներսից:

Պատմել, որ կուլակները իրանց վնասարարությունը
բանվորների, կոլտնտնիկների, խորհրդային իշխանության
դեմ իրականացնում են հրկիզումների,
և կուսակցության դեմ
մեքենաների փչացման և հասարակական սեփականության
մասսայական հափշտակության միջոցներով:

Կուլակները ընդդիմադրում են հացամթերումներին,
ցանքսին, խանգարում են աշխատանքային դիսցիպլինան
կոլտնտում և սովխոզում: Կուլակները ոգտագործում են
„կոլտնտնիկների մասնա—սեփականատիրական հատկա
նշումները, որ կոլտնտներն ու սովխոզները, որտեղ դեռ յերևակ
են անհատական գյուղացիներ կային“:

Ծուլերն ու հասարակական գույքի հափշտակիչները
կուլակների դաշնակիցներն են: Կուլակներին և նրանց դաշ
նակիցներին պետք է հեռացնել կոլտնտներից:

Կոլտնտ—շինարարության թշնամիների դեմ կռվելու
համար գյուղացիներին ոգնում են քաղաքի բանվորները
կուսակցության ղեկավարության տակ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԶԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ:

Կազմել ալբոմ կամ պլակատ մանուկների նկարներից կամ դյուղական տղաբնակչության աշխատանքն ու կենցաղը արտահայտող նկարներից:

Սովորել փոքրիկ վոտանավորներ ուսուցիչների խոսքով:

Կազմել յերկու մեծ նկարներ. անհատականի բակն ու տնտեսությունը, և կոլխոզի բակն ու տնտեսությունը անհատականից հետո:

Կինո—նկարներ (դյուղատնտ. մեքենաները աշխատանքի ժամանակ):

Եքսկուրսիաներ դեպի կոլխոզ կամ դեպի դյուղատնտեսական մեքենաների պահեստը (յեթե հնարավոր է) Դրամատիզացիա (մրցակցության և նվիրատվությունների բաշխում):

Եքսկուրսիա դեպի ճաշարան, մանկապարտեզ և կոլխոզի ակումբը (դյուղական յերեխաների համար):

Ուսուցչի զրույցը պատկերների միջոցով:

5. ՖԱԲՐԻԿԱՆԵՐԻ ՈՒ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ, ՔԱՂԱՔՆԵՐԻ ՈՒ ԳՅՈՒՂԵՐԻ ԿԱՊԸ ՄԻՄՅԱՆՑ ՀԵՏ (6 ժամ):

Բանվորները ու նրանց դեկավարությամբ կոլխոզնիկները կատարում են ընդհանուր գործ:

Վորքան լավ աշխատեն կոլխոզները, այնքան շատ հումքի կը լինի ֆաբրիկանների ու գործարանների համար (ճակնդեղ, վուշ, բամբակ, ծխախոտ, թեյ, յեթերաբեր բույսեր) այնքան շատ մթերք (հաց, միս, կաթնեղեն) կը լինի պետության, կարմիր բանակի, բանվորների համար: Ավելի լավ կը լինի կոլխոզնիկների կյանքը:

Վորքան լավ և գնում աշխատանքը ֆաբրիկաներում ու գործարաններում, այնքան ավելի կը լինեն մեքենաներ, յերկաթ, ապակի, գործվածքներ, կոշկեղեն և ուրիշ ապրանքներ, վորոնք անհրաժեշտ են մեր անտեսության զարգացման և բանվորների ու նրանց յերեխաների կյանքի բարելավման համար:

Մեկ քաղաքից մյուսը, քաղաքներից դեպի գյուղ, գյուղերից դեպի քաղաքները բերում են զանազան ու շատ բեռներ: Քաղաքներից դեպի գյուղ գործարանների բանվորները մարդիկ են ուղարկում աշխատանքի համար: Գնում են աշխատելու դյուղատնտեսներ, ուսուցիչներ, բժիշկներ և այլն: Գյուղերից էլ քաղաք են գնում մարդիկ աշխատելու և ուսումը շարունակելու համար: Քաղաքներից ուղարկում են գյուղ լրագրներ, ամսագրեր, գրքեր. նրանց մեջ կարելի յե իմանալ թե ինչպես են ապրում ու աշխատում զանազան յերկրների աշխատավորները (մշակված թեմանեզանազան յերկրների աշխատավորները (մշակված թեմաներին համապատասխան որինակներ բերել լրագրերից ու ամսագրերից):

Բանվորներն ու կոլխոզնիկները ունեն մի ընդհանուր խնդիր. բալշևիկների կուսակցության առաջնորդությամբ, բանվորների դեկավարության տակ, սերտ կապված իրար հետ բարելավել մեր յերկրի աշխատավորության կյանքը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԶԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ:

Պատմվածքներ ընթերցանության գրքերից: Զրույց նկարներով: Մանկական ներկայացում: Նամակագրություն քաղաքի դպրոցի առաջին խմբի և դյուղական դպրոցի առաջին խմբի միջև:

Կապ հաստատել հարևան, մոտիկ դպրոցների հետ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ:

1. Բանվորների ու դյուղացիների կյանքը առաջ (յարի ժամանակ) ու հիմա (խորհրդային իշխանության որոք (60 ԺԱՄ):

Ո՞վ ե՞ր կառավարում առաջ մեր յերկիրը: (2 ժամ):

Հիմա բանվորներն ու դյուղացիները են մեր յերկրի տերերը. առաջ յերկիրը կառավարում ե՞ր թագավորը կալվածատերերի ու կապիտալիստների հետ միասին: Նրանք տիրում էին հողի մեծ մասին, ֆաբրիկաներին ու գործարաններին: Դյուղացիների ձեռքին շատ քիչ հող կար: Գյուղացիները աշխատում էին կալվածատերերի ու կուլակների համար: Ցարական իշխանությունը հող ե՞ր տանում միայն կալվածատերերի ու կապիտալիստների շահերի մասին և ճնշում ե՞ր բանվորներին ու դյուղացիներին:

Տեխնիկան առաջ ու հիմա: (5 ժամ): Առաջ ամենուրեք մեր յերկրում դյուղացիները աշխատում էին

հետաքրքրությունը, պատրաստական գործիքներով, առանց մեքենաների, հողի փոքրիկ շերտերի վրա։

Շատ տեղերում, մանավանդ ծայրամասերում չկային ֆաբրիկաներ ու գործարաններ, բազմաթիվ երեք պատրաստված էին ձեռքի աշխատանքով անալիտգործական պարագաների վրա։ (Որինակներ)։ Տնային գործական ջուլհակատնոցներ, ատամնեղենների անալիտգործական արտադրություն, կաշվի արտադրություն։

Հիմա կոլտնտեսականները ու խորհրդային անտեսությունների բանվորները աշխատում են մեքենաներով ու մեծ հողամասերի վրա։ Այնտեղ, ուր առաջ բոլորովին չկար մեքենայական աշխատանք, հիմա խորհուրդները կառուցում են ֆաբրիկաներ ու գործարաններ։ Տեղական նշանակության—Տըղվարչելտարայ, Ձիամտաի ֆաբրիկա, կոնսերվի (պահածո) ֆաբրիկա, կաշեգործարաններ Սուխումում, ՕՄՊՔ-ի գործարաններ Գուդաուտում, Գուդաուտում, Գագրիի ռայոնում, մեխի գործարանը Գուդաուտում, Գալիայի թեյի ֆաբրիկան, կողպեքի ատաղձագործարան, Բզիբի անտառային կոմբինատ, Գագրիի անտառագործարան, գինեգործարան, լիմոնադի գործարան, ադյուսի ցեմենտի և այլն։

Աշխատանքի պայմանները առաջ և հիմա (12 ժամ)։

Առաջ, ֆաբրիկաներում ու գործարաններում բանվորները կրում էին ծանր ու մաշող աշխատանք. բանվորները ցածր աշխատավարձ էին ստանում, բանվորական որը երկար էր, ծանր էին բնակարանային պայմանները. որերով կամքով նրանք կարող էին զրկվել աշխատանքից. շատերը ճնում էին երկար ժամանակով անգործ, սովածության էին կրում ընտանիքով միասին։ Տիրոջ համար աշխատելը չափազանց ծանր էր։ Խորհուրդների երկրում բանվորները այժմ ունեն յոթ ժամվա բանվորական որ, իսկ մի քանի ճամբեր՝ մինչև իսկ վեց—ժամյա. տոնում են արձակուրդներ, ունեն աշխատանքի պաշտպանություն. խորհուրդների երկրում չկա անգործություն ու սովը չի սպառնում վեց բանվորին ու վեց նրա ընտանիքին։

Գյուղացիների աշխատանքը առաջ չափազանց մաշող էր. գյուղացիները կալվածատերերի ու կուլակի լծի տակ էին. նրանք ապրում էին սոված, թեպետ իրանք էին արտադրում պարենավորման մթերքները։ Անբերրիության տարիներին գյուղացին ոգնություն տանելու տեղ չուներ։

Հիմա կալվածատերերի ու կուլակների հողը անցավ գյուղացիներին։ Հիմա իրանց և իրանց կոլխոզների համար են աշխատում գյուղացիները։ Հիմա գյուղացիներին ոգնություն են ու տրվում մեքենաներով, գյուղատնտեսական, բժշկական ոգնություն։ Կոլխոզներում կազմակերպված է աշխատանքի պաշտպանություն, հատարակական մնունդը և այլն։ Խորհրդային յերկրի լավագույն ֆաբրիկաներում ու կոլխոզներում աշխատանքը զնում է հարվածային յեղանակով, ծավալվում է սոցիալիստական մրցակցություն։ Այդ ֆաբրիկաներում ու կոլխոզներում մեծ նվաճումներ կան. առաջավոր ֆաբրիկաները, կոլխոզներն ու սովխոզները ոգնում են յեթ ճնայողներին. լավագույն հարվածայինները պարգևատրվում են (կոնկրետ որինակներ տեղական կյանքից)։

Առաջ աշխատանքը ծանր լուծ եր. ճնշողները աշխատավորության վրա արհամարհանքով էին նայում. խայտառակ ու սոսկ եր համարվում ֆիզիքական աշխատանքը։ Հիմա մեր յերկրում աշխատանքը դառնում է փառքի, պատվի ու հերոսության գործ։ Աշխատանքը հիմա հետաքրքրում է բոլոր բանվորներին ու կոլխոզնիկներին, վորովհետև աշխատում են իրանց համար, պետության համար ու իրանց ու յերեխաների կյանքի բարելավման համար։

ՔԱՂԱՔԻ ՈՒ ԳՅՈՒՂԻ, ՄԵՐ ՅԵՐԿՐԻ ՏԱՐԲԵՐ ՄԱՍԵՐԻ ԿԱՊԸ ԻՐԱՐ ՀԵՏ ԱՌԱՋ ՈՒ ՀԻՄԱ (8 ԺԱՄ)

Մեր յերկիրը մեծ է. այնտեղ կան շատ քաղաքներ, գյուղեր։ Առաջ չափազանց դժվար եր կապը քաղաքի և գյուղի, հեռավոր ծայրամասերի ու կենտրոնների միջև. յերկրում ճանապարհներ չկային համարյա, յեղածն էլ վատ էին. քաղ էին զարգացած հաղորդակցության ու կապի միջոցները։ Դա պատճառ եր այն կտրվածության և այն կուլտուրական հետամնացության, վոր կար ծայրամասերի ազգաբնակչության միջև։

Հիմա նորոգվում և կառուցվում են նոր խճուղիներ, անց են կացվում նոր յերկաթուղագծեր, զարգանում և ավտոմոբիլային հաղորդակցությունը, ոդային կապը այերոպլանների ու դիրիժարների միջոցով։

Նոր խճուղային ճանապարհներ և խճուղու նորոգում Աբխազիայի ափերին։ Սև-ծովյան յերկաթգծի անցկացում

(ցույց տալ արհեստներով, ինչպիսի դժվարություններ եր հարուցանում ճանապարհների բացակայությունը մեր յերկրում)։

Առաջ հեռախոսը միայն մեծ քաղաքներում եր լինում. հիմա հեռախոսային ցանցը կապում է բազմաթիվ գյուղեր իրենց ռայոնային կենտրոնների հետ։ Ամենուրեք մտավ ռադիոն (արհեստներով ցույց տալ հեռախոսի, հեռագրի ու ռադիոյի հարմարությունները)։

Բացատրել, թե ինչ մեծ նշանակություն ունի հազորդակցության միջոցների զարգացումը Սորհրդային հսկայական յերկրի համար։

Վոչ ռուսական ազգերի դրությունը առաջ ու հիմա (10 ժամ) Մեր յերկրում կան բազմաթիվ ազգություններ։ Այդ ազգությունների աշխատավորները առաջ ճնշված եյին ցարական իշխանության կողմից։ Նրանցից խլում եյին հողերը, անտառները. լծում եյին նրանց ամենածանր ու քիչ վճարելի աշխատանքների. դանդաղեցնում եյին տնտեսության զարգացումը ազգային շրջաններում։ Ցարական իշխանությունը առանձնապես արգելք եր հարուցանում վոչ ռուսական ազգերի լուսավորության գործին. արգելում եր նրանց խոսել ու գրել մայրենի, ազգային լեզվով։

Լուսավորության փոխարեն այդ ազգությունների մեջ տարածվում եյին կրոնական նախապաշարումներ. ազգերին լարում եյին միմյանց դեմ, կազմակերպում եյին ջարդեր, սպանում և կողոպտում եյին հրեաներին, հայերին, թաթարներին և այլն։

1878 թվի Սբ[illegible]պայի ապստամբությունը ճնշելուց հետո ցարական կառավարությունը բնակեցրեց Սբ[illegible]պան ուրիշ ազգություններով, գրանք են ռուս, հայ և հույն գաղթականները։ Ցարական պաշտոնյաները լարում եյին մեկ ազգությունը մյուսի դեմ, հրահրում եյին ազգային թշնամանքը, վորպեսզի անպորացնեն աշխատավոր մասաների համախմբվածությունը և թույլ չտան գյուղացիներին հասկանալու նրանց ծանր կյանքի բուն պատճառները։

Ցարական իշխանությանը ձեռնտու եյին բաժան-բաժան անել զանազան ազգերի աշխատավորությանը, վոր ավելի հեշտ լիներ ճնշելը։ Ազգային թշնամանքի զարգացման և բազմաթիվ ժողովրդների աշխատավորության ճնշման գործին ակտիվ մասնակցում եր յեկեղեցին։

Սորհուրդների յերկրում բոլոր ազգերը ունեն հավասար իրավունքներ. խորհրդային իշխանությունը աշխատում է վոչնչացնել ազգային վերաբերմունքների անտեսական ու կուլտուրական հետամնացությունը։ Այն շրջաններում, վորտեղ բոլորովին չեյր արդյունաբերություն՝ կառուցվում են ֆաբրիկաներ ու գործարաններ, յերկաթուղագծեր։

Որինակ Սբ[illegible]պայում Տղմարչելսարոյ, ծխախոտի, թեյի, կտանեփի, գործվածքի ֆաբրիկաները, ՕՄՊԿ-ի, ատաղձային, կաշվե գործարանները, Տղմարչելսարոյի, Գեմասուայլոյ, Սև-ծովյան յերկաթուղագիծը դեպի Բեթարուկայանները, Սև-ծովյան յերկաթուղագիծը և այլն։ Զագրա, Տուրկսիբ, Ուզբեկստանի տեքստիլ ֆաբրիկանները, Հայաստանի Էլեքտրա—կայանները և այլն։ Սորհրդային յերկրի ազգությունների միջև ծավալվում և մեծ, կուլտուրական աշխատանք (նոր դպրոցներ, բուհեր, ակումբներ, ռադիո, լրագրեր, ամսագրեր, գրքեր, թատրոններ և այլն)։

Զանազան ազգերի պլաններն ու աշակերտները կապված են հաստատում միմյանց հետ։ Պլաններն ու աշակերտները կապ են հաստատում մյուս յերկրների մանկական նեերը կապ են հաստատում մյուս յերկրների մանկական նեերը կապ են հաստատում կոմմունիստական կազմակերպությունների հետ։ Սորհրդային յերկրների աշխատավորները՝ ամբողջ աշխարհի բանվորների ու գյուղացիների բարեկամներն են։

ԿԱՆԱՆՑ՝ ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ ՈՒ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԱՌԱՋ ՈՒ ՀԻՄԱ (5 ժամ)։

Նախ քան հեղափոխությունը կին—բանվորուհիները ու գեղջկուհիները ապրում եյին առանձնապես ծանր պայմանների մեջ։ Ծածր աշխատավարձ, ուժից վեր ու ծանրակար աշխատանքներ, յերեխաներին հոգ տանելու անկարելիություն, անտեր անտեսության չարքաշ լուծ, անիրավություն, անօրացած վիճակ, ուսումից ու լուսավորությունից զրկված վիճակ, ուսումից ու լուսավորությունից զրկված վիճակ՝ նրանք դարեր շարունակ կրել են։

Սորհրդային իշխանությունը վոչնչացրել է կնոջ իրավազրկությունը, լայն ճանապարհ է բացել դեպի ուսումը։ Դեպի հասարակական կյանքը, դեպի արտադրություն. պաշտպանում է կնոջ ու մոր աշխատանքն ու մայրությունը, շուկանվում է կնոջ ու մոր աշխատանքն ու մայրությունը, կազմակերպվում է հասարակական սնունդ, ստեղծվում են մանկապարտեզներ և մանկամատներ։

ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՅԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԱՌԱՋ ՈՒ ՀԻՄԱ *(6 ժամ)*։

Ցարական իշխանության որով աշխատավորների յերեխաները ստիպված եյին մանուկ հասակից զբաղվել ծանր աշխատանքով. ուսում նրանց համար բոլորովին չկար կամ շատ սահմանափակ եր. շատ աշխատավորների յերեխաները բոլորովին անապատան եյին։ Այժմ ել կապիտալիստական յերկրներում այդ և յերեխաների վիճակը։ Սորհրդային իշխանությունը արգելեց մանուկների աշխատանքի կիրառումը, մտցվում և ընդհանուր, պոլիտեխնիքական կրթություն մինչև 17 տարեկան հասակը. աճում են մանկական հիմնարկությունները՝ մսուրները, հրապարակները, ոջախները, տեխնիքական կայաններ, մանկական ակումբներ, թատրոններ և այլն։ Սորհրդային իշխանությունը վոչնչացրեց յերեխաների անապատանությունը։

Յերեխաներն իրենց կազմակերպությունների միջոցով ոգնում են խորհրդային իշխանությանը պայքարելու հանուն մանուկների կենցաղի բարելավման, հանուն կնոջ ազատագրման։

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋ ՅԵՎ ՀԻՄԱ *(6 ժամ)*.

Ցարի ժամանակ խավարի մեջ եյին պահում բանվորներին ու գյուղացիներին. նրանց համար ուսում չկար, վորովհետև անգրագետներին ու կիսագրագետներին ավելի հեշտ եր ճնշել. յերկրում չափազանց շատ եր անգրագետների թիվը։

Ցարիզմի որոք, 1913 թվին Անդրկովկասում ժողովրդական գրագիտությունը (գյուղում) հետևյալ թվով եր արտահայտվում, 100 բնակչին հաշվում եր 2-3 գրագետ։

Գիտությունները ստանալու փոխարեն գյուղացիները ստանում եյին կրոնական խաբեություն. տարածվում եյին մեծ չափով զանազան մոռիսպաշտություններ. աշխատավորները չեյին կարողանում բացատրել բնության, անգամ ամենապարզ, յերևույթները, չեյին ձեռք բերում վոչ մի տեխնիքական գիտելիքներ։

Հիմա խորհրդների յերկրում իրականացում և համատարած գրագիտությունը. լայնորեն ծավալված և մեծա-

հասակների ուսուցումը. աշխատավորները յուրացնում են պիտությունն ու տեխնիկան սոցիալիստական տնտեսության ու աշխատավորների վիճակի բարելավման համար։

Աբխազիայի բոլոր ռայոններում գործում են լիկկայաններ, կիսագրագետների դպրոցներ, յերեկոյան բանվորական կուրսեր նորակառույցներում, ֆաբրիկաներում, գործարաններում և այլն։

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԻՍՏԸ ԱՌԱՋ ՈՒ ՀԻՄԱ *(6 ժամ)*

Առաջ բնակչության հանգիստը հարմարեցված եր յեկեղեցական տոներին. զանազան կրոնների տերտերները հանդիսավոր ծիսակատարություններով գրավում եյին աշխատավորներին դեպի աղոթատները (յեկեղեցի, մեհյան, սինագոգ և այլն). ու խաբում եյին նրանց զանազան խոստումներով, կրոնական հեքյաթներով, հրաշքներով և ուրիշ։

Այդ տոներին ծավալում եր հարբեցողությունը, ծեծը, խաղաղությունը. կուլտուրական զվարճությունները, աշխատավորների համար քաղաքում համարյա չկային, կամ անհնարին եր մուտքը այնտեղ, իսկ գյուղում վոչինչ չկար։

Հիմա, խորհրդային յերկրում աշխատավորները ունեն իրենց ակումբները, թատրոնները, կինո, խրճիթ-ընթերցարաններ, կարմիր անկյուններ, կուլտուրական տներ, կուլտուրական ու հանգստի այգիներ. Սորհրդային տոներին աշխատավորները կազմակերպում են ցույցեր, ցուցադրում են իրենց նվաճումները. խորհրդային տոներին բոլոր թատրոնները, կինոները, ակումբները հատկացվում են ձրիապես աշխատավորներին։ Ցարիզմի որոք աշխատավորության մեջ բոլորովին չեր տարածված ֆիզկուլտուրան ու սպորտը։ Հիմա, խորհրդային յերկրում կան մեծ ստադիոններ, մարզահրապարակներ, խաղահրապարակներ, սղղոններ, լողի դպրոցներ, լայնորեն ծավալվում է ֆիզկուլտուրան։

Սորհրդային յերկրի պաղպաքակչությունը պետք է լինի ու կը լինի առողջ և ուժեղ։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ։

Ուսուցչի զուգյին աշակերտների հետ և դասագրքի կարդալը՝ աշխատանքի մեթոդներ են, վորոնք կիրառվում են բոլոր թեմաների մշակման ժամանակ։

Ջրույց նկարների շուրջը։
Կազմել յերեխաների միջոցով ալբոմ „Առաջ և հիմա“։ Ալբոմների ցուցահանդես և լավագույն ալբոմների հանձնում ուրիշ դպրոցներին։

Թեմայի շուրջը զեղարվեստական գրականության վերաբերյալ հատվածների ընթերցում։

Տեղագիտական նյութի ուղղագործում։

Ս. Խ. Հ. Մ.-ի քարտեզի վրա ցույց տալ հաղորդակցության ճանապարհները (գետավոր թելերով)։ Կապ հաստատել ուրիշ ազգի դպրոցի յերկրորդ խմբերի հետ։

Պատրաստել մանկապարտեզի կամ մանկահրապարակի յերեխաների համար խաղալիքներ և կազմակերպել նրանց համար ցնծկուրթ։ Կազմել եքսկուրսիա դեպի Թանդարան (որտեղ կա Թանդարան) կամ նրա համապատասխան բաժինը։

Սուտգել, ինչպես են անցկացնում յերեխաները իրենց հանգիստը (տանը և դպրոցում). ուշադրություն դարձնել հանգիստը։

2. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ (10 ժամ)

Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ (այսքան տարի առաջ) խորհրդային յերկրի աշխատավորները հաղթանակ տարան ցարի, կապիտալիստների ու կալվածատերերի վրա։ Կոմունիստական կուսակցության ղեկավարության, Լենինի գլխավորության տակ, բանվորներն ու գյուղացիները չախչախեցին կապիտալիստներին ու կալվածատերերի իշխանությունը, պրավեցին ֆաբրիկաներն ու գործարանները, հողը և հիմնեցին իրենց իշխանությունը՝ դա խորհուրդների իշխանությունն է. խորհուրդների միջոցով նրանք սկսեցին կառավարել յերկիրը։

Պայքար հանուն խորհրդային իշխանության Աբխազիայում։ Բոլշևիկյան կազմակերպությունների պայքար մենշևիկների դեմ հանուն Աբխազիայի խորհրդային իշխանության։ Իշխանության գրավումը Սուխումում քաղաքում բոլշևիկների կողմից 1918 թվի փետրվարի 13-ին։ Չքավորության ապստամբությունը բոլշևիկների դեկավարությամբ 1918 թվի ապրիլի 6-ին։ Ապստամբության ճնշումը 1918 թվի սեպտեմբերին։ Հետագա պայքարը մենշևիկ իշխանության դեմ և 1921 թ. փետրվարի 18-ի հեղկոմը։

1921 թ. մարտի 4-ի դեպքերը Ն. Լակոբայի գլխավորությամբ խորհրդային իշխանության հաղթանակը Աբխազիայում։ Մարտի 4-ը՝ Աբխազիայի խորհրդայնացման որն է։ Պայքար հանուն խորհրդային իշխանության վրաստանում պրոլետարիատի ու աշխատավոր գյուղացիության հաղթանակը Վրաստանում, կուսակցության դեկավարության տակ 1921 թվի փետրվարին։

Փետրվարի 25-ը՝ Վրաստանի խորհրդայնացման որն է։

Աշխատավորության գաղափարական թշնամիները խանգարում են շինարարության։ Բոլոր ազգությունների աշխատավորները միացել են թշնամու դեմ ընդհանուր պայքար մղելու համար. այն թշնամու դեմ, որն ապրում է կամ ուզում է ապրել ի հաշիվ բանվորների ու գյուղացիների. կուլակների դեմ, ձկտաորդներին, հասարակական գույքի հափշտակիչների, սպեկուլյանտների, պրոդուլեիկների դեմ (արհեստների վրա, պայծառ փառաբով ցույց տալ ավյալ ռայոնի կյանքից, կամ ուրիշ հանրապետությունների ու շրջանների ազգությունների կյանքից)։

Բոլոր ազգությունների աշխատավորները բանվորների դեկավարության տակ ամենուրեք կառուցում են նոր կյանքը առանց կապիտալիստների ու կալվածատերերի՝ առանց պատկառելիների։ Շինարարության մեջ նրանց շահերը ընդհանուր են։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԶԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ։

Ուսուցչի դերը ու պատասխանատվությունը։ Պատմվածքների ու հիշողությունների ընթերցում։ Ջրույց նկարների շուրջը („Կրեմլի դրավումը, ձմեռային պալատի առումը“)։

Կարդալ ու բացատրել յերեխաներին լսողունները։ Սովորել վտանգավորները, վորտեղ նկարագրվում և հակառակների պայքարը։

Տեղագիտական նյութի մատնել աշխատանքի մեջ։

ՈՒՍՄԱՆ ՅԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ։

1. Ինչու պետք է իմանալ մեր անցյալը։ (2 ժամ)։

Յերկար ու համառ պայքար մղելով կալվածատերերի ու կապիտալիստների դեմ, բանվորներն ու գյուղացիները հաղթանակ տարան 1917 թվականի հոկտեմբերին։ Կալվա-

ծառերերն ու կապիտալիստները դաժանորեն հալածու
էին նրանց դեմ պայքարող բանվորներին ու գյուղացի
րին։ Այդ պայքարի մեջ առաջավոր, հեղափոխական բան
վորները միացան Վ. Ի. Լենինի գլխավորությամբ և կազ
մակերպեցին բոլշևիկների կուսակցությունը։

Միայն շնորհիվ բոլշևիկների ղեկավարության, կարող
ցան բանվորները ու գյուղացիները հաղթել կալվածատեր
րին ու կապիտալիստներին։ Ուսումնասիրելով անցյալ
մենք սովորում ենք հաղթահարել մեր թշնամիներին։

2. ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ (4 ժամ)։

Կար ժամանակ, յերբ գյուղացիներն ու բանվորնե
ամբացված էին իրենց կալվածատիրոջը և պարտավոր էի
նրա համար աշխատել (տալ կոռային աշխատանքի ու բ
զարի պահակներ, նկարագրել կյանքն ու աշխատանք
ճորտական ֆաբրիկայում)։ Կալվածատերը տիրում եր ճո
տերին, վորպես իրա սեփականությունը՝ պատժում եր, ո
նում եր ամեն ինչ նրանց հետ, ծախում եր ուրիշ կալվ
ծատիրոջ։ Պետությանն, յեկեղեցիներին ու վանքերին պատ
կանող գյուղացիների վիճակը վոչ պակաս ծանր եր, քա
կալվածատիրական գյուղացիներինը։ Առաջնակարգ ծան
եր վոչ ռուս ազգությանն աշխատավորի կյանքը, վորն
ճնշում էին կալվածատերերը, տերտերներն ու ցարակա
չինովնիկները (պաշտոնյա)։

Կնյազների (իշխան) ու ազնվականների իշխանությու
Աբխազիայում։ Ամբողջ յերկիրը բաժանված եր մի շա
իշխանական կալվածքների։ Կար ամբողջ Աբխազիային ի
խող կնյազ։ Սարկացած գյուղացիների երավագուրկ
ծանր կյանքը։

Կոռային գյուղացիների ու բեգառային գյուղացիներ
վիճակը։ Տերտերներն ու մոլլաները պաշտպանում են կր
յազների ու ազնվականության իշխանությունը իրենց կր
նական թունդով։ Վնասակար սովորությունների ու նախա
պաշտամունքների ամրացումը գյուղացիության մեջ։

Կնյազների ու ազնվականության մեջ տեղի ունեցո
անընդհատ թշնամանքը ավելի յեր խորացնում գյուղացիու
թյան առանց այդ էլ ծանր վիճակը (անասնության քա
քայումն, գյուղերի այրումն, անասունների թալան)։ Կնյա

ների ու ազնվականության կյանքի չքեղությունը ի հաշիվ գյուղացիների աշխատանքի։

Կալվածատերերին պետք եր ճորտատիրական իրավունքը։ Գյուղացիները աշխատում եյին նրանց համար, իսկ կալվածատերերը այդ պատճառով վարում եյին անգործ, դատարկ ու ցոփ կյանք, անց կացնելով իրանց ժամանակը խաղերի ու զվարճությունների մեջ։ Ճորտ բանվորների աշխատանքը ապահովում եր կապիտալիստին հարուստ կյանք (բերել պատկերներ՝ ճորտատիրական կալվածքի, ճորտական գյուղի, կալվածատերերի վայրենության որինակներ, ազգային շրջանների թալանի և այլն։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ։

Գրական—գեղարվեստական հատվածների ընթերցում։
1—2 փոքրիկ վոտանավորներ վերլուծել և անգիր անել։
Վերլուծել տեղագիտական այնպիսի նյութեր, վորոնք նկարագրում են ճորտ գյուղացիների կյանքն ու աշխատանքը։
Եքսկուրսիա դեպի տեղիս պատմա—հեղափոխական թանգարանը (յեթե այդպիսին կա)։ Եքսկուրսիա դեպի կալվածատիրոջ նախկին շենքերը։
Ուսուցչի պատմությունը և դասագրքի ընթերցում։

3. ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԿԱԼՎԱԾԱՏԵՐԵՐԻ ԴԵՄ (6 ժամ)։

Ցարական իշխանությունը ոգնում եր կալվածատերերին գյուղացիներին հնազանդ պահելու մեջ։ Ցարը ինքը առաջին կալվածատերն ու ճորտատերն եր։ Նրա տրամադրության տակ կային չինովնիկներ, ոֆիցերներ, զորք, վոստիկանություն, դատարաններ ու բանտեր։ Ցարին եյին ծառայում յեկեղեցիներն ու տերտերները։ Գյուղացիները միշտ պայքարում եյին կալվածատերերի դեմ, այրում եյին նրանց դուքը սպանում եյին նրանց, փախչում եյին անտառներն ու յերկրի հեռավոր ծայրամասերը։ յերբեմն գյուղացիները բացարձակապես ապստամբվում եյին կալվածատիրական իշխանության դեմ։

1810 թվին Աբխազիայի հանձնումը իշխող կնյազի կողմից ռուս ցարին, վորպես հավիտենական հպատակներ ու սորուկներ։ Աբխազական կնյազների ու ազնվականների

դաղինքը ռուս չինովնիկութեան հետ՝ միասին ստիպողներ ու շահագործելու աշխատավոր գյուղացիութեան Ցարական գեներալների ու իրանց տերերի բռնութիւններն ու թալանը։ Գյուղացիական ապստամբութիւններ Գադրիի կիրճերում, Բզիբյան Աբխազիայի հովիտներում, Ղազրում, Ցարալ, Դալ գյուղերում։ Ապստամբութիւնների դաժան ճնշումը։ Տաճկական մոլլաների ու վաճառականների պրովոկացիան խաբեբայութիւնը և աբխազների մասսայական փոխադրումը Տաճկաստան։ Աբխազների վերադարձը Տաճկաստան 1850—69 թվականներին։

Գյուղացիական ապստամբութիւններ Վրաստանում— 1844 թվին, Մինգրելիայում—1857 թվին։

Սանկան Ծագրնի ապստամբութիւնը։ Ամենամեծը Գուգաչևի ապստամբութիւնն եր 150 տարուց առաջ (տալ Գուգաչևյան ապստամբութեան պատկերներ և ապստամբութեան ճնշման դաժան պատկերներ)։ Բայց գյուղացիների յերկար ու համառ պայքարը հողազուրկ չէ բերել կալվածատերերը ամուր բռնել եյին իշխանութիւնը իրանց ձեռքին։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

„XVIII-րդ դարի գյուղացիական ապստամբութիւնները“ դիագրամների ցուցադրում։ Աշխարհագրական համր քարտեզի վրա գունավոր մատիտով նշանակել Գուգաչևի ապստամբության շրջանները։

Աբխազիայի քարտեզի վրա նշանակել Կոդորի, Բզիբի Աբխազիայի, Գադրայի կիրճերի ապստամբութիւնների տեղերը։

Անդրկովկասի քարտեզի վրա ցույց տալ Վրաստանի ապստամբության շրջանները։

Ճորտատիրական իրավունքի ժամանակ տեղի ունեցող պայքարի տեղագրական նյութեր բերել։

Ուսուցչի պատմութիւնը։ Դասագրքի ընթերցում։

4. ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ։ (4 ժամ)։

Գյուղացիների անընդհատ պայքարը կալվածատերերի դեմ, ճորտական աշխատանքի քիչ շահավետութիւնը՝ հարկադրեցին ցարական կառավարութիւնը վերացնելու 1861 թվին ճորտատիրական իրավունքը։

Դասում XIX-րդ դարի 40—50 թվականների գյուղատնտեսական ապստամբական շարժումների մասին „Լիակատար ազատութեամբ և ամբողջ հողով“ նշանաբանի տակ։ (Տես տեղական նյութ ապստամբութիւնների մասին)։ Ճորտատիրական իրավունքի վերացման ժամանակ գյուղացիները պետք է վճարեին յեռասնյան վճարումները։ Կալվածատերերը խլեցին գյուղացիներից լավագույն հողերը, իսկ նրանց ամենը քիչ և վատ վորակի հողեր։ Գյուղացիները չեյին կարողանում ոնվել իրանց հողից, վորովհետև յեկամուտների մեծ մասը տալիս եյին կառավարութեանը, իբրև հարկ կամ յեռասնյան վճարումներ։ Կալվածատերերը, ինչպես և ճորտատիրության ժամանակ՝ վարում եյին շռայլ ու պորտաբուծ կյանք։ Նրանք տալիս եյին իրանց հողերի մի մասը վարձով գյուղացիներին և ստիպում եյին գյուղացիներին աշխատել ինչպես ճորտատիրության ժամանակ, իրանց ոգտին։

Ցարական գեներալներից, արիստոկրական կնյազներից ու պրինցներից կազմված հատուկ հանձնաժողով Աբխազիայում „ազատագրական“ ռեֆորմը անցկացնելու համար։ Գյուղացիների ժողով Լըխնի գյուղում 1866 թվականի ամռանը։

Գյուղացիների ապստամբութիւն։ Սուխումի գրավումը։ Գյուղացիական ապստամբության ճնշումը։ 1870 թվի նոյեմբերի 8-ի նոր օրինքի հայտարարութիւն։ Օրենքի ու հատուկ „հրահանգի“ տրվելիք պայմանները։

Ուժից վեր յեռասնյութիւններ։ Ծանր տուրքեր։ Կալվածատերերի ոգտին պարտադիր աշխատելու հրաման։ Աղքատիկ հողաբաժիններ։ Պարտավորեցում գյուղացիներին՝ պահել յեկեղեցիներ, տերտերներ, մոլլաներ։

Ռեֆորմը վատացրեց գյուղացիների կյանքը։ Նոր ապստամբութիւններ 1877 թվին։ Ապստամբության ճնշումը 1878 թվին։ Աքսոր դեպի Տաճկաստան։ Ցարական չինովնիկների կողմից կազմակերպված տարատեսակ զազրելիությունների դեպի Աբխազիա։ Ազգային թշնամանքի քաղաքականութեան դեպի Աբխազիա։ Ապագին թշնամանքի քաղաքականութեան դեպի Աբխազիա։

Գյուղացիական ապստամբութիւններ Վրաստանում 1861 թվին, ռեֆորմից հետո։

Վորոշ ավելի հարուստ գյուղացիներ դառնում եյին կուլակ—ապրանքներ՝ հարստանալով ժողովրդական կարիքների

վրա։ Զբավորները քայքայվում էին ու սոխվածէին՝ թողնելով իրենց տնտեսությունները վախչել քաղաք, ուր վարձվում էին կապիտալիստների մոտ՝ աշխատանքի։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ։

Գլխաղբուսավարի դիտողությունները. 1) վորքա՞ն հող էին իլել կալվածատերերը գյուղացիներից և 2) գյուղացիության հողաբաժանման կարգը վորոշ գյուղերում։

Գեղարվեստական գրականության հատվածների ընթերցում։

Նկարների բացատրություն (քարտեր) „գյուղական ժողովում"։ Տեղագիտական նյութ (ցույց տալ, թե ինչպես անցավ հողաբաժանումը 1861 թվին)։

5. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՑԱՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՄԻՆՉԵՎ 1905 ԹՎԸ (10 ժամ)։

Կապիտալիստներին ձեռնտու չեր աշխատանքի համար վարձել սոված բանվորներ։ Նրանք վճարում էին բանվորներին քիչ աշխատավարձ, չերկարացնում էին աշխատավարձը, վերցնում էին տուգանքներ, ստիպում էին գնել ապրանքներ իրենց գործարանային խանութներում, և տալ նեղ ու կեղտոտ հանրակացարաններում (նկարագրել բանվորի կյանքն ու աշխատանքը Մորոզովի գործարանում)։ Առանձնապես ծանր եր բանվորների ու չերեխաների վիճակը։

Կապիտալիստները՝ ոգտվելով եժան բանվորական աշխատանքից, արագորեն ավելացնում էին իրենց հարստությունները, կառուցում էին գործարաններ, գնում էին մեքենաներ։ Բոլոր ֆաբրիկաներն ու գործարանները, հակառակ շենքերը պատկանում էին կապիտալիստներին։ Բանվորների աշխատանքի հաշվին կապիտալիստները թեթև ու շռայլ կյանք էին վարում։

Բանվորները պայքարում էին կապիտալիստների դեմ։ Նրանք կազմակերպում էին գործադուլներ ու ցույցեր։ Վոստիկաններն ու ժանդարմները դաժանորեն էին վարվում բանվորների և ստիպում էին հնազանդվել կապիտալիստներին (նկարագրել 1885 թվի Մորոզովյան գործադուլը,

Որեխովի պաշտպանությունը և 1902 թվի Ռոստովի գործադուլը)։

Բանվորական շարժումները Անդրկովկասում, բանվորների ծանր դրությունը Բաքվի, Թիֆլիսի, Բաթումի և այլ տեղերի ձեռնարկությունների մեջ։ Թիֆլիսի ծխախոտագործարանի մեծ գործադուլը 1894 թվին։ Անդրկովկասյան չերկաթգծի բանվորների մեծ գործադուլը 1898 թվին։ Չերկաթգծային արհեստանոցների բանվորության գործադուլները 1900 թվին։ Նավթահանքերի բանվորության մեծ գործադուլը 1903 թվին Բաքվում։ Թիֆլիսի, Ձիաթուրբիի մարգանցի հանքերի, Բաթումի, Փոթիի ձեռնարկությունների բանվորների գործադուլները և այլն։

Ազատամբությունների ճնշումն։

Կապիտալիստների և ցարական իշխանության դեմ հաջող պայքարելու համար բանվորներին անհրաժեշտ է ունենալ բանվոր դասակարգի կուսակցություն, վորը ընդգրկում է բանվորների առաջավոր և գիտակից շերտերը։

Կուսակցությունը անմիջապես չի կազմվել. նախ ծագել են բանվորական խմբակները, վորոնք 1898 թվին մի՛անալով կազմեցին բանվորական կուսակցություն։

Բանվոր դասակարգի կուսակցության ստեղծման վրա շատ և աշխատել Լենինը, ցարի իշխանության, կալվածատերերի ու կապիտալիստների դեմ պայքարելու համար։

Շատ առաջավոր բանվորներ ու բոլշևիկներ կորան՝ պայքարելով բանվոր—գյուղացու շահերի համար ցարական իշխանության, կալվածատերերի ու կապիտալիստների դեմ։ Ցարական վոստիկանությունը նստեցնում եր նրանց բանտերը, աքսորում եր հեռու և ուղարկում սաժանակիը աշխատանքի։

Առանձնապես ցարական իշխանությունը հալածում եր բոլշևիկ առաջնորդներին — Լենին, Ստալին, Ձերժինսկի, Կալինին, Սվերդլով, Մոլոտով, Փրունզե, Վորոշիլով, Ռուձուտակ, Որջոնիկիձե, Կագանովիչ, Պոսկրեբիշև և այլն։

Բայց բոլշևիկները համառորեն պայքարում էին բանվոր դասակարգի ու վոչ աշխատավորության ազատագրության համար։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ։

Սրճանոցներ աշխարհի մեջ վ. Ի. Լենինի ու Ի. Վ. Ստա-

վինի կենսագրության կարևոր կետերը։

„Գործարանների պատմության“ ժամանակ ուսումնասիրված տեղեկատուական նյութեր։

Կազմել դիագրամա հետևյալ թեմայով. „բնակարանային նորմաներ գործարանային ընտանիքի անդամի և բանվորի ընտանիքի անդամի համար (ուսումնասիրել գրքի կամ տեղական նյութը). նկարների և ուրիշ նյութերի միջոցով, որոնք բնորոշում են բանվորների դրությունը կապիտալիստական յերկրներում։ Կազմել հավաքված նյութերի ալբոմ։

Մշակել՝ Սբխապիայի և ուրիշ հանքագործությունների բնակարանային շինարարության բնորոշող նյութեր։

Սբխապիայի և ուրիշ հանքագործությունների բանվորական բնակարանների ու նորակառույցների լուսանկարները։ Եքսկուրսիա դեպի Քանդարանի պատմա—հեղափոխական թաղերը։

Հին բալշևիկների հիշողությունների ընթերցում կամ ուսուցչի պատմածը (Ն. Կ. Կրուպսկայա „հիշողություններ“). „Մոպրի“ պատանի բարեկամների կազմակերպություն։

6. 1905 ԹՎԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ (12 ժամ)։

Բանվորների դրությունը վատանում էր։ Բանվորական մասսաների դժգոհությունը աճում էր։ Բանվորական լայն մասսաները դեռ ծանոթ չէին պայքարի իսկական ուղիների հետ և հույս ունեին ոգնություն խնդրելու ցարից։ 1905 թվի հունվարի 9-ին Պետերբուրգի բանվորները իրենց կանանց ու յերեխաների հետ գնացին ցարի մոտ խնդրելու կյանքի պայմանների թեթևացում։

Սակայն ցարը հրամայեց զնդակահարել բանվորական հսկայական ամբոխին։ Այդ զնդակահարությունը մեծ վրդովմունք առաջացրեց նույնիսկ անպիտակից բանվորների միջև։ Բարձրացավ գործադուլների ու դյուղացիական ապստամբությունների ալիքը։

Ցարական կառավարությունը, ոգտագործելով աշխատավորության մի վորոշ մասի հետամնացությունն ու խավարը, լարում է մի ազգը մյուսի դեմ (թաթարներին հայերի դեմ, ռուսներին հրեաների դեմ). Չարդեր և կազմակերպում (նկարագրել Չարդի պատկերը)։

Ցարական կառավարությունը բայց և թողնում գործեր հեղափոխության ճնշման համար։ Ամենադիտակից զինվորներն ու նավատորները ապստամբության են բարձրացնում („Պոտյոմկին“ զրահանավի ապստամբությունը)։ Գործի մեծամասնությունը գանվում եր ցարի կողմը իրա անպիտակության շնորհիվ։

Հեղափոխական շարժումներ Անդրկովկասում ու Վրաստանում։ Բագվի նավթահանքի բանվորների գործադուլը 1904 թվի դեկտեմբերին։ Ցույցեր Բաթումում։ Գործադուլների ալիքը 1905 թվի հունվարին։

Բիվլիսի գործադուլները 1905 թ. հունիսին։ Ցարական կառավարության դաժան հալածանքները։ Հոկտեմբերյան գործադուլը Բիվլիսում։ Գործադուլներ Բագվում, Բաթումում, Ռոստովում, Յերևանում, և ուրիշ քաղաքներում։

1905 թ. հոկտեմբերին բանվորները հայտարարեցին ընդհանուր գործադուլ (նկարագրել ընդհանուր գործադուլը)։ գյուղերում ապստամբվում էին գյուղացիք կալվածատերերի դեմ։

1905 թվի գյուղացիական հուզումները Գուբրիայում։ Գյուղացիների ապստամբությունը Մինսկի նահանգում։

1905 թվի հեղափոխական շարժումը Սբխապիայում։ Գադրիի և Կոզլովի տախտակագործարանների բանվորների գործադուլը։ Սուխում քաղաքի բանվորների ու չքավորության մեծ գործադուլը 1905 թվին։

Գյուղացիական ապստամբություններ Թուգաուսի, Կոզլովի ու Սուխումի շրջաններում։ Դոխլ Կելասուրի գեմ վրա։ Ապստամբության ճնշում։ Բալշևիկ—առաջնորդների ձերբակալությունը։

Բանվորները ստեղծեցին բանվորական պատգամավորների խորհուրդներ։ Բալշևիկները կոչ էին անում գինված ուժով տապալել ցարական իշխանությունը։ 1905 թվի դեկտեմբերին Մոսկվայում կազմակերպվեց գինված ապստամբություն (նկարագրել բարրիկադային կռիվները Պրեսնյայում). կառավարությունը Պետերբուրգից Մոսկվա ուղարկեց իրա ամենահավատարիմ գորքերն ու ճնշեց ապստամբությունը (նկարագրել գաղտնալին հալածանքները ապստամբների հանդեպ)։ Գինված ապստամբությունները ճնշվեցին Բալտյան մյուս շրջաններում նույնպես ճնշվեցին։

Դարձյալ միայն կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը։

1905 թվի հեղափոխությունը պարտվեց, վորովհետև գյուղացիները ու զինվորները իրենց շարժումները չէին համաձայնեցնում բանվորի հետ, իսկ կառավարությունը զոռ-զոռ ճնշում էր բանվորներին, գորքին ու գյուղացիներին։ 1905 թվի հեղափոխությունը սովորեցրեց, որ միայն աշխատավոր գյուղացիական մասսաների ու գորքի միացյալ ֆրոնտը բանվոր դասակարգի գլխավորությամբ ու բոլշևիկների կուսակցության ղեկավարության տակ կարող է հաղթանակել ցարական ինքնակալությունը։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ։

Նկարների դիտում (կամ բացիկների), վորոնք տալիս են պատկերները 1905 թվի հեղափոխական պայքարի (հունվարի 9-ը) „Պատյոմկին“ զրահանավի ապստամբությունը, բարբիկադային կռիվները Մոսկվայում և այլն։

Ցուցադրել կինո-նկար։ Կարդալ զրական—զեղարվեստական հատվածներ ու հիշողություններ։

1905 թվի հեղափոխական պայքարին մասնակցողների զրույց յերեխաների հետ։

Եքսկուրսիա զեպի Թանգարանի պատմա-հեղափոխական բաժինը։

Ինացնելիրովկա և ներկայացում։

Ոգտագործել տեղագիտական նյութեր։

7. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ (12 ժամ).

1914 թվին՝ պատերազմի յերկրների կապիտալիստներից կազմակերպված իմպերիալիստական պատերազմի ժամանակ, բանվորները ապստամբեցին ու հեղափոխությանը միացած՝ զինվորների ու նավաստիների աջակցությամբ 1917 թվի վեցերվարին տապալեցին ցարի իշխանությունը։

„Կազմակերպվեց ժամանակավոր կառավարություն՝ կազմված կալվածատերերից ու կապիտալիստներից։ Բանվորներն ու գյուղացիները կազմակերպեցին բանվորական, բատրակային, գյուղացիական ու զինվորական պատգամավորների խորհուրդներ։

Բուրժուազիայի ժամանակավոր կառավարությանը կողք առ կողք ամրանում եր զեռևս թույլ, սաղմնային, բայց աղքող ու աճող ուրիշ կառավարություն՝ բանվորների ու զինվորների պատգամավորների խորհուրդը“ (Լենին)։

Բոլշևիկները Լենինի ղեկավարությամբ կոչ էին անում աշխատավորներին, իշխանությունը հանձնել խորհուրդներին վերջացնել պատերազմը ու կնքել խաղաղություն. հողերը, գործարանները ու ֆաբրիկանները հանձնել աշխատավորներին։ Բուրժուազիան դաժան սերբոր է հայտարարում հեղափոխական բանվորներին և առաջին հերթին բոլշևիկներին։ Լենինը ստիպված եր ղիմելու ընդհատակյա աշխատանքի (պատմել Լենինի կյանքի մասին հյուղում)։

Լենինը սերտ կապ եր պահպանում կուսակցության կենտրոնական կոմիտեի հետ և ղեկավարում եր իշխանության զինված զրավման նախապատրաստությունները։ Ա-ճում է բոլշևիկների ու բոլշևիկյան լոզունգների ազդեցությունը։ Զորքն ու գյուղացիությունը մասսաներով անցնում են բոլշևիկների կողմը։ Ապստամբում են ճնշված ազգերը։

1917 թվի հոկտեմբերի 25-ին (նոր տոմարով նոյեմբերի, 7-ին) բոլշևիկյան կուսակցության ղեկավարության տակ կատարվեց զինված ապստամբություն (տալ Պետրոգրադի հոկտեմբերյան կռիվների պատկերը, „Ավրորա“ հածանավը, Ձմեռային պալատի առումը, հոկտեմբերյան որերը Մոսկվայում)։ Ռուսաստանում վոչնչացավ կապիտալիստների իշխանությունը։ Ռուսաստանը հայտարարվեց Սորհրդային Սոցիալիստական Հանրապետություն։ Հանրապետության գլուխն անցավ ժողովրդական կոմիսարների խորհուրդը։

Վ. Ի. Լենինը նրա նախագահն եր։ Առաջին անգամ վողջ աշխարհում բանվոր դասակարգը սկսեց կառավարել պետությունը։ Սորհրդային կառավարության առաջին դեկրետներն եյին. հաշտության դեկրետը, հողի հանձնումը աշխատավորությանը առանց յեթ—գնման վերկանքի, բանկերի, յերկաթուղագծերի, ֆաբրիկաների ու գործարանների հարատարումը պետական սեփականություն։

Վրաստանի խորհրդայնացումը։ Փետրվարյան հեղափոխության ժամանակ իշխանության անցնումը բուժուական „հատուկ Անդրկովկասյան կոմիտե“-յի ձեռքը։ Բանվորական ու զինվորական պատգամավորների խորհուրդներ։ Նրանց դեկավարությունը մենշևիկների ու եսերների ձեռքին։ Մենշևիկները ծառայում են բուժուազիային։ Բոլշևիկների կովկասյան կոմիտեն ու նրա դերը 1917 թվի հոկտեմբերի 1-ի Բաքվի ու Թիֆլիսի գործադուլների կազ-

մակերպման ու ղեկավարության մեջ։ Անդրկովկասյան կոմիտեն մենշևիկյան իշխանության օրոք։

Ժողովրդային իշխանությունը Բաքվում 1917 թվի նոյեմբերի 2-ին։ Մենշևիկյան կառավարության համաձայնությունը անպիտանների հետ և Բաքվի կոմմունայի անկումը։ Բոլշևիկյան կազմակերպությունների ընդհատակյա նախապատրաստական աշխատանքը։ 1918 թվի վերջաննեն, հարավ-Ռոսթիայի ու Աչխադիայի գյուղացիական ապստամբությունները։

